Ելնելով այն փաստից, որ քաղաքականությունն կառավարումը մարդկային կենսագործունեության առանձնահատուկ ոլորտ է, իսկ իշխանությունը խիստ կարգավորված համակարգ, հարկավոր է տարանջատել քաղաքականության առաջնային և երկրորդային դերակատարներին, ինչպես նաև քաղաքական էլիտայի կառուցվածքային մասերը: Ըստ իշխանության դերային տեսության պետական իշխանությունը կրողը, իշխանական հարաբերություններին սուբյեկտն ու քաղաքականության առաջնային դերակատարը քաղաքական էլիտան է: Քաղաքական էլիտայի կառուցվածքը նույնը չէ տարբեր երկրներում: Օսլոյի համալսարանի պրոֆեսոր Ա.Ստինը, օրինակ՝ Ռուսաստանի քաղաքական էլիտայի երեք կառուցվածքային մասեր է առանձնացնում՝ միջուկ (core elite), ազգային (քաղաքական և կառավարչական մասերը) և ռեզիդենտալ (տեղական մակարդակի լիդերներ)³⁴: Իրանական քաղաքական էլիտայի ուսումնասիրություններով զբաղվող Բուքտան (Buchta) քաղաքական էլիտայի կառուցվածքում առանձնացնում է երեք այլ հատված՝ ռազմավարական որոշումներ կայացնողներին (հոգևորականների քարձր դաս), վարչական հատվածը (որը մասնակցում և ազդեցություն է ունենում որոշումների ընդունման վրա) և քաղաքական խոսույթի վրա ազդողներին³⁵: Թվարկված երկրների օրինակներում

³³ Տե՛ս **Крыштановская О.** Анатомия российской элиты, Москва, 2005, էջ 34-35:

³⁴ Տե՛ս **Steen A.** Աշվ.աշխ., էջ 25-37:

³⁵ Տե՛ս **Buchta W.** Who Rules Iran?: The Structure of Power in the Islamic Republic, by The Washington Institute for Near East Policy and the Konrad Adenauer Stiftung, Washington DC, 2000, էջ 52-54:

քաղաքական էլիտայի սահմանման հիմքում ընկած է արժեքային-գործառույթային սկզբունքը, որը քաղաքական էլիտայի հետազոտության կառուցվածքագործառույթային հայեցակարգային մոտեցման մեջ է կիրառվում: Կառուցվածքագործառույթային մոտեցման արևմտյան տեսաբաններ Ս.Յանթիգտոնը, Ս.Կելլերը, Ֆ.Յանթերը, Կ.Մանհեյմը, Յ.Լասսուելը, Ջ.Յիգլին և ուրիշներ կարևորել են թե քաղաքական էլիտայի որակական հատկանիշների, այլ գործառույթների ուսումնասիրությունը: Ինչպես ռուս տեսաբան Ս.Վ.Մակենն է նշել, \$ ունկցինալիստները հասարակության և պետության զարգացման համար արժևորում են քաղաքական էլիտայի գործառույթները, իսկ հասարակական բարեկեցությունն ու կառավարման արդյունավետությունը համարում սոցիալական մեծ արժեք³⁶: Ամերիկացի հասարակագետ, քաղաքագետ Ս.Յանթիգտոնի համոզմամբ էլ, կառավարման գործառույթներ իրականացնելու համար քաղաքական էլիտան պետք է պաշտոնավարի կամ ներկայացված լինի իշխանական հիերարխիայում³⁷: Նույն պնդումն է առաջ քաշել, նաև ամերիկացի սոցիոլոգ Ս.Կելլերը, ով վերլուծել է իշխանական էլիտայի գործառույթները և ամենևին չի անդրադարձել այդ գործառույթների իրականացման արդյունավետության խնդրին³⁸: Ժամանակակից քաղաքագիտության հիմնադիրներից Յ.Լասսուելի կարծիքով քաղաքական էլիտան հասարակության ազդեցիկ ինստիտուտներում ներկայացված մարդիկ են, որոնք ձգտում են բարիքի հասնել օգտագործելով իրենց ռեսուրսները³⁹: Այսպիսով,

³⁶ Տե՛ս **Макеев С.В.** Концепции технократизма: историко-философский анализ, Монография, Изд.-во МГОУ, Москва, 2008, էջ 171:

³⁷ Տե՛ս **Huntington S.** Political Order in Changing Societies, Yale University Press, New Haven and London, 1973, էջ 7-9:

³⁸ Տե՛ս **Keller S.** Beyond the Ruling Class: Strategic Elites in Modern Society, by Routledge, London and New York, 1991, էջ 4:

³⁹ Տե՛ս **Lasswell H.D.** Politics: Who Gets What, When, How, Literary Licensing LLC, New York, 2011, էջ 305:

կառուցվածքագործառույթային մոտեցմամբ ժողովրդավարութունը կառավարման այն համակարգն է, որում ժողովրդաիշխանութունն իրականացնում է քաղաքական էլիտան՝ ելնելով արդյունավետ գործելու հմտութուններից, փորձից, քաղաքականության և կառավարման գործառույթների իրականացնելու իրավասութուններից: Բայց այս սահմանումից ուղղակիորեն չի բխում, որ քաղաքական էլիտայի մեջ մտնում են միայն քաղաքական ղեկավարներն ու խորհրդարանը: Ամերիկացի հեղինակ Ս.Էլդերսֆելդը քաղաքական էլիտա է անվանում ոչ միայն իշխանությանը մասկազմող լիդերներին, այլ նաև քաղաքական տարբեր շրջանակներում ազդեցություն ունեցող մարդկանց (օրինակ՝ քաղաքական կուսակցությունների, տեղական և շրջանային կառավարման ղեկավարներին)⁴⁰:

Տեսութայան մեջ քաղաքականության առաջնային և երկրորդային դերակատարների միջև հարաբերութություններն ու փոխազդեցության ձևերը որոշում են դրանց միջև ինտեգրման աստիճանով, սակայն իշխանության և կառավարման բնույթը (կարող է լինել արիստոկրատական, դեմոկրատական, մերիտոկրատական, տեխնոկրատական) պայմանավորված է **քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացով**: Քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը իշխանության բնույթն ու կառավարման արդյունավետութունը պայմանավորող գործոնի դերում կարևորել են Մ.Յարթմանը, Բ.Գարասիմը⁴¹: Բ.Գարասիմը տվել է հավաքագրման հետևյալ սահմանումը. *«...Անձնական հատկանիշների և մասնագիտական հմտութունների սկզբունքով քաղաքական բարձր*

⁴⁰ Տե՛ս **Элдерсфелд С.** Политические элиты в современных обществах. Эмпирические исследования и демократия. ИНИОН, М., 1992, էջ 3:

⁴¹ Տե՛ս **Hartmann M., Routledge T., Group F.** The Sociology of Elites, by Routledge, London and New York, 2007, էջ 45; **Harasimiv B.** Political Elite Recruitment in the Soviet Union, MacMillan Press, London, 1984:

պաշտոններում նշանակման կամ ընտրության գործընթաց»⁴²:

Հավաքագրման գործընթացով քաղաքական էլիտայի սահմանումներ կարելի է հանդիպել ինստիտուցիոնալ մոտեցման շրջանակներում, իսկ վերջինը զարգացել է կառուցվածքագործառույթային ուղղությամբ: Ամերիկացի հետազոտողներ Թ.Դայնսը և Յ.Ջիգլերը նշել են, որ քաղաքական էլիտան ընդհանուր անցյալ և աշխարհայացք ունեցող մարդիկ են: Ինչպես ցույց է տվել ուսումնասիրությունը, «սոցիալական» ինստիտուտներում (դրանց թվում են ֆինանսներ, կրթություն, իրավական համակարգ և այլն) ազդեցություն ունենալու և սերնդափոխության շնորհիվ քաղաքական էլիտան տարբերվում է հասարակության մյուս խմբերից⁴³: Ամուր ինստիտուցիոնալ հիմքեր ունեցող քաղաքական էլիտան, այս մոտեցմամբ, չի կարող արդյունավետ չլինել:

Ծարուսակելով խնդրի քննարկումը, նշենք, որ արդի անթրոպոլոգիական, որակական հետազոտություններում առաջարկվում է քաղաքական էլիտայի հավաքագրման խնդիրը ուսումնասիրելու մեթոդաբանական կուռ հենք: Հետազոտողներ Ջ.Աբբինքը, Թ.Սալվերդան նշում են, որ հավաքագրման գործընթացին են վերաբերում քաղաքական էլիտայի ձևավորումը, կառուցվածքային վերլուծությունը, նոր անդամներով համալրվելու ընթացակարգերի և սկզբունքների ուսումնասիրությունը⁴⁴: Ռուս հետազոտող Ե.Գ.Միխայլովան քաղաքական էլիտայի հավաքագրումը կապել է քաղաքական և պետական

⁴² Տե՛ս **Harasimiw B.** նշված խ.էջ 2:

⁴³ Տե՛ս **Дай Т., Зиглер Х.** Демократия для элиты. Введение в американскую политику, Москва, 1984, էջ 65:

⁴⁴ Տե՛ս **Abbink J., Salverda T.** The Anthropology of Elites: Power, Culture and Distinction, Palgrave MacMillan, New York, 2013, էջ 9-11:

կառավարման համակարգի, իշխանակարգ ու թյան տեղերը գրադեցնելու գործընթացի ուսումնասիրություն հետ⁴⁵: Նման մոտեցումը հեղինակը վերցրել է արևմտյան երկրների զարգացած պրակտիկայից, որտեղ 1980-ական թվականներից սկսած պետական կառավարման ոլորտի բարեփոխումների համատեքստում քաղաքական էլիտայի սահմանման չափանիշները փոխվել են: Վերոնշյալ երկրներում լայն տարածում ստացած պետական կառավարման և քաղաքականության «արժանիքային» մոտեցման համաձայն քաղաքական էլիտան ձևավորվում է հավաքագրման մեխանիզմի նոր տրամաբանությամբ՝ որակական հատկանիշներով, քաղաքական ու պետական ինստիտուտներից և արդյունավետության սկզբունքով: Քաղաքական էլիտան, ըստ այս մոտեցման, մերիտոկրատական սկզբունքով հավաքագրվող, քաղաքական և պետական կառավարման ինստիտուտներում գործող մարդիկ են, որոնք քաղաքական և կառավարման գործընթացներին անընդհատ ինտեգրված լինելու շնորհիվ ապահովում են քաղաքական և պետական կառավարման համակարգի բնականոն գործունեությունը և արդյունավետությունը (բարեկեցություն, արդիականացում և զարգացում):

Քաղաքական էլիտայի «հավաքագրում» եզրույթն ունի բազմաթիվ ճյուղային հասկացություններ, որոնց մեջ կենտրոնական տեղ են գրադեցնում «**հավաքագրման ուղին**», «**քաղաքական հավաքագրումը**», «**հավաքագրման համակարգը**», «**հավաքագրման ավագանը**»: Քաղաքագետ Մ.Մարգարյանի հետազոտություններում սահմանվել է, որ «**հավաքագրման ուղին**» են կոչվում քաղաքական պաշտոնակարգ ու թյան գագաթ տանող ճանապարհները, որոնք սահմանվում են որոշումների ընդունման

⁴⁵ Տե՛ս Михайлева Е.Г. Интеллектуальная элита в матрице современных цивилизационных изменений, Монография, Нар. Укр. Акад. -X, Изд.-во НУА, Харьков, 2007, էջ 211:

գործընթացի վրա ազդեցություն ինստիտուցիոնալացման աստիճանով⁴⁶: Ելնելով այդ սահմանումից, հավաքագրման ուղիներ կարող են լինել բանակը, կրթական հաստատությունները, բիզնեսը: Կարևորելով քաղաքական էլիտայի՝ պետական կառավարման գլխավոր սուբյեկտի և արդյունավետ կառավարման երաշխավորի պատասխանատու դերը, ինչպես նաև քաղաքականության գիտկներին՝ որպես քաղաքականության մասնագիտորեն զբաղվող սոցիալ-մասնագիտական խումբ ձևավորելու անհրաժեշտությունը (այդ թվում ԶԶ-ում) արդի հետազոտություններում կարևորվում են **քաղաքական հավաքագրման** ընթացակարգերն ու սկզբունքները⁴⁷: Վերջինն իրենից ներկայացնում է քաղաքական էլիտայի հավաքագրման կադրային բաղադրիչի և էլիտայի անդամների որակական հատկանիշների վերլուծությունը: Քաղաքական էլիտայի կադրային բաղադրիչն ուսումնասիրելու անհրաժեշտությունը իրենց աշխատանքներում կարևորել են Ք.Էյբբաումը, Թ.Վերնհեյնը, Լ.Ս.Վեչերը: Վելլինգտոնի համալսարանի պրոֆեսոր Ք.Էյբբաումը նշել է, որ կադրային քաղաքականությունը որոշում է քաղաքական էլիտայի արդյունավետությունը պետական և քաղաքական գործունեության ոլորտներում⁴⁸: Կադրային քաղաքականության տեսաբան Թ.Վերնհեյնը ընդգծել է կադրային քաղաքականության իրականացման սկզբունքներին, չափանիշներին և ընթացակարգերին

⁴⁶ Տե՛ս **Մարգարյան Մ.** Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Պետական ծառայություն», Երևան, 2006, էջ 58:

⁴⁷ Տե՛ս **Villarreal H.** Political Recruitment Theory on Cabinet Appointments, National Autonomous University of Mexico, Mexico, էջ 1-13 https://www.academia.edu/13824115/Political_Recruitment_Theory_on_Cabinet_Appointments; **Devrimsel D. N.** Long for Normality: A Study on German Parliamentarians with Migration Backgrounds, by Springer VS, Berlin, 2014, էջ 39-43; **Armstrong R. P., Claggett W.** Recruitment and Political Participation, Political Research Quarterly, (December 2001), Vol.54, No 4, էջ 905-916; **Murray R.** What Makes a Good Politician? Reassessing the Criteria Used for Political Recruitment, ECPR joint sessions, Salamanca, 10-15 April 2014, էջ 1-20:

⁴⁸ Տե՛ս **Eichbaum Ch., Shaw R.** Partisan Appointees and Public Servants: An International Analysis of the Role of the Political Adviser, /ed by Ch. Eichbaum and R. Shaw/, by Edward Elgar Publishing Limited, UK, 2010, էջ 69:

ուսումնասիրությունը կարևորությունը քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացում⁴⁹: Ելնելով վերոնշյալից կարող ենք նշել, որ քաղաքական էլիտայի կադրային բաղադրիչն այն մեխանիզմն է, որով հավաքագրվում է քաղաքական էլիտան: Ռուս հեղինակ Ն.Վ.Ռաբոտյաժևան նույնացնում է «հավաքագրման մեխանիզմ» և «հավաքագրման համակարգ» հասկացությունները՝ նշելով, որ բովանդակային առումով դրանք կարող են ներառել ընտրական օրենսդրության, միջէլիտային ու ներէլիտային փոխհարաբերությունները⁵⁰: Ռուս պրոֆեսոր Օ.Գաման-Գոլուտվինան իր աշխատանքներում կիրառել է նաև **«հավաքագրման ավագան»** հասկացությունը: Այն իր բնույթով կարող է լինել հոմոգեն և հետերոգեն՝ պայմանավորելով հավաքագրման մեխանիզմի էվոլյուցիոն զարգացումը⁵¹: Եվ այսպես, ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կայուն քաղաքական համակարգերում քաղաքական էլիտայի կադրային ավագանը՝ որպես կադրային դարբնոց ձևավորվում է բարձր ներուժ ունեցող մարդկանցից, որոնք կարող են և պատրաստ են ստանձնել ու պետության ու հասարակության կառավարման համակարգում առանցքային նշանակություն ունեցող տեղերն ու պաշտոնները, կատարել վերջիններից բխող գործառնական ներդրումները:

Նկատի առնելով վերոնշյալը կարող ենք հավելել, որ քաղաքական էլիտայի հավաքագրման և իշխանության հասնելու խմբային ու անհատական արժանիքները, որակական և ընթացակարգային

⁴⁹ Տե՛ս **Верхейн Т.** Политико-административные отношения: кто стоит у власти? /под ред. Тони Верхейна/, Изд. «Права человека», Москва, 2011, էջ 14-17:

⁵⁰ Տե՛ս **Работяжев Н.В.** Механизмы рекрутирования и воспроизводства политической элиты в посткоммунистической России, էջ 18-43 (<http://ecsocman.hse.ru/data/673/685/1219/003Rabotyazhev.pdf>):

⁵¹ Տե՛ս **Гаман-Голутвина О.В.** Политика как управление, управление как политика: Рекрутирование лидеров и элит в современном мире, «Полития», Тюмень, 6 июня, 2017, No 3 (86), էջ 159 [http://politeia.ru/files/articles/rus/Politeia-2017-3\(86\)-154-180.pdf](http://politeia.ru/files/articles/rus/Politeia-2017-3(86)-154-180.pdf):

սկզբունքները ուսումնասիրել է նաև **առաջնորդություն** **թյան տեսությունը**: Նոր պատմություն նորագույն շրջանում քաղաքական էլիտայի կառավարման հիմքում եղել է հասարակական-քաղաքական գործընթացների առաջնորդությունը: Հեղինակություն, ազդեցություն ունեցող և նույն գաղափարախոսությունը կամ տեսլականի շուրջ միավորված մարդկանց խումբը կոչվել է քաղաքական էլիտա⁵²: Ուսումնասիրությունը այդուհանդերձ ցույց է տվել, որ արդի առաջնորդության տեսությունում արժևորվել է շահերի վերլուծությունը, ներխմբային մրցակցությունը՝ արժանիքների, գիտելիքների և հմտությունների սկզբունքներով: Շահերի վերլուծությունը կարևորել է Փ.Բախրախը՝ նշելով, որ քաղաքական էլիտան տարբեր շահերի հավաքատեղի է և ձևավորվում է հիմնականում շահի սկզբունքով⁵³: Քաղաքական առաջնորդության արդի հետազոտություններում ուսումնասիրության առարկա է հանդիսանում հատկապես ներխմբային մրցակցությունը: Տեսությունների հետազոտությունից պարզ է դառնում, որ եթե քաղաքական առաջնորդության վաղ հայեցակարգերը քննել են էլիտայի և հասարակության փոխհարաբերման ու մեթոդական կազմակերպման խնդիրները, ապա արդի պայմաններում առաջնորդությունը նոր թափ է հավաքում քաղաքական էլիտայի ներսում: Խնդրին առնչվող բրիտանական ուսումնասիրություններից մեկում նշվում է, որ կառավարչական կառույցներում առաջնորդությունն ու մրցակցային սկզբունքների ուժեղացումը անհամեմատ արձրացրել է վարչական ինստիտուտների դերը քաղաքական էլիտայի

⁵² Տե՛ս **Вергилес Э.В.** Теория лидерства, Моск. госуд. ун.-т экономики, статистики и информатики, Москва, 2001, էջ 5:

⁵³ Տե՛ս **Bachrach P.** նշվ. աշխ., էջ 23:

հավաքագրման գործընթացում, հատկապես պետական հատվածում⁵⁴: Ինչպես տեսնում ենք, քաղաքական էլիտայի սահմանման արդիական մոտեցումը դարձել է հավաքագրման գործընթացի ուսումնասիրությանը, որը կարող է արդյունավետ կառավարման հիմքեր ստեղծել:

Այսպիսով, սույն ենթագլխում «քաղաքական էլիտա» հասկացությունը սահմանելիս քննվել են արժեքային և իշխանական մոտեցումները: Քաղաքական էլիտայի օբյեկտիվ հետազոտության առումով արժեքային մոտեցումն այնքան էլ նպատակահարմար չէ, որովհետև այդ դեպքում քաղաքական էլիտան լայն է սահմանվում: Իշխանական մոտեցմամբ քաղաքական էլիտա են նրանք, ովքեր «վերևում» են: Ինչ վերաբերում է «քաղաքական էլիտա» հասկացության սահմանման արդի քաղաքագիտական մոտեցումներին, ապա մեր կողմից վերհանվել են դրանց առավել ություններն ու թերությունները: Եթե քաղաքական էլիտան որոշումների կայացման չափանիշով է սահմանվում ենթադրվում է, որ այն բաղկացած է կրթված, ազգային արժեքներ և շահեր ունեցող մարդկանցից, որոնք նախաձեռնում և ընդունում են պետության համար կարևոր որոշումներ: Յասարակ հետազոտողի համար, այնուամենայնիվ, դժվար է որոշել, թե կոնկրետ ովքեր են այդ մարդիկ՝ տեղեկատվության հասանելի չլինելու պատճառով: Ազդեցիկ մարդկանց խումբ լինելու չափանիշով քաղաքական էլիտա է կոչվում սոցիալ-մասնագիտական տարբեր կառույցներում ներգրավված, տնտեսական, սոցիալական բարձր կարգավիճակ ու կապեր ունեցող մարդիկ: Այդ չափանիշով սահմանումը, որպես կանոն, հենվում է սուբյեկտիվ գնահատականների վրա և կարող է

⁵⁴ Տե՛ս **John P., Gains F.** Political Leadership Under the New Political Management Structures, Office of the Deputy Prime Minister, London, 2005, էջ 13-14 <https://www.escholar.manchester.ac.uk/api/datastream?publicationPid=uk-ac-man-scw:5b434&datastreamId=FULL-TEXT.PDF>:

օբյեկտիվ չլինել: Յաշվի առնելով վերոնշյալ երկու մոտեցումների թույլ կողմերը, օպտիմալ ենք համարում քաղաքական էլիտայի կառուցվածքագործառութային մոտեցումը: Թեև այս մոտեցումը ֆորմալ բնույթ ունի և կարող է անհիմն բարձրացնել նրանց, ովքեր նոմինալ դիրք ունեն էլիտայում, այդուհանդերձ, դրա ընտրութայամբ կարևորվել է «էլիտար դիրքից» բխող գործառույթներ իրականացնելու և քաղաքականութայամբ մասնագիտորեն զբաղվելու, բանիմաց մարդկանց ընտրելու չափանիշը: Յիշյալ չափանիշը կարևորվել է նաև «քաղաքական էլիտայի հավաքագրում» հասկացութայունը սահմանելիս, որովհետև այդ գործընթացը կարող է պայմանավորել քաղաքական էլիտայի սահմանումը:

Յաշվի առնելով քաղաքական էլիտայի տեսական սահմանումները քաղաքական էլիտան սույն ուսումնասիրութայան շրջանակներում սահմանվել է որպես պետութայան արդյունավետ գործառութայան համար պատասխանատու սուբյեկտ, որի հավաքագրումը պետք է լինի նպատակային, իսկ հավաքագրման հիմքում գերակայեն արժանիքային սկզբունքները:

Ամփոփելով նշենք, որ գոյութայուն ունեն քաղաքական էլիտայի հավաքագրման կարևորութայունը ներկայացնող հետևյալ հիմնադրութայինները.

- քաղաքականութայունը՝ որպես մարդկային կենսագործունեութայան պատասխանատու, մտավոր և հոգեբանական ծանր աշխատանքի ոլորտ դարձնելու առաջնահերթութայունը,
- քաղաքական պաշտոնների շրջանութայան և հանրային վերահսկման անհրաժեշտութայունը՝ քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի և

ս եր ն դ ա փ ո խ ու թ յ ա ն
ապահովելու համար ,

կայ ու ն ու թ յ ու ն ն

- քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի և պետական (հանրային) կառավարման արդյունավետության միջև ուղղակի կապի առկայությունը :

Քաղաքական էլիտայի մասին տեսություններում և հայեցակարգերում հավաքագրման գործընթացի ուսումնասիրությունը շարունակում է կարևորվել : Ավելին , այդ գործընթացի արդիականացումը լուրջ հիմքեր կստեղծի քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի կայացմանը , կայունացմանը , իսկ վերջնարդյունքում՝ ինստիտուցիոնալացմանն ընդհանրապես , և միայն այդ ժամանակ հնարավոր կլինի խոսել ձևավորված ու արդյունավետ քաղաքական էլիտայի մասին :

Ուսումնասիրելով քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը հանգել ենք հետևյալ եզրահանգման , ըստորի .

- Քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի ուսումնասիրությունը արդի քաղաքագիտության անկյունաքարային խնդիրներին ցմեկն է (այդ թվում նաև ՀՀ-ում) : Այդ են փաստում քաղաքական էլիտայի հավաքագրման հասկացությունն ապարատում գործածվող բազմաթիվ հասկացությունները , որոնց մի մասը դեռևս սահմանված չէ հայաստանյան քաղաքագիտական դասագրքերում , օրինակ՝ հավաքագրման մեխանիզմ , հավաքագրման ավագան , արժանիքային համակարգ :
- Քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի ուսումնասիրությունն առանցքում են ստորակարգ ու թ յ ա ն (հիերարխիա) գագաթ տանող

ուղիները, սկզբունքները և ընթացակարգերը, այդ գործընթացի վրա ազդող գործոնները:

- Քաղաքական էլիտայի որակական փոփոխություն կարող է լինել հավաքագրման մեխանիզմի շրջանակներում իրականացվող կադրային քաղաքականության միջոցով:
- Քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի ազդեցությունը պետական կառավարման արդյունավետության վրա և գործընթացների ցուցիչ (ինդիկատոր) հանդիսանալը:

Քաղաքական էլիտայի սահմանման ու հավաքագրման շուրջ տեսական հայեցակարգերի ու մեթոդաբանության վերլուծությունը բերել է հետևյալ եզրահանգումների՝

- Քաղաքական էլիտան հասարակության էլիտայի կառուվածքային մասերից մեկն է, որը մյուս մասերից տարբերվում է քաղաքական հավաքագրման, քաղաքական պատասխանատվության և պետական կառավարման համակարգի լիդերը լինելու չափանիշներով: Գտնվելով ազգային պետության ստորակարգության բուրգի գագաթին՝ քաղաքական էլիտան ղեկավարում է հասարական-քաղաքական համակարգն ու ապահովում պետական կառավարման արդյունավետ գործառնությունը:

- Չավաքագրման գործընթացի առանձնահատկությունն ու պայմանավորված քաղաքական էլիտան նույնացնում է իրեն այն սոցիալական և քաղաքական ինստիտուտների հետ, որոնցից ինքը սերում է: Քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը ներկայացնելու համար առաջնայնություն տալ կադրեր գեներացնող ինստիտուտների վերլուծությանը: Ինստիտուտներն, իրենց հերթին, լինում են

երկու տեսակի՝ որակական և սոցիալական շրջապատը (ցիրկուլյացիա)ի րականացնող:

- Քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը վերլուծելու քաղաքագիտական տեսական հայեցակարգերն ու մեթոդաբանությունը լիարժեքորեն չեն սահմանում քաղաքական էլիտայի որակն ու կապը պետական կառավարման համակարգի հետ հարաբերություններում: Վերջինը որոշելու համար անհրաժեշտ է սինթեզող մեթոդ, որը ենթադրում է հավաքագրման ինստիտուցիոնալ հիմքի վերլուծություն (դոմինանտ ինստիտուտներին որակական խորքային հետազոտություն) և պետական կառավարման հետ ընդհանուր կորելացիաների վերհանում, ինչպես նաև դրանց հիմքում ընկած մեխանիզմների վերլուծություն:

1.2.ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՐԴԱԿԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ

Արտասահմանյան և հայրենական մասնագիտական գրականություն մեջ քաղաքական էլիտայի հավաքագրման վերաբերյալ հետազոտական մեթոդաբանությունն ու մոդելները մինչ այսօր համակարգված չեն: Սույն աշխատանքում փորձ է արվել դրանք համակարգել: Քաղաքական էլիտայի հավաքագրման մոդելավորումը, մեր կարծիքով, հնարավորություն է տալիս նոր գիտելիքներ հավաքելու հետազոտվող օբյեկտի մասին: Ավելին, ռուս հեղինակներ Ա.Վ.Պոնտեդելոկովի և Ա.Մ.Ստարոստինի կողմից առաջ քաշված համեմատական մեթոդի կիրառմամբ մոդելավորումը թույլ է տալիս վերհանել հավաքագրման հիմնական ուղիները, ինչպես նաև բացատրել մոդելի հիմքում

ընկած հավաքագրման մեխանիզմը⁵⁵: Ռուս հեղինակ Ա.Վ.Ճենտյակովան նշել է, որ քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը հետազոտել նշանակում է մարդկանց քաղաքականությունն մտնելու, քաղաքական-կռավարչական բարձր պաշտոններում առաջադրվելու, ընտրվելու կամ նշանակվելու, քաղաքական լիդերներ ծնող գործընթացների, քաղաքական կարիերաներում տեսական և գործնական փորձի ուսումնասիրություն, ինչը ուղղակի կապ ունի հավաքագրման ուղիների հետ⁵⁶: Հավաքագրման ուղիների հետազոտությունից պարզ է դառնում, որ թեև դրանք բազմաթիվ են, քաղաքական էլիտայի ձևավորման գործընթացում վերջինների ակտիվությունը պայմանավորված է քաղաքական վարչակարգի տեսակով, քաղաքական ավանդույթներով, մշակույթով և այլ գործոններով: Հետազոտության շրջանակներում քաղաքական էլիտայի հավաքագրման մոդելները քննարկելիս փորձել ենք գտնել **կորելացիաներ հավաքագրման գործընթացի ճյուղային հասկացություններին միջև, բացատրել ուղղահայաց և հորիզոնական շարժումներն (մոբիլություն) խնդիրները**: Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ հավաքագրման ուղիներով չափել ենք գործընթացի ուղղահայաց շարժումներն, իսկ հորիզոնական շարժումներն չափելու համար դիտարկել ենք հավաքագրման ուղիների փոխներթափանցելիությունը:

Հիմք ընդունելով քաղաքական էլիտայի հավաքագրման մասին տեսական նյութը, տարբեր քաղաքական համակարգերի և երկրների ուսումնասիրությունները՝ կարծում ենք, որ քաղաքական

⁵⁵ Տե՛ս **Понеделков А.В., Старостин А.М.** Формирование путей рекрутации административно-политических элит в современной России, «Власть», 06, 2007, էջ 3-8:

⁵⁶ Տե՛ս **Шентякова А.В.** Проницаемость каналов рекрутирования в политическую элиту, Вестник СПбГУ, 2015, Сер. 6, Вып. 3, էջ 48:

Էլիտայի հավաքագրման գործընթացը, մեծ հաշվով,
 զարգացել է երկու ուղղությամբ՝ առաջինը՝
 ժողովրդավարացման (կամ քաղաքական արդիակա-
 նացման), իսկ երկրորդը՝ արհեստավարժ ու թյան
 (պրոֆեսիոնալիզմի հայեցակարգ): Քաղաքական
 արդիականացումը՝ որպես համալիր
 ամբողջություն, ըստ Մ.Մարգարյանի, ենթադրում է
 նոր ձևավորված քաղաքական համակարգի հարահոս
 հարմարում շարունակական ժողովրդավարական
 բարեփոխումներին տրամաբանությամբ: Այն մի
 գործընթաց է, որն ապահովում է քաղաքական համա-
 կարգի ինստիտուտների ժողովրդավարական
 կառավարման որակական զարգացում⁵⁷: Առաջին ուղին
 բռնած զարգացող երկրներում քաղաքական Էլիտայի
 հավաքագրման մոդելը նշանավորվել է սոցիալական
 կառուցվածքի, նորմատիվային և արժեքային համա-
 կարգերի կերպափոխումներով, բարեփոխումներով,
 հաճախ նաև համակարգին և հասարակությանը պարտա-
 դրված ինստիտուտներով: Խորհրդային անցյալ
 ունեցող պետություններում հատկապես (այդ
 թվում՝ նաև ՀՀ-ում) շարունակում է արդիական մնալ
 քաղաքական ու պետական կառավարման համակարգի
 լիարժեք կայացման խնդիրը, ինչը նշանակում է, որ
 առանց դրա կայացման համակարգի արհեստա-
 վարժ ու թյան և ձևավորված քաղաքական Էլիտայի
 առկայություն մասին խոսելը վաղ է: Երկրորդ ուղին
 զարգացել է արհեստավարժ ու թյան հայեցակարգում:
 Սույն ուսումնասիրության համար հետաքրքիր է
 ամերիկացի սոցիոլոգ Թ.Պարսոնսի արհեստավար-
 ժ ու թյան կառուցվածքագործառնական հայեցակարգը,
 որում մասնագիտությունները (պրոֆեսիա) համար-

⁵⁷Տե՛ս **Մարգարյան Մ.** Քաղաքական արդիականացման
 քաղաքակրթական չափումը՝ որպես նազմավարական
 կառավարման ապահովման հիմք, մարտ 30, 2018
 (<https://mrmargaryan.wordpress.com/2018/03/30/քաղաքական-արդիականացման-քաղաքակրթակ,վերջինմուտքը`05.10.2018>):

վել են հասարակության կառուցվածքային տարրեր, այսինքն՝ հասարակության ավանդական դասային ընկալումից, ինչպես պնդել է հեղինակը, զարգացած հասարակությունները վաղուց հրաժարվել են⁵⁸: Ըստ հեղինակի՝ մասնագիտությունները՝ որպես հասարակական կառուցակարգեր, իրականացնում են համակարգային հավասարակշռությունը պահելու գործառնությունը, եթե շրջակա միջավայրի փոփոխություններ են լինում (դերերի և պաշտոնների փոփոխություններ կատարելու մեխանիզմները): Վերոնշյալ իմաստով, արհեստավարժության պարսոնսյան հայեցակարգում առանցքային դեր են խաղում օրինակ՝ համալսարանները (էլիտայի տեսությունում հավաքագրման կրթական ուղին են երկայացնում): Նշենք նաև, որ հավաքագրման մոդելների վերլուծությունը սույն աշխատանքում իրականացվել է վերոնշյալ զարգացման ուղղությունների հայեցակարգային տիրույթում:

Քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի **առաջին մոդելավորումը**, մեր կարծիքով, իրականացվել է զարգացող և զարգացած պետությունների միջև սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգերի, քաղաքական գործընթացների, ինչպես նաև ընդհանուր արժեհամակարգի տարբերությունների հիման վրա: Նշված բոլոր չափանիշներով, ընդհանուր առմամբ, տիպաբանվում են հավաքագրման **բաց** (անտրեպենյորական) և **փակ** (գիլդային) մոդելներ, որոնց մասնագիտական գրականություն մեջ անվանում են երբեմն համակարգեր⁵⁹: Քաղաքական էլիտայի հավաքագրման բաց և փակ

⁵⁸ Տե՛ս **Parsons T.** The Professions and Social Structure, *Social Forces Journal*, Oxford University Press, 1939, Vol 17, No 4 (May), էջ 457-467; **Parsons T.** The Social System, /ed. by Bryan S.Turner/ Taylor & Francies e-Library, 2nd ed., 2005, էջ 15-18:

⁵⁹ Տե՛ս **Буддакова Л.В.** Политическая элита: основные понятия, базовые концепции: ГОУ ВПО, «Кемеровский государственный университет», Кемерово, 2010, էջ 122-123:

համակարգերը, որոնք սույն աշխատանքում նախընտրում ենք անվանել մոդելներ, խորհրդանշում են նաև աշխարհաքաղաքական երկու հակադիր բևեռների՝ Արևմուտքի և Արևելքի միջև շարունակվող հակամարտությունը, որն ուղեկցվել է գաղափարական պատերազմով: Ըստ բաց և փակ համակարգերի տիպաբանության հեղինակ Բ.Ռոքմանի՝ ժողովրդավարական երկրներում քաղաքական էլիտան հավաքագրվում է բաց մոդելով, քանի որ հավաքագրման գործընթացին հատկանշական են մրցակցությունը, հավասարությունը, բազմակարծությունը և գործընթացի այլ բնութագրիչներ⁶⁰: Ավստրիացի փիլիսոփա, սոցիոլոգ Կ.Պոպպերի կարծիքով՝ հավաքագրման բաց մոդելը բնորոշ է ժողովրդավարական հասարակություններին, քանի որ քաղաքական էլիտայի հավաքագրման առաջնային չափանիշներն են կարողությունն ու գիտելիքը⁶¹: Յեղինակները բաց մոդելի առավելությունն են համարել նաև այն է, որ քաղաքական էլիտան այդ դեպքում ունի բարձր շարժունություն, որն ապահովում է հավաքագրման ուղիների բազմազանության միջոցով ձևավորված խոշոր կարային ավազանը: Վերոնշյալից եզրակացնում ենք, որ այն երկրներում, որտեղ քաղաքական էլիտայի հավաքագրումը վերոնշյալ չափանիշներով չի իրականացվում, տիրապետող է հավաքագրման փակ մոդելը, որի բնութագրիչներն են համապատասխանաբար հավաքագրման սահմանափակ ուղիները, ցածր սոցիալական շարժունությունը և կարային ներդրումը:

Քաղաքական էլիտայի հավաքագրման բաց և փակ մոդելները քննարկվել են նաև էլիտայի դասական տեսությունում (Գ.Մոսկա, Ռ.Միխելս): Վերջինի

⁶⁰ Տե՛ս **Rockman B.A., Abernethy J.D.** Conducting and Coding Elite Interviews, *Political Science and Politics*, December, 2002, Vol. 35, No 4, էջ 673-676:

⁶¹ Տե՛ս **Поппер КР.** Открытое общество и его враги, Москва, 1992, Т.1, էջ 218-220:

համաձայն՝ հավաքագրումը բոլոր քաղաքական համակարգերում կատարվում է հիմնականում փակ մոդելով (նեղ սոցիալական-մասնագիտական խմբերից և լավ կազմակերպված կառույցով) և էլիտամտելու հնարավորությունը սահմանափակվում է ոչ միայն հավաքագրման ուղիներով, թեկնածուներին ներկայացվող չափանիշներով, այլ նաև օբյեկտիվ պայմաններով: Ինչ վերաբերում է հավաքագրման բաց մոդելի հնարավորությանը, ապա դասական տեսաբաններն այս առումով նշել են, որ ժողովրդավարների կողմից պաշտպանվող լիբերալիզմն ու հավաքագրման գործընթացի թափանցիկությունը հարաբերական բնույթ ունեն, իսկ հավաքագրման ուղիների բազմազանությունն ու ժողովրդավարական ընթացակարգերը՝ կարճաժամկետ արդյունք (էֆեկտ), որովհետև վերջնարդյունքում ձևավորվում է փոքրամասնություն⁶²:

Բաց և փակ մոդելների մեջ տեղում, ինչպես սոցոլոգ տվեց ուսումնասիրությունը, առկա է նաև միջանկյալ ձևը, որի լավագույն օրինակը ԽՍՀՄ քաղաքական էլիտան է: Թեև մասնագիտական գրականություն մեջ այն դասվում է փակ մոդելով հավաքագրվող էլիտաների թվին հետազոտությունը վերհանել է հետաքրքիր փաստեր: Խորհրդային քաղաքական էլիտայում սոցիալական ներկայացուցչությունն աստիճանը բարձր է եղել, չնայած քաղաքական էլիտան հավաքագրվել է միայն կուսակցական ուղով՝ իշխող մեկ գաղափարախոսության պայմաններում: Չայտնի է, որ խորհրդային կառավարման համակարգում էլիտայի անդամ կարող էր դառնալ ցանկացած մեկը, անգամ տնային

⁶² S Ե Վու **Michels R.** Political Parties: A Sociological Study of the Oligarchical Tendencies of Modern Democracy /translated by Eden and Cedar Paul/, Batoche Books, Kitchener, 2001, էջ 219; **Mosca G.** The Ruling Class /transl. by Hannah D.Khan/, McGraw-Hill Book Company, New York and London, 1939., էջ 250-259:

տն տե ս ու հ ի ն : Յ ե տ ա գ ա յ ու մ ն ո մ ե ն կ լ ա տ ու ր ա յ ի (լ ա տ. «nomenclatura» բ առ ի ց , ո Ր ը ն շ ա ն ա կ ու մ է ա ն վ ա ն ա կ ա ր գ) ձ ա վ ո Ր ու մ ը (հ ի մ ք ե Ր ը դ Ր ե ց Վ .Լ ե ն ի ն ը , ս ա կ ա յ ն ո Ր պ ե ս ի ն ս տ ի տ ու տ կ ա տ ա ր ե լ ա գ ո Ր ծ ե լ է Ի .Ս տ ա լ ի ն ը) ն վ ա գ ե ց Ր ե ց ք ա ղ ա ք ա կ ա ն է լ ի տ ա յ ի ու ղ ղ ա հ ա յ ա ց շ ա ր ժ ու ն ու թ յ ու ն ը և տ ե ղ ի ու ն ե ց ա վ ք ա ղ ա ք ա կ ա ն և կ առ ա վ ա ր չ ա կ ա ն է լ ի տ ա ն ե Ր ի ս ե Ր տ ա ճ ու մ : Ի շ խ ա ն ու թ յ ա ն ու ղ ղ ա հ ա յ ա ց շ ա ր ժ ու ն ու թ յ ու ն ը , ո Ր պ ե ս կ ա ն ո ն , ն վ ա գ ու մ է , ե Ր ք հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն ու ղ ի ն ե Ր ի թ ի վ ն ու շ Ր ջ ա ն ա կ ն ե Ր ը ն ե ղ ա ն ու մ ե ն , ո Ր ի ց հ ե տ ո հ ա մ ա կ ա ր գ ը փ ա կ վ ու մ է է լ ի տ ա ր ն ե ղ խ մ ք ե Ր ո վ : Խ Ս Յ Մ -ի դ ե պ ք ու մ , հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն մ ե կ պ ա շ տ ո ն ա կ ա ն ու ղ ու առ կ ա յ ու թ յ ա ն պ ա յ մ ա ն ն ե Ր ու մ շ ա ր ժ ու ն ու թ յ ու ն ը ն վ ա գ ե ց է լ ի տ ա յ ի ն ե Ր ս ու մ ն ո Ր է լ ի տ ա ձ ա վ ո Ր ե լ ու ա ր դ յ ու ն ք ու մ : Մ ի ն չ և Խ Ս Յ Մ վ ե Ր ա կ առ ու ց մ ա ն շ Ր ջ ա ն ը կ ու ս ա կ ց ա կ ա ն ն ո մ ե ն կ լ ա տ ու ր ա յ ու մ հ ա շ վ վ ու մ է Ր 500.000 թ վ ո վ մ ա ր դ , ն ե Ր առ յ ա լ կ ու ս ա կ ց ու թ յ ա ն ք ո լ ո Ր մ ա կ ա ր դ ա կ ն ե Ր ի ղ ե կ ա վ ա ր պ ա շ տ ո ն յ ա ն ե Ր ը , 439.000 ք յ ու Ր ո յ ի ա ն դ ա մ ն ե Ր , կ ու ս ա կ ց ա կ ա ն կ ո մ ի տ ե ն ե Ր ի ք ա ր տ ու ղ ա ր ն ե Ր և ա յ լ ն : Ն ո մ ե ն կ լ ա տ ու ր ա ն կ ա գ մ ու մ է Ր Խ Մ Կ Կ ա ն դ ա մ ն ե Ր ի 3%-ը , ք ա ղ կ ա ց ա ծ է Ր կ ու ս ա կ ց ա կ ա ն \$ ու ն կ ց ի ո ն ա ր ն ե Ր ի ց (գ ա ղ ա փ ա ր ա կ ա ն) և կ առ ա վ ա ր չ ա կ ա ն է լ ի տ ա յ ի ց (տ ե խ ն ո կ Ր ա տ ի ա) , ո Ր ի ձ ե ո ք ու մ է Ր կ ե ն տ Ր ո ն ա ց ե լ պ ե տ ա կ ա ն ի շ խ ա ն ու թ յ ու ն ը : Վ ե Ր ո ն շ յ ա լ ի ց հ ե տ ն ու մ է , ո Ր Խ Ս Յ Մ օ Ր ի ն ա կ ու մ , ս կ գ ք ու մ կ ու ս ա կ ց ա կ ա ն ու ղ ի ն ա պ ա հ ո վ ե լ է ս ո ց ի ա լ ա կ ա ն լ ա յ ն ն ե Ր կ ա յ ա ց ու ց չ ու թ յ ու ն ն է լ ի տ ա յ ու մ , ս ա կ ա յ ն ն ո մ ե ն կ լ ա տ ու ր ա յ ի ձ ա վ ո Ր ու մ ի ց հ ե տ ո հ ո Ր ի գ ո ն ա կ ա ն շ ա ր ժ ու ն ու թ յ ու ն ը մ ի ա կ ու ս ա կ ց ա կ ա ն ու թ յ ա ն պ ա յ մ ա ն ն ե Ր ու մ ն պ ա ս տ ե լ է ք ա ղ ա ք ա կ ա ն և կ առ ա վ ա ր չ ա կ ա ն է լ ի տ ա յ ի ս ե Ր տ ա ճ մ ա ն ն ու հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն փ ա կ մ ո դ ե լ ի հ ա ս տ ա տ մ ա ն ը : Յ ե տ ս տ ա լ ի ն յ ա ն շ Ր ջ ա ն ու մ , ի ն չ պ ե ս ն շ ե լ է խ ն դ Ր ո վ գ ք ա ղ վ ո ղ ո ու ս մ ա ս ն ա գ ե տ Ն .Վ .Բ ա ք ո տ յ ա ժ ն ը , ն ո մ ե ն կ լ ա տ ու ր ա յ ի դ ի Ր ք ե Ր ի թ ու լ ա ց մ ա ն ը ն պ ա ս տ ե լ է ք ա ղ ա ք ա կ ա ն և

կառավարչական գործառույթների մասնակի տարանջատումը, որի շնորհիվ քաղաքական էլիտան դարձել է ավելի տարասեռ (պետական բյուրոկրատիա, ՊԱԿ, և այլն)⁶³: Հաշվի առնելով քննարկվող մոդելի անարդյունավետությունը արդի հասարակության զարգացման տեսանկյունից կարևոր ենք համարում հավաքագրման ուղիների բազմազանությունն ու դրանց հիմքում ընկած այնպիսի մեխանիզմների կիրարկումը, որոնք կապահովեն էլիտայում սոցիալական լայն ներկայացուցչություն, բազմազանություն, մրցակցություն և արհեստավարժների համալրում:

Նախորդ միտքը շարունակելով հարկավոր է հավելել, որ բարձր ուղղահայաց շարժունությունն ապահովում է նաև էլիտայի շրջապատը, իսկ ցածրի դեպքում, որպես կանոն, քաղաքական էլիտան վերարտադրում է: Պետական կառավարման համակարգում քաղաքական էլիտայի կառավարումն ու շրջափոխությունը պարզաբանելու համար Պ.Վ.Տարուսինը, Վ.Պ.Մոխովը կարևորել են շրջապատը տիրույթի ուսումնասիրությունը: Հեղինակներն այդ գործընթացը դիտարկել են իշխող քաղաքական ուժ-ընդդիմություն, տարբեր էլիտաների (տնտեսական, ռազմական, \$ինանսական և այլն), ներէլիտային դերակատարների իշխանական պայքարի և մրցակցության ձևերի համատեքստում⁶⁴: Սույն աշխատանքի շրջանակներում շրջապատը տիրան դրադարձը կարևորել ենք նաև քաղաքական էլիտայի կադրային քաղաքականության իրականացման,

⁶³Տե՛ս **Работяжев Н.В.** Механизмы рекрутирование и воспроизводство политической элиты в посткоммунистической России, էջ 22 <http://ecsocman.hse.ru/data/673/685/1219/003Rabotyazhev.pdf>:

⁶⁴Տե՛ս **Тарусин П.В.** Циркуляция элиты: методы изучения и вызовы практики, “Общественные науки и современность”, 2014, No 2, էջ 64-78; **Мохов В.П.** Циркуляция элит как социальный процесс, Изд. “Грамота”, 2012, No 10 (24), в 2-х ч., Ч II, էջ 139-142:

նոր մարդկանց ինտեգրելու եղանակներով⁶⁵: Բոլոր թվարկված խնդիրները համատեքստում շրջապատւյտի դերը հավաքագրման գործընթացում արժևորելու համար հարկավոր է անդրադառնալ այն կարծրատիպերին, որոնք ձևավորվել են վերոնշյալ երևույթի շուրջ: Դրանք են.

- **Յավաքագրման շրջապատւյտը կոչված է ապահովելու էլիտայի բացառապես ոչ մեծաքանակ (փոքրամասնուկթյան) դեկավար պաշտոնները համար մարդկանց պատրաստելու և փոխարինելու խնդիրները և նույնիսկ:** Պատմաքաղաքական իրողություններն ու կազմակերպչական կառույցների գործառնություններն փորձը փաստում են, որ կառավարող միջուկը վաղ թե ուշ կտրվում է մեծամասնուկթյանից: Քաղաքական էլիտայի հավաքագրման ակտիվ փուլերը մի շարք երկրներում համընկել են ժողովրդական մեծ շարժումների, քաղաքական գործընթացների ծավալման հետ, որի ժամանակ կտրուկ կամ ցնցումային շրջապատւյտ է տեղի ունեցել: Յաշվի առնելով այն, որ վերոնշյալ իրողությունները բացասաբար են անդրադառնում էլիտայի որակի և արդյունավետության, իսկ վերջնարդյունքում՝ նաև հավաքագրման գործընթացի նպատակների վրա, կայուն քաղաքական-կառավարչական համակարգերում շրջապատւյտի հիմքում դրվում է սերնդափոխություն ապահովման խնդիրը:
- **Շրջապատւյտը՝ որպես անընդհատ կրկնվող գործընթաց, ապահովում է քաղաքական էլիտայի թարմացումն ու շարժը:** Յաշվի առնելով այն, որ շրջապատւյտի քողիներքո կարող է տեղի ունենալ վերարտադրություն, հարկ ենք համարում նշել, որ

⁶⁵ Տե՛ս Ալթունյան Կ. Քաղաքական ընտրանու կառավարման և հավաքագրման սկզբունքների էվոլյուցիան, Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու, «Լիմուշ», Երևան, 2016, էջ 23-31:

շրջապտուղյ տը օբյեկտիվ բնույթ ունի, երբ առկա է մրցակցություն քաղաքական ու պետական համակարգում: Շրջապտուղյ տի օբյեկտիվությունը Վ.Պարետոն կապել է նաև պատմահասարակական պահանջի առկայության հետ: Ցանկացած հասարակությունում, ըստ հեղինակի, մրցակցում են քաղաքական էլիտայի «առյուծ» և «աղվես» տեսակները, սակայն որևէ մեկի իշխանության գալու և կառավարելու առաջնային պայմանը պատմաքաղաքական կոնկրետ ժամանակաշրջանում հասարակության համար պահանջված էլիտեի է⁶⁶: Շրջապտուղյ տը օբյեկտիվ բնույթ ունի նաև քաղաքական էլիտայի կենսական էներգիայի սպառման դեպքում: Հավաքագրման փակ մոդելում քաղաքական էլիտան կենսունակ է ներքին ռեսուրսների հաշվին, որոնց սպառումը հանգեցնում է համակարգային աստիճանական քայքայման ու կազմալուծման (դեգրացիան): Շրջապտուղյ տի խնդրին անդրադարձած ռուս հեղինակներ Գ.Կ.Աշինը, Ի.Վ.Կոնդրատովիչը՝ հղում տալով արևմտյան հետազոտողներին, շրջակա միջավայրի հետ ռեսուրսների ու «էներգիայի» փոխանակման, երիտասարդացման, գաղափարները նորացնելու հնարավորությունները համարում են բացմոդելով քաղաքական էլիտայի հավաքագրման առավելությունը⁶⁷:

Վերոնշյալ հիմնավորումների և մեր հետազոտություններից էլնելով պնդում ենք, որ քաղաքական էլիտայի հավաքագրման բաց մոդելը օբյեկտիվ շրջապտուղյ տի միջոցով կարող է

⁶⁶ Տե՛ս **Парето В.** Компендиум по общей социологии /пер. с ит. А.А. Зотова/, Изд, дом ГУ ВШЕ, Москва, 2008, էջ 375-376:

⁶⁷ Տե՛ս **Кондратович И.В.** Элиты как компенсационный механизм при изменении социально экономических отношений, Интернет-журнал «Науковедение», январь-февраль 2014, Вып. 1, էջ 1-13, <https://naukovedenie.ru/PDF/109EVN114.pdf>; **Ашин Г.** Смена элит, «Гражданское общество и правовое государство», էջ 40-50, http://ecsocman.hse.ru/data/720/717/1231/004_Ashvin.pdf :

ապահովել սերնդափոխություն անընդհատությունը, բացառել անառողջ մրցակցությունը, սոցիալական և քաղաքական համակարգային ցնցումները և որպես անընդհատ գործընթաց որակապես փոխել քաղաքական էլիտան: Բնականոն շրջապատը ապահովելու արդիական սկզբունքներից է նաև «բազմազանությունը», որը մեծ արժեք ունի հատկապես բիզնես և կառավարչական պրակտիկայում: Այն ենթադրում է մտավոր և մարդկային տարբեր ուսուցում, կանանց և տղամարդկանց հավասար ներկայացուցչություն, իրավունքների և պայմանների ստեղծում⁶⁸:

Քաղաքական էլիտայի հավաքագրման մոդելների **հաջորդ տիպաբանությունը**, որ ներկայացրել ենք աշխատանքում, չի հիմնվում համակարգային բնույթի խնդիրների ուսումնասիրության վրա, ինչպես բաց և փակ մոդելներում: Տիպաբանությունը հիմնվում է ինստիտուցիոնալ վերլուծության վրա, ըստ որի առանձնացրել ենք **դասական (կուսակցական) և ժամանակակից կամպլյուրալիստական մոդելները** (որում, կուսակցություններին բացի, ներառված են հանրային ակտիվ ինստիտուտներ ու քաղաքացիական հասարակության տարբեր կառույցներ): Նշենք, որ քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը ինստիտուցիոնալ հենքով ուսումնասիրել են արևմտյան հեղինակներ Ռ.Տ.Դայը, Լ.Յ.Չիգլերը, Մ.Դոգանը, Ջ.Բեսթը, Ե.Սեմենովան և ուրիշներ⁶⁹: Հիշյալ հեղինակների աշխատանքները վերաբերում են այն ինստիտուտների ուսումնասիրությանը, որոնցով հիմնականում հավաքագրվում է քաղաքական էլիտան: Օրինակ՝ խորհրդարանական կառավարման ձև ունե-

⁶⁸ Տե՛ս **Наронская А.Г.** Теоретико-методологические подходы к изучению «политической элиты», Научно-исследовательский институт общественных и политических наук, 2012, PolitBook 4-2012, էջ 87-95:

⁶⁹ Տե՛ս **Дай Р.Т., Зиглер Л.Х.** Демократия для элиты. Введение в американскую политику, Москва, 1984, -320; **Dogan M.** Elite Configurations at the Apex of Power, Boston, 2003; **Semenova E., Edinger M., Best H.** Parliamentary Elites in Central and Eastern Europe: Recruitment and Representation /ed by E.Semenova, M. Edinger, H. Best/, by Routledge, New York, 2014:

ցող երկրներում քաղաքական էլիտայի ուսումնասիրությունները կենտրոնանում են հիմնականում խորհրդարանի շուրջ (Կենտրոնական Արևելյան Եվրոպա (ԿԱԵ))⁷⁰: Իսկ այն երկրներում, որտեղ խորհրդարանից բացի սահմանադրական լայն լիազորություններ են նաև կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը, շահերի խմբերը, քաղաքական էլիտայի հետազոտությունը չի սահմանափակվում միայն խորհրդարանով (ԱՄՆ): 1980-ականներին ԱՄՆ քաղաքական էլիտայի շրջանում սոցիոլոգիական հետազոտություններ կատարած ամերիկացի հետազոտող Թ.Դայը նշել է, որ ԱՄՆ-ում քաղաքական էլիտան միայն նախագահը կամ խորհրդարանը չէ: Իշխանությունը, ըստ հեղինակի, չի կենտրոնանում դրանցից որևէ մեկում, որովհետև ԱՄՆ-ում չի խախտվում ինստիտուտների անկախությունը և ազատ գործելու իրավունքը⁷¹: Նման ապակենտրոն քաղաքական էլիտաները Մ.Դոգանը անվանել է պոլիարխիկ⁷²: Կառավարման արդյունավետության տեսանկյունից տարբեր ինստիտուտներից ձևավորվող քաղաքական էլիտայի առավել ունեն ընդգծվում է հատկապես արհեստավարժության հայեցակարգի շրջանակներում⁷³: Ընդհանուր առմամբ, դասական և պլյուրալ մոդելներին տրամաբանությունը կարելի է հետևյալ կերպ ներկայացնել. քաղաքական ու պետական կառավարման ոլորտը կուռ համակարգ է, մասնագիտական գործունեության դաշտ, որի էլիտան հավաքագրվում է համակարգային ինստիտուտներից և ունի մասնագիտական գործունեության կանոնակարգված, կայուն մեխանիզմ: Չաշվի առնելով, որ

⁷⁰ Տե՛ս **Semenova E., Edinger M., Best H.** նշվ. աշխ., էջ 12-13:

⁷¹ Տե՛ս **Дай Р.Т., Зиглер А.Х.** նշվ. աշխ., էջ 191:

⁷² Տե՛ս **Dogan M.** նշվ. աշխ., էջ 2:

⁷³ Տե՛ս **Гульбрандсен Т.** Элиты и профессионалы, «Мировая экономическая и международные отношения», 2016, Том 60, No 11, էջ 71-83:

քաղաքական էլիտայի հավաքագրման
 ինստիտուտները սահմանվում են պետական
 կառավարման ձևով, դասական և պլյուրալ
 մոդելներում կարևորել ենք քաղաքական
 կարիերայի ուսումնասիրությունը: Օրինակ՝
 գերմանացի սոցիոլոգ Մ.Յարթմանը, որպեսզի պարզի
 թե ինչ շարժունությունն ունեն Մեծ
 Բրիտանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում
 կառավարող քաղաքական էլիտաները, հավաքագրման
 գործընթացի առանցքում ուսումնասիրել է
 կարիերայի կառուցման փորձը, էլիտայի տարբերմա-
 սերի փոխներթափանցումը⁷⁴: Յեղիսակի հետազոտու-
 թյունից պարզ է դառնում, որ Ֆրանսիայում
 քաղաքական կարիերան ինստիտուցիոնալ կոշտ
 հիմքեր ունի, և հատկանշականն այն է, որ առանց
 պետական կառավարման համակարգում
 աշխատանքային փորձի քաղաքական էլիտահավաքա-
 ցելու հավանականությունն այստեղ ցածր է:
 Լինելով նույնքան զարգացած երկիր որքան
 Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան տարբերվում է քաղա-
 քական կարիերայի կառուցման փորձով, ըստ որի,
 հավաքագրման գործընթացում արժևորվում է
 կուսակցության շարքերում աշխատանքը:
 Քաղաքական կարիերայի կառուցման գերմանական
 օրինակին փորձում են հետևել եվրոպական միջարք
 երկրներում, քանի որ դրա առավելությունը
 դանդաղ կարիերային աճն է (տեղական կառավարման
 մակարդակից մինչև պետական ու քաղաքական բարձր
 պաշտոններ): Յիմք ընդունելով Մ.Յարթմանի հետա-
 զոտությունն ու այդ երկրներում քաղաքական էլի-
 տայի անդամների կենսագրությունները, նաև
 հավելենք, որ բոլոր երեք երկրներում էլ առկա է
 էլիտաների փոխներթափանցման բազում օրինակներ,

⁷⁴ Տե՛ս **Хартман М.** Модели образования элит в Европе//Властные структуры и группы доминирования: материал десятого Всероссийского семинара /под. ред. А.В. Дуки//, СПб, Интосоцис, Санкт-Петербург, 2012, էջ 10-39:

ի ն չ ը ն շ ա ն ա կ ու մ է , ո Ր ք ա ղ ա ք ա կ ա ն է լ ի տ ա ն ու ն ի հ ո Ր ի գ ո ն ա կ ա ն շ ա ր ժ ու ն ու թ յ ու ն : Տ ա ր ք ե ր ու թ յ ու ն ը ա յ լ ե ր կ ր ն ե ր ու մ առ կ ա է լ ի տ ա ն ե ր ի փ ո խ ն ե ր թ ա փ ա ն ց մ ա ն փ ո Ր ձ ի ց կ ա յ ա ն ու մ է ն ր ա ն ու մ , ո Ր ք ա ղ ա ք ա կ ա ն կ ա ր ի ե ր ա յ ի կ առ ու ց մ ա ն կ ա ր գ ը ք ո լ ո Ր ե ր ե ք ե ր կ ր ն ե ր ու մ ի ն ս տ ի տ ու ց ի ո ն ա լ ա ց վ ա ծ է , և առ ա ջ ն ա յ ն ու թ յ ու ն է տ ր վ ու մ ք ա ղ ա ք ա կ ա ն ի ն ս տ ի տ ու տ ն ե ր ի ն : Թե և է լ ի տ ա ն ե ր ի փ ո խ ն ե ր թ ա փ ա ն ց մ ա ն առ կ ա յ ու թ յ ա ն ը , չ ի խ ր ա խ ու ս վ ու մ տ ա ր ք ե ր է լ ի տ ա ն ե ր ի ս ե ր տ ա ճ ու մ ը ա յ դ ե ր կ ր ն ե ր ու մ : Դ ր ա փ ո խ ա ր ե ն ը ն դ գ ծ վ ու մ է հ ա ս ա ր ա կ ու թ յ ա ն տ ա ր ք ե ր է լ ի տ ա ն ե ր ի հ ե տ հ ա մ ա - գ ո Ր ծ ա կ ց ու թ յ ու ն ը : է լ ի տ ա ն ե ր ի փ ո խ ն ե ր թ ա փ ա ն ց մ ա ն առ ու մ ո վ տ ա ր ք ե ր է ա լ յ ու ր ա լ մ ո դ ե լ ը , ո Ր ը չ ի ք ա ց առ ու մ ա յ լ է լ ի տ ա ն ե ր ի ց ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն ն ե ր թ ա փ ա ն ց ե լ ու պ ր ա կ տ ի կ ա ն (օ Ր ի ն ա կ ` ԱՄՆ - ու մ) :

Ռ ու ս ա կ ա ն և հ ե տ խ ո Ր հ Ր դ ա յ ի ն հ ե տ ա գ ո տ ո ղ ն ե ր ի ց շ ա տ ե Ր ը լ ի ք ե ր ա լ - ժ ո ղ ո վ Ր դ ա վ ա ր ա կ ա ն ե ր կ ր ն ե ր ու մ ք ա ղ ա ք ա կ ա ն է լ ի տ ա յ ի հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն մ ո դ ե լ ն ե ր ի ա ր դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ու ն ը պ ա յ մ ա ն ա վ ո Ր ու մ ե ն հ ե ն ց ի ն ս տ ի տ ու ց ի ո ն ա լ ա ց մ ա ն , կ ա դ Ր ա յ ի ն ք ա ղ ա ք ա - կ ա ն ու թ յ ա ն ի ր ա կ ա ն ա ց մ ա ն առ ա վ ե լ ու թ յ ու ն ն ե ր ո վ ⁷⁵ : Պ ա շ տ ո ն ա պ ե ս հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն ի ն ս տ ի տ ու ց ի ո ն ա լ հ ի մ ք և կ ա դ Ր ա յ ի ն ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն ու ն ե ն ա յ ս օ Ր գ Ր ե թ ե ք ո լ ո Ր հ ե տ խ ո Ր հ Ր դ ա յ ի ն ե ր կ ր ն ե ր ը : Ա յ ն ու ա մ ե ն ա յ ն ի վ , ի Ր ե ն ց հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն մ ո դ ե լ - ն ե ր ո վ առ ա ն ձ ն ա ն ու մ ե ն ԱՊՅ ե ր կ ր ն ե ր ը : Ռ ու ս հ ե ղ ի ն ա կ **Օ.Գ ա մ ա ն -Գ ո լ տ վ ի ն ա ն** ԱՊՅ ե ր կ ր ն ե ր ու մ առ ա ն ձ ն ա ց Ր ե լ է ք ա ղ ա ք ա կ ա ն է լ ի տ ա յ ի հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն գ ո Ր ծ ո ղ ե ր ե ք մ ո դ ե լ ն ե ր ` *ք յ ու ր ո կ Ր ա տ ա կ ա ն* (Բ ե լ ո ճ ու ս ը) , *կ լ ա ն ա յ ի ն* (Մ ի ջ ի ն ա ս ի ա կ ա ն ե ր կ ր ն ե ր , Ա դ Ր ք ե ջ ա ն) և *խ առ ը* (Յ ա յ ա ս տ ա ն , Ռ ու ս ա ս տ ա ն , Մ ո լ դ ո վ ա , Ու կ Ր ա ի ն ա) : Տ ի պ ա ք ա ն ու թ յ ա ն հ ի մ ք ու մ ը ն կ ա ծ ե ն

⁷⁵ Տե՛ս **Котта М.** Политические элиты и становление политической системы на примере Европейского Союза, “Сравнительная политика”, 2012, 3(9)/2012, է ջ 25:

քաղաքական էլիտայի կառուցվածքային չափանիշը, քայց հեղինակը օգտագործել է նաև քաղաքական վարչակարգերի համեմատությունները և քաղտնտեսությունները⁷⁶: Եթե հակիրճ ներկայացնելու էլիտենք, ապա պետք է նշել, որ **բյուրոկրատական մոդելի** առանձնահատկություններն այն է, որ քաղաքական էլիտայի ներսում բացակայում են ներքին բաժանարար գծերը, ինչը էլիտան կառուցվածքային և ինստիտուցիոնալ տեսանկյունից, ինչպես նաև կադրային քաղաքականության առումով դարձնում է միատարր: **Կլանային մոդելում** քաղաքական էլիտայի սուբէթնիկական կառուցվածքում կան բաժանարար գծեր, իսկ կառուցվածքային տարբեր մասերի միջև կլիենտիստական հարաբերություններ: Հավաքագրման այս մոդելով, ըստ հեղինակի, քաղաքական էլիտան վերարտադրվում է, իսկ էլիտայի թեկնածուներին ընտրում կամ նշանակում են անցյալից ստացած ժառանգության և փորձի տիրապետման սկզբունքներով: Հավաքագրման **խառը մոդելը** հեղինակը բացատրում է ՌԴ քաղաքական էլիտայի օրինակով, որը 1990-ականներիցի վերմիքանիանգամ փոխել է իր հավաքագրման մոդելը: 1990-ականներին քաղաքական էլիտայի հավաքագրման մոդելը, ըստ Օ.Գաման-Գոլովինայի, կարելի է անվանել բյուրոկրատական: Ելցինյան իշխանության շրջանում պետական և մասնավոր (կորպորատիվ) շահերի փոխնույնացման հետևանքով քաղաքական էլիտայի հավաքագրման գերակա սկզբունքն, ըստ հեղինակի, դարձել է հարստությունը: Վերջին՝ քաղաքական արդիականացման (մոդեռնիզացման) շրջանում (սկսած 2000-ից) տնտեսական ու քաղաքական համակարգերում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխություններին հետո հավաքագրման մոդելը

⁷⁶ Տե՛ս **Gaman-Golutvina O.** Political Elites in CIS: Recruitment and Rotation Tendencies, *Comparative Sociology* 6, 2007, էջ 136-157:

գարգացել է հետևյալ տրամաբանությամբ. քաղաքական էլիտայի սերնդափոխության սկզբունքը դարձել է պրագմատիզմը, ըստ որի ճշմարիտ է այն, ինչն օգտակար է: Չավաքագրման մոդելի նման տրամաբանությունը, ըստ հեղինակի, ճկուն է եղել ՌԴ-ի համար հատկապես արտաքին և ներքին մարտահրավերներին դիմակայելու տեսանկյունից: Ծարունակելով նշված մոդելի քննարկումը, նշենք, որ ամերիկյան հեղինակներից շատերի պնդմամբ, **խառը մոդելով** են հավաքագրվում չարևմտականացված (չվեստերնիզացված) քաղաքական-կառավարչական համակարգ ունեցող երկրների քաղաքական էլիտաները: Խառը մոդելի առանձնահատկությունն այն է, որ քաղաքական էլիտան հավաքագրվում է \$որմալ (պաշտոնական) ու ոչ \$որմալ (ոչ պաշտոնական) ինստիտուտներից, իսկ կադրային քաղաքականությունը կանոնակարգված բնույթ չի կրում: Լինելով իշխանական համակարգի կենտրոնը՝ քաղաքական էլիտան հավաքագրվում է իշխանության ինստիտուտների պաշտոնապես պատկանելու, ինչպես նաև իշխանական հարաբերությունների ոչ պաշտոնական սկզբունքներով: Իրանական քաղաքական էլիտայի հետազոտությունները գրավող Ե.Պ.Ռակելի կարծիքով, ոչ պաշտոնական ինստիտուտների դերը քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացում մեծ է հատկապես գաղափարապես ինտեգրված էլիտանունեցող հասարակություններում⁷⁷: Օրինակ՝ Իրանի Իսլամական Յանրապետության (ԻԻՅ) քաղաքական էլիտայի կառուցվածքում, ըստ հեղինակի, հստակ կարելի է տեսնել \$որմալ և ոչ \$որմալ քաղադրիչների տարանջատումը: Առաջինը կազմում են Յոգևոր քարձրագույն մարմինը (երկրի

⁷⁷ Տե՛ս **Rakel E.P.** The Iranian Political elite, State and Society Relations, and Foreign Relations Since the Islamic Revolution, Universiteit van Amsterdam, Düren, Duitsland, 2008, էջ 50-52:

գ Ե ր ա գ ու յ ն հ ո գ և ո թ առ ա ջ ն ո թ դ ն ու ն ր ա շ ը ջ ա պ ա տ ը), հ ա ն ր ա պ Ե տ ա կ ա ն մ ա ր մ ի ն ն Ե ր ը (գ ո թ ա դ ի թ , օ թ Ե ն ս դ ի թ , դ ա տ ա կ ա ն), կ թ ո ն ա կ ա ն կ առ ու յ ց ն Ե ր ը (ք ա ր Ե գ ո թ ա կ ա ն մ ի ու թ յ ու ն ն Ե ր , ո թ ո ն ք դ Ե կ ա վ ա ր ու մ Ե ն գ Ե ր ա գ ու յ ն հ ո գ և ո թ առ ա ջ ն ո թ դ ի ն շ ա ն ա կ ա ծ տ Ե դ ա կ ա ն մ ա կ ա ր դ ա կ ի ն Ե ր կ ա յ ա ց ու ց ի չ ն Ե ր ը): Ի շ խ ա ն ու թ յ ա ն ո չ \$ ո թ մ ալ կ առ ու ց վ ա ծ ք ի մ ա ս Ե ն կ ա գ մ ու մ տ ա ր ք Ե ր ք ա դ ա ք ա կ ա ն \$ թ ա կ ց ի ա ն Ե ր ը , ո թ ո ն ք ի ս լ ա մ ա կ ա ն պ Ե տ ու թ յ ա ն ք ա դ ա ք ա կ ա ն հ ա մ ա կ ա ր գ ու մ փ ո խ ա ր ի ն ու մ Ե ն ք ա դ ա ք ա կ ա ն կ ու ս ա կ ց ու թ յ ու ն ն Ե ր ի ն և ք ա դ ա ք ա կ ա ն ք ա ն ա վ Ե ճ ի ի ն ս տ ի տ ու տ ը : Վ Ե ր ջ ի ն ն Ե ր ը ք ա դ ա ք ա կ ա ն ու թ յ ա ն օ թ ա կ ա ր գ ի ս ա հ մ ա ն մ ա ն առ ա ն ց ք ա յ ի ն հ ա ր թ ա կ ն Ե ր Ե ն : Ի Ի Յ - ու մ , ը ս տ հ Ե դ ի ն ա կ ի , ք ա դ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա յ ի հ ա վ ա ք ա գ թ մ ա ն ք ա դ ա դ թ ի չ ն Ե ր ու մ կ ա ր և ո թ Ե ն ն ա ն ա ն ձ ն ա կ ա ն կ ա պ Ե ր ը (ը ը ջ ա պ ա տ) և ն Ե պ ո տ ի գ մ ը ⁷⁸:

Յ Ե տ խ ո թ ի թ դ ա յ ի ն Ե ր կ թ ն Ե ր ու մ ք ա դ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա յ ի հ ա վ ա ք ա գ թ մ ա ն խ առ ը մ ո դ Ե լ ի առ ա ն ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու ն ն Ե ր ը վ Ե թ հ ա ն Ե լ ու առ ու մ ո վ ա ն դ թ ա դ ա ր ձ Ե լ Ե ն ք ն ա ն ք ա դ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա յ ի հ ա վ ա ք ա գ թ մ ա ն մ ո տ ի վ ա ց ի ո ն դ թ դ ա պ ա տ ճ առ ն Ե թ ի վ Ե թ լ ու ծ ու թ յ ա ն ը : Ռ ու ս հ Ե դ ի ն ա կ Ռ .Պ .Գ ի ն գ ա գ ո վ ը ա յ դ պ ի ս ի Ե ր կ ու դ թ դ ա պ ա տ ճ առ ն Ե թ Է առ ա ն ձ ն ա ց թ Ե լ ` գ ո թ ձ առ ու թ ա յ ի ն (\$ ու ն կ ց ի ո ն ա լ) և ա թ ժ Ե ք ա յ ի ն : Առ ա ջ ի ն ի հ ի մ ք ու մ , ը ս տ հ Ե դ ի ն ա կ ի , ը ն կ ա ծ Է լ ո յ ա լ ու թ յ ա ն ս կ գ ք ու ն ք ը , ի ս կ Ե ր կ թ ո թ դ ու մ ` գ ա դ ա փ ա ր ա կ ա ն ը : Յ Ե դ ի ն ա կ ի պ ն դ մ ա մ ք , գ ո թ ձ առ ու թ ա յ ի ն ի դ Ե պ ք ու մ ք ա դ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա յ ի ա ն դ ա մ Ե ն դ առ ն ու մ մ ա ր դ ի կ , ո թ ո ն ք , չ ու ն Ե ն ա լ ո վ ա թ ժ Ե ք ա յ ի ն ը ն դ հ ա ն ու թ հ ա մ ա կ ա ր գ , հ ա ր մ ա ր վ ու մ Ե ն ք ա դ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա յ ի ն : Ա յ ն ն մ ա ն Է ք ա դ ա ք ա կ ա ն առ և տ թ ի , ք ա ն ի ո թ ք ա դ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա ն հ ա վ ա ք ա գ թ վ ու մ Է փ ո խ հ ա մ ա ձ ա յ ն ու թ յ ա ն (կ ո ն ս Ե ն ս ու ս ի) շ ու ը ջ ի ն տ Ե գ թ մ ա ն մ ի ջ ո ց ո վ , ի ս կ մ ո տ ի վ ա ց ի ա ն կ ա ր ի Ե ր ա յ ի ն ա ճ ն Է : Յ ա վ ա ք ա գ թ մ ա ն ա թ ժ Ե ք ա յ ի ն դ թ դ ա պ ա տ ճ առ ը գ ա դ ա փ ա ր ն

⁷⁸ Տ Ե ՛ս **Rakel** E.P. ն շ վ .ա շ խ .Է ջ 65:

Է, դրա շուրջ ինտեգրումը, իսկ մոտիվացիան՝ ծառայելը, գործին նվիրվածությունը: Հավաքագրման գաղափարական հիմքերին անդրադարձել է դեռևս գերմանացի սոցիոլոգ Մ.Վեբերը: Վերջինը կարծում էր, որ քաղաքական էլիտան պետք է հավաքագրվի գաղափարական հիմքով, իսկ եթե դաբացակայում է, քաղաքականությունը մարդիկ լինում են երկու տեսակի՝ **պատահական** (occasional politicians) և **սիրողական** (avocational politicians)⁷⁹: Առաջինը ընտրական իրավունքից օգտվողներն են, իսկ երկրորդը՝ քաղաքականապես ակտիվ, ընդհանուր շահեր հետապնդող մարդիկ, որոնք ձգտում են զբաղեցնել իշխանական պաշտոններ: Ինչպես տեսնում ենք, քաղաքական էլիտայի հավաքագրման մոդելի արդյունավետությունը կախված է նաև մոտիվացիոն դրդապատճառներից, որոնցից ընդունելին գաղափարականն է, եթե նպատակը արհեստավարժ էլիտա ձևավորելն է:

Նշված մոտիվացիոն դրդապատճառներին անդրադարձն անիմաստ կլիներ, եթե չլիներ քաղաքական էլիտայի հավաքագրման այսպես կոչված **«ցանցային» մոդելը**: Ցանցային մոդելը կիրառվում է այսօր ամբողջ աշխարհում, բայց դրա արդյունավետությունը կախված է նրանից, թե ինչպիսի քաղաքական ու կառավարման համակարգում է այն կիրառվում: Ըստ ուսումնասիրության, ցանցային մոդելի հիմքում սոցիալական կապերի և հարաբերությունների ստեղծման գաղափարն է ընկած: Ամերիկացի պրոֆեսոր Մ.Ուրբանի կարծիքով, այս մոդելը կիրառվում է զարգացած ժողովրդավարական երկրներում: Հեղինակը, մասնավորապես նշում է, որ ինստիտուցիոնալ կայուն համակարգ ունեցող երկրներում, որտեղ «խաղի կանոնները» ենթադրում են քաղաքական հավասարություն ու

⁷⁹ Տե՛ս From Max Weber: *Essays in Sociology* /transl. and edit. with an Introduction by H.H.Gerth and C.Wright Mills/, *A Galaxy Book*, Oxford Un. Press, New York, 1958, էջ 50:

մրցակցություն, ցանցային մոդելը բավականին արդյունավետ է գործում⁸⁰: Չարևմտականացված երկրներում նշված մոդելի կիրառման փորձի ուսումնասիրությունը, մի շարք հեղինակների կարծիքով, ցույց է տվել, որ այն արդյունավետ է: Ոչ մրցակցային համակարգերում իշխանական ցանցերը (power networks) կառուցվում են անձնավորված հարաբերությունների միջոցով՝ ձևավորելով անձնական նվիրվածություն, էմոցիոնալ կապ (emotional ties) և համակարգային այլ հատկանիշներ⁸¹: Վերջինն, իր հերթին նպաստում է քաղաքական էլիտայի վերարտադրությունը՝ դուբլիկատիվ արդյունքով (էֆեկտով):

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հավաքագրման ցանցային մոդելը արևմտա-եվրոպական քաղաքագիտական դիսկուրս է բերել քաղաքական էլիտայի ներխմբային ուսոցիալական ինտեգրման, միջէլիտային հարաբերությունների մասին խնդիրները: Բրիտանացի քաղաքագետ Դ.Յելդը կարևորել է քաղաքական էլիտայի հավաքագրման մրցակցային և հավասար պայմանների ստեղծումը, այդ կերպ նշելով, որ հավաքագրումն ու պետական կառավարումը փոխադրում են⁸²: Ժողովրդավարական կառավարման տարբեր մոդելների հիման վրա այդ կապն իրենց հետազոտություններում ցույց են տվել հեղինակներ Վ.Գելմանը, Ջ.Յիգլին, Յ.Պակուկիս, Ա.Ի.Սոլովյովը և ուրշներ⁸³:

⁸⁰ Տե՛ս **Urban M.** Cultures of Power in Post-Communist Russia: An Analysis of Elite Political Discourse, Cambridge Univ. Press, Santa Cruz, 2010, էջ 26:

⁸¹ Տե՛ս **Куценко О.Д.** Общество неравных. Классовый анализ неравенства в переходном обществе. Подходы западной социологии. Издательский центр Харьковского национального университета им. В. Н. Каразина, Харьков, 2000, էջ 106-107; **Castells M.** A Network Theory of Power, International Journal of Communication 5, 2011, էջ 773-787, <https://faculty.georgetown.edu/irvinem/theory/Castells-Network-Power-2011.pdf>:

⁸² Տե՛ս **Held D.** Models of Democracy, by Polity Press, UK and USA, 2006, էջ 36-40: David Held's Models of Democracy: A Review of Chapter 5. Compatative Elitism and the Technocratic Vision, by R.G.McGillivray, November 28, 2006, էջ 1-8, http://rgmcgillivray.com/images/Competitive_elitism_and_the_technocratic_vision.pdf:

⁸³ Տե՛ս **Гельман В.Я.** Трудное возрождение российской оппозиции, Pro et Contra, январь-апрель, 2014, էջ 106-123, http://carnegieendowment.org/files/ProEtContra_62_106-123.pdf; **Гельман В. Я.** Политические основания «недостойного правления» в постсоветской Евразии: наброски к исследовательской повестке, Издательство Европейского университета в Санкт Петербурге, «Полития», Санкт-Петербург, 2016: **Соловьев А.И.** Формирование элит в механизмах государственной

Կառավարման անարդյունավետության տեսանկյունից Ջ.Րիգլին և Յ.Պակուլսկին քննադատել են ինտեգրված էլիտաները ԿԱԵ երկրներում, նշելով, որ ձևավորված կայուն կապերն ու հարաբերությունները թուլացնում են մրցակցությունը: Յեղիսակներն արդյունավետ չեն համարում նաև քաղաքական էլիտայի մեկուսացումը, որը տանում է դեպի ամբողջատիրություն⁸⁴: Այս մոտեցումներից կարելի է միայն հետևություն անել, որ ինտեգրման ընդունելի եղանակը վերոնշյալ բոլոր մակարդակներում օպտիմալ կապերի հաստատումն է հարաբերականորեն ինքնուրույն սոցիալական օբյեկտների (անհատների, կազմակերպությունների, միությունների) և քաղաքական էլիտայի միջև, որոնք թույլ են տալիս հավասարակշռված պահել համակարգը:

Յավաքագրման մոդելների այս կամ այն գծերը կիրառելի են նաև ՅՅ-ում քաղաքական էլիտայի համար, թեև Օ.Գաման Գոլտվիսան այն հավաքագրման խառը մոդել ունեցող երկրների շարքին է դասել: Վերջինը փաստել է նաև Մ.Մարգարյանը՝ նշելով, որ ՅՅ-ում անկախությունից հետո ձևավորվել է խառնածին վարչակարգ կամ «դելեգատիվ ժողովրդավարություն»: Յեղիսակն այս առիթով նշել է. «Քաղաքական դերակատարներից մեկի գերակայության և ոչ ֆորմալ ինստիտուտների իշխման պայմաններում ծագող «ընտրանիների համագործակցությունը» նպաստել է խառնածին վարչակարգերի ձևավորմանը»⁸⁵: Անկախության առաջին տարիներից, ըստ ուսումնասիրության, ՅՅ քաղաքական էլիտայի հավաքագրման ամենագործուն

власти и управления, Материалы научного семинара, Научный эксперт, Москва, 2010, Вып. 2(32), с. 13: Higley J., Pakulski J. *Elite Power Games and Democratic Politics in Central and Eastern Europe*, GeoJournal Library, Springer, 2000:

⁸⁴ Տե՛ս Higley J., Pakulski J. նշվ. աշխ., էջ 111:

⁸⁵ Տե՛ս Մարգարյան Մ. Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները ՅՅ-ում, «Պետական ծառայություն», Երևան, 2006, էջ 308-309:

ուղիները եղել է իշխանականը: 1996 թվականից՝ նախագահի ինստիտուտի ձևավորումից հետո, որպես գործընթացի տրամաբանական շարունակություն քաղաքական իշխանության կենտրոնացմանը զուգընթաց ձևավորվել է մոնոփերարխիկ քաղաքական էլիտա՝ ամրապնդելով դարձյալ քաղաքական էլիտայի հավաքագրման ուղիներին սակավուն թյունն ու կլանային-օլիգարխիկ կապերը: 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ՀՀ փոփոխված Սահմանադրությանը խորհրդարանի դերի բարձրացման միտումներին զուգահեռ ներդրվել են քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի և կառավարման վերահսկողության համապատասխան ինստիտուտներ (Վերահսկիչ պալատի ստեղծումը, Քաղաքացիական ծառայության խորհրդի հիմնումը): Խորհրդարանի դերը բարձրացնելու միջոցով, այդուհանդերձ, չհաջողվեց ակտիվացնել հավաքագրման այլ ուղիներ: Այդ նպատակին չծառայեց համամասնական ընտրակարգով պատգամավորական տեղերի ավելացումը խորհրդարանում (Աժերկրորդ զուգարումից՝ 1999-ից): Բացի վերոնշյալից, ուսունասիրության հիման վրակարող ենք նշել, որ ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրումն իրականացվել է նաև ցանցային մոդելով՝ ելնելով հայ քաղաքագետներ Ա.Խսկանդարյանի, Յ.Միքայելյանի, Ս.Մինասյանի հետազոտությունից: Վերջինը փաստում է քաղաքական էլիտայում ձևավորված իշխանական ցանցերի գոյությունն ու ներխմբային բարձրի տեգրումը⁸⁶: Ինչպես տեսնում ենք, քաղաքական էլիտայի հավաքագրման մոդելը հեռու է զարգացած երկրներում կիրառվող մոդելների կատարելատիպից: Հավաքագրման դասական և պլյուրալ մոդելներն ընդհանրապես չեն էլ

⁸⁶ Տե՛ս **Iskandaryan A., Mikaelian H., Minasyan S.** War, Business and Politics: Informal Networks and Formal Institutions in Armenia, Caucasus Institute, ASCN, Yerevan, 2016, էջ 42:

քննարկվել, ինչը նաև հաստատում է այդ մոդելներին ձգտելու անհրաժեշտությունը:

Ավարտելով քաղաքական էլիտայի հավաքագրման մոդելների ուսումնասիրությունը և վերլուծությունը՝ հարկ է նշել, որ քաղաքական էլիտայի իդեալական և լիարժեք արդյունավետ մոդել գոյություն ունի: Նկարագրված բոլոր մոդելները հենվում են ազգային առանձնահատկությունների վրա: ՀՀ-ում քաղաքական էլիտայի ձևավորման անավարտությունը, ցածր արդյունավետությունը և պետության կերպափոխման հարցում քաղաքական էլիտայի դերը հաշվի առնելով՝ պետք է նշել, որ հավաքագրման արդյունավետ մոդելի ընտրությունը մնում է արդիական: Հաշվի առնելով, որ այսօր գործունեություն գրեթե բոլոր, այդ թվում՝ քաղաքականության պետական կառավարման բնագավառներում, գերակայում է գործառնության օպտիմալ մոդելներ գտնելու մարտավարությունը, ինքնին անիմաստ է դառնում ունիվերսալ /իդեալական մոդելների վերհանման ցանկացած փորձը կամ դրա կրկնօրինակումը: Այդուհանդերձ, մոդելների վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական կառավարման արդյունավետությունը և քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը միմյանց փոխադասման ավորող ու փոխլրացնող երևույթներ են: Այդ մասին են գրում հիմնախնդրով զբաղվող ռուս հեղինակներ Օ.Գամանը, Լ.Սմորգուովը, Ա.Սոլովյովը, Ա.Տոլստոլովը, իսկ արևմտյան տեսաբաններից՝ Պ.Նորթիսը⁸⁷: Վերոնշյալ կապի գոյությունը փաստող հավելյալ հիմնավորումների

⁸⁷ Տե՛ս Գаман-Голутвина О.В., Сморгунов Л.В., Соловьев А.И., Туровский Р.Ф. Эффективность государственного управления в РФ в 2008, էջ 4, <http://www.inop.ru/files/Chapter2.pdf>; Norris P. Stable Democracy and Good Governance in Divided Societies: Do Power Sharing Institutions Work?, J.Kennedy School of Government, Harvard University Cambridge, 11/8/2005, էջ 16-17:

թվում կարելի է նաև ավելացնել և դիտարկել հետևյալները՝

- հասարակությունը շրջանում պետական ինստիտուտներին ու քաղաքական կառույցներին վարկանիշն ու գործունեությունը՝ քաղաքական էլիտայի որակով որոշելու ու պայմանավորելու անհրաժեշտությունը,
- քաղաքական էլիտայի՝ պետականաշինություն և պետական կառավարման համակարգի բարեփոխումներին իրականացման գործընթացը գլխավորելու անհրաժեշտությունը,
- պետական կառավարման մոդելը հասարակությունը զարգացման ուղենիշներին համապատասխանեցնելու էլիտայի կարողությունը,

• պետական կադրային քաղաքականության և ժողովրդավարական ինստիտուտներին ու գործընթացներին միջոցով քաղաքական էլիտայի անդամներին ընտրության և նշանակման համակարգի արդյունավետության գնահատումը: Ամփոփելով մոդելներին

ուսումնասիրությունը, կարծում ենք, որ ՀՀ-ում արագ ժողովրդավարացման ու պետական կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև քաղաքական էլիտայի հավաքագրման մոդելի կատարելագործման համար անհրաժեշտ է.

- ստեղծել քաղաքական էլիտայի հավաքագրման միասնական մոդել առկա մոդելներին համակցություն և լրացուցիչ մշակման միջոցով,
- ընդլայնել հավաքագրման ուղիները, որը հանգեցնելու է քաղաքական էլիտայի ուղղահայաց շարժունություն բարձրացման, բնականոն շրջապտույտի լիարժեք իրականացման՝ թույլ չտալով քաղաքական էլիտայի վերարտադրություն,

- գերակա համարելով ուղղահայաց շարժունությունը՝ զարգացնել նաև քաղաքական էլիտայի հավաքագրման հորիզոնական կողմը՝ «լավագույն ուղեղներին» գտնելու և դանդաղ կարիերային պրակտիկան զարգացնելու համար,
- ստեղծել ընդհանուր հարթակ քաղաքական և հասարակության մյուս էլիտաների համագործակցության, երկխոսության համար՝ նկատի ունենալով, որ արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ են էլիտայի բոլոր տեսակները:

1.3.ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ՅԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՌՆՉՎՈՂ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Քաղաքական էլիտայի հավաքագրման արդի մոդելների ուսումնասիրությունից ելնելով, կարող ենք նշել, որ կառավարման զարգացած փորձ ունեցող երկրների քաղաքական ու կառավարման համակարգում հավաքագրումը ինստիտուցիոնալ հիմքեր ունի: Այդ հիմքերի ուսումնասիրության համար սույն հետազոտության մեջ կարևորվել է այդ ինստիտուտների ձևավորման և գործառնության սահմանադրաիրավական կարգավորումը: Քաղաքական էլիտայի հավաքագրման սահմանադրաիրավական վերլուծության հիման վրա ձևավորվել են ույնիսկ ուսումնասիրության առանձին ուղղություն, որը կոչվում է սահմանադրաիրավական էլիտալոգիա: Վերջինս, ըստ ոլորտի մասնագետների, ուսում-

նասիրում է պետության սահմանադրաիրավական
զարգացումները՝ քաղաքական էլիտայի հավաքա-
գրման գործընթացը ինստիտուցիոնալացնելու և
օրենսդրումը կարգավորելու համատեքստում⁸⁸։
Սահմանադրական իրավունքի մասնագետ Ա.Միշինն
ընդգծել է հասարակությունն մեջ սահմանադրու-
թյան կարևորության բարձր գիտակցությունն ու
այն քաղաքական ուժերի նպատակահարմարության,
քաղաքական խնդիրներ լուծելու գործիք
չդարձնելը⁸⁹։ Քաղաքական համակարգի կայունու-
թյունը, անվտանգությունը և պետական կռավարման
արդյունավետությունը ապահովելու
տեսանկյունից, ինչպես ցույց տվեց
ուսումնասիրությունը, սահմանադրաիրավական
կարգավորումը սոցիալական ու քաղաքական
դինամիկան փոխելու ժողովրդավարական ճանապարհ
է և քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի
ուսումնասիրության կարևոր քաղադրիչ ։

Արդի ժողովրդավարական սահմանադրական
արժեքանությունը, անկախ կռավարման ձևից,
երաշխավորում է քաղաքական էլիտայի ձևավորման և
գործառնության կայունությունը, ինչից ելնելով՝
քաղաքական էլիտայի հավաքագրման ինստիտու-
ցիոնալ առաջնային պահանջներն են **քաղաքացիական
հասարակության ստեղծումն ու կայացումը**։ Կայուն
քաղաքական համակարգերում քաղաքացիական հասար-
ակության ինստիտուտներին մասնակցություն դերը
քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացին
նշվում էր նաև ցանցային մոդելում, ըստ որի
ինստիտուցիոնալ կապերն ու հարա-
բերությունները թույլ չեն տալիս, որ
քաղաքացիական հարթակը բացառվի այդ

⁸⁸ Տե՛ս **Баранов П.П., Овчинников А.И., Мамычев А.Ю.** Элиты и становление конституционализма: социокультурный вектор развития//Территория новых возможностей. Вестник Владивостокского государственного университета экономики и сервиса. 2016. № 4, էջ 9-17:
⁸⁹ Տե՛ս **Мишин А.А.** Конституционное (государственное) право зарубежных стран, 14-е изд., Москва, 2009, էջ 15:

գործընթացից: Հարկ ենք համարում նշել, այդուհանդերձ, որ քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի հետ քաղաքացիական հասարակության կապը անուղղակիորեն է արտահայտվում: Ուսումնասիրությունն ընդհանուր է տվել, որ որպես քաղաքական էլիտայի հավաքագրումը կարգավորող սահմանադրաիրավական պահանջ՝ այն կարևորվում է երկրներում, որտեղ շատ են քաղաքացիական ընդվզումները, օրինակ՝ հետընտրական գործընթացներում: Ռուս հետազոտող Գ.Մ.Միխալեվան բերում է հասարակական կազմակերպությունների (ՀԿ) գործունեության վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների վիճակագրությունը Ռուսաստանում: Ըստ հեղինակի, 2001-ից մինչև 2012 թվականը ընդունվել են բազմաթիվ օրենքներ, որոնցով խստացվել են դրանց՝ ցույցեր անելու իրավունքը քաղաքական նպատակներով⁹⁰: Հիմք ընդունելով այս և բազում այլ փաստեր (այդ թվում՝ Հանրային պալատի ստեղծումը) հեղինակը պնդում է, որ քաղաքացիական հասարակության ինստիտուտների վրա պետության հսկողությունը մեծ է Ռուսաստանում և օրենսդրական կարգավորման դաշտը թույլ չի տալիս դրանք փոխակերպել կայուն ինստիտուտների:

Քաղաքացիական հասարակության ստեղծումը և կայացումը նախևառաջ ենթադրում է, ինչպես գիտենք, հասարակական-քաղաքական միությունների և կազմակերպությունների գործունեությունը ապահովող օրենքների կիրարկում: Որպես ժողովրդավարության հիմնարար ինստիտուտներ՝ դրանք ամրագրված են մի շարք երկրների սահմանադրությունում, ինչպես նաև կարգավորվում են առանձին օրենքներով, չնայած, օրինակ՝

⁹⁰ Տե՛ս **Михалева Г.М.** Партии и гражданское общество: Алгоритмы взаимодействия /Партии и выборы: вчера, сегодня, завтра, /под ред. Ю.Г.Коргунюка и Г.М. Михалевой/, КМК, Москва, 2012, էջ 75:

Ավստրալիայում, ԱՄՆ-ում, Շվեյցարիայում կուսակցություններին մասին օրենքներ չեն ընդունվել⁹¹: ԱՄՆ Սահմանադրությունում (այդ թվում կատարված փոփոխություններում) կուսակցությունները չեն հիշատակվում՝ համարելով այն մասնավոր ընտրություն հարց: Մինչդեռ ԿԱԵ երկրներում խորհրդային միակուսակցական իշխանության վերացումից ի վեր, հասարակական-քաղաքական կազմակերպություններին, մասնավորապես քաղաքական կուսակցություններին, ընտրություններին արագ ինստիտուցիոնալացման համար կարևոր քայլ էր խորհրդարանական կառավարման ձևին անցումը, որը ոչ միայն կուսակցություններին իրավական կարգավիճակ է տվել՝ լեգալացնելով դրանց գործունեությունը, այլև դրանով հակազդել է նախկին համակարգին: Այդ մասին է փաստում նաև ամերիկացի փորձագետ Յ.Բուգայսկին՝ նշելով, որ մոնիզմից անցումը պլյուրալիզմի անհնար կլիներ ամեն կուսակցություններին ինստիտուցիոնալացման և խորհրդարանական կառավարման ձևին անցնելու⁹²: Մենք ուշադրություն ենք հրավիրում ԿԱԵ երկրներում հավաքագրման գործընթացի սահմանադրաիրավական և օրենսդրական կարգավորման փաստի վրա, քանի որ կարծում ենք, որ այդ գործընթացը նպաստել է պլյուրալիզմի, քաղաքական հանդուրժողականության մշակույթի ձևավորմանը, նամանավանդ եթե հաշվի առնենք այդ փորձի բացակայությունը խորհրդային տարիներին: Ի տարբերություն խորհրդարանական կառավարման ձևն ընտրած ԿԱԵ երկրների, ԱՊՅ երկրների մեծ մասը անկախությունից հետո նախընտրել են նախագահական կառավարման ձևը, որն էականորեն

⁹¹ Տե՛ս Основы теории политических партий, Учебное пособие /под. ред. Заславского С.Е./, «Европа», Москва, 2007, էջ 153:

⁹² Տե՛ս Bugajski J. Political Parties of Eastern Europe: A Guide to Politics in the Post-Communist Era: The Center for Strategic and International Studies, New York and London, 2002, էջ 1-2:

դանդադեցրել է կուսակցությունների և գաղափարական կազմակերպությունների համակարգի ձևավորումը:

Լիբերալ-ժողովրդավարական քաղաքական համակարգ ունեցող երկրներում կուսակցությունների գործունեությունը կարգավորող օրենսդրություն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ձգտում է բարձրացնել այդ ինստիտուտի արհեստավարժությունը (պրոֆեսիոնալությունը): Ասվածի հիմնավոր փաստեր կարող են լինել կուսակցությունների պետական ֆինանսավորման, ընտրական գործընթացներին մասնակցության օրենսդրական կարգավորումների վերաբերյալ հիմնադրույթների վերլուծությունը: Այսպես, օրինակ՝ պետությունից լուրջ սուբսիդիաներ կուսակցությունները ստանում են Գերմանիայում, Ֆրանսիայում: Մեծ Բրիտանիան կուսակցությունների ֆինանսավորում է տրամադրում անգամ քաղաքականության ոլորտում հետազոտություններ կատարելու համար: Յետազոտողներ Բ.Ռեյլիի և Պ.Նորդլանդի կարծիքով, պետական ֆինանսավորումը այդ երկրներում երաշխավորում է, որ կուսակցությունների գործունեությունն աննպատակ չլինի, այլ ուղղված լինի սոցիալական-քաղաքական կյանքի խնդիրները լուծելու գաղափարական և ծրագրային աշխատանքների իրականացմանը⁹³: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կուսակցությունների պետական ֆինանսավորման խնդիրը միանշանակ չի կարգավորվում բոլոր երկրներում և այն պայմանավորված է մեծ մասամբ կոռուպցիոն ռիսկերի մեծացման, բյուջետային միջոցներ չունենալու խնդիրներով: Ինչ վերաբերում է կու-

⁹³ Տե՛ս Reilly B., Nordlund P. Political Parties in Conflict-Prone Societies: Regulation, Engineering and Democratic Development, /ed. by Benjamin Reilly and Per Nordlund/, Centre for Democratic Institutions (CDI), International Institute for Democracy and Electoral Assistance (IDEAO, and United Nations University (UNU), 2008, էջ 35:

սակցություններին ընտրական գործընթացներին մասնակցության օրենսդրական կարգավորմանը, ապա այս հարցում ևս երկրներին միջև կան տարբերություններ: Արևմտավրոպական երկրներում մասնակցությունը կարգավորող օրենսդրության հիմքում ընկած է քաղաքական ու պետական համակարգի ռացիոնալացման խնդիրը: Կուսակցական համակարգի ռացիոնալացման խնդրի մասին նշել է նաև Ս.Յանդիգտոնը՝ ընդգծելով, որ կուսակցությունները իռացիոնալ են իրենց բնույթով և շահագրգռման տարբեր մոտիվներ ունեն, ինչը հաճախ արգելակում է արդյունավետ աշխատելու հնարավորությունը⁹⁴: Ռացիոնալ ինստիտուցիոնալ համակարգը պահելու առումով հետաքրքիր փորձ ունի Գերմանիան, որտեղ կայացած կուսակցություններից բացի քաղաքական էլիտայի հավաքագրմանը ընտրական գործընթացներին միջոցով մասնակցում են նաև փոքր և մեծ ընտրազանգված չունեցող կուսակցությունները: Գերմանական կուսակցական օրենսդրությամբ ընտրական գործընթացներին պարբերաբար չմասնակցած կուսակցությունները լուծարվում են: Ըստ այդմ, կուսակցական համակարգի ռացիոնալացման գերմանական օրենսդրությունը դրանով առավել արդյունավետ է դարձնում կուսակցական ինստիտուտի գործառնությունը: Օրինակ, 2013թ. Բունդեստագի ընտրություններին տվյալներով, ընտրացուցակներ են ներկայացրել 30 կուսակցություններ, իսկ միամանդատ ընտրական շրջաններում տեղերի համար պայքարել են նաև ընտրական միջանի միություններ⁹⁵: Վերոնշյալով հանդերձ ուսումնասիրություններն այս խնդրի շուրջ ցույց են տալիս, որ այլ երկրներում

⁹⁴ Տե՛ս Խանտինգտոն Ս. Политический порядок в меняющихся обществах, «Прогресс-Традиция», Москва, 2004, էջ 398:
⁹⁵ Տե՛ս Итоги выборов в Германии для партий: три поражения и три победы, 24.09.2017, www.dw.com:

կոլսակցություններին մասնակցությունը կարգավորող օրենսդրությունը պարզապես սահմանափակում է կոլսակցություններին գործունեությունը և մասնակցությունը քաղաքական էլիտայի հավաքագրմանը: Այդպիսի սահմանափակումներ կարող են լինել ընտրաշեմերի փոփոխությունը, որը հաճախ կասեցնում է ընդդիմադիր կոլսակցություններին մոտքը էլիտա: Խնդրով զբաղվող ռուս հեղինակ Ա.Տրոլևտյագինը բերում է Ռուսաստանի օրինակը: Ռուսաստանում 2003 թ. ընտրություններին շեմը 5%-ից 7%-ի բարձրացելու համար ընդունվել է դաշնային օրենք, որն, ըստ հեղինակի, սահմանափակել է փոքր կոլսակցություններին մոտքը խորհրդարան: Յեղինակը նաև հավելում է, որ ընտրական շեմի փոփոխությունը խոչընդոտել է խորհրդարանում ընդդիմադիր կոլսակցություններին մոտք գործելուն, որովհետև միանալով խոշոր կոլսակցություններին՝ փոքր կոլսակցությունները կորցրել են իրենց ինքնավարությունը, իսկ չմիանալու դեպքում բացառվել է դրանց մոտքը խորհրդարան, ապա՝ նաև քաղաքական էլիտա⁹⁶: Ռուս հեղինակներ Վ.Ն.Շիլովի և Ա.Պ.Ռիլկինայի վերլուծությունը փաստում է, որ 2011թ. 5%-անոց շեմին վերադառնալու քաղաքական որոշումը պայմանավորված էր մեկ ազդեցիկ, տիրապետող քաղաքական կոլսակցությամբ համակարգի և պետական կառավարման անարդյունավետությամբ⁹⁷: Ամփոփելով կարող ենք միայն հավելել, որ վերոնշյալ իրողությունները բավարարիմքեր են տալիս եզրակացնելու, որ քաղաքական էլիտայի

⁹⁶ Տե՛ս **Трунтягин А.А.** Процессы формирования доминирующей партии в постсоветской России, «Вестник Томского государственного университета», Философия. Социология. Политология, 2011, №3(15), էջ 98 http://journals.tsu.ru/philosophy/&journal_page=archive&id=520&article_id=25340 :

⁹⁷ Տե՛ս **Шилов В.Н., Рылкина А.П.** Динамика политической конкуренции в России в постперестроечный и постсоветский периоды, Серия История. Политология. Экономика. Информатика, 2013, №15 (158), Выпуск 27, էջ 169, <https://core.ac.uk/download/pdf/151221184.pdf> :

հավաքագրման գործընթացի կարգավորումը կուսակցությունների օրենսդրության մասով արևմտեվրոպական երկրներում կուսակցությունը սահմանում է որպես պրոֆեսիոնալ ինստիտուտ: Մինչդեռ ռուսական փորձը, որի հետ նմանություն ունեն նաև ԱՊՅ երկրները, ցույց է տալիս, որ կուսակցությունները լիարժեք չեն կատարում դեռևս պրոֆեսիոնալ ինստիտուտի դերը:

Կուսակցությունը որպես պրոֆեսիոնալ ինստիտուտ թրծվում է ընտրական գործընթացում, սակայն այդ ինստիտուտի դերը պայմանավորող գործոն է նաև ընտրական համակարգը: Կուսակցության որպես պրոֆեսիոնալ ինստիտուտի դերը կարևոր է քաղաքական էլիտայի կադրային բազայի ստեղծման առումով (սամենք համարել ենք առաջնային և այդ պատճառով մեր հետազոտությունը հաջորդ գլխում կենտրոնացրել ենք մեխանիզմների ուսումնասիրության վրա), բայց քաղաքական էլիտայի հավաքագրումը իրականացվում է ընտրահամակարգի կողմից սահմանված տրամաբանության մեջ: Ընտրական համակարգի որոշիչ դերը առաջադեմ ժողովրդավարական երկրներում քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացում ընդգծել է ամերիկացի հայտնի հետազոտող Պ.Նորիսը⁹⁸, իսկ Գերմանիայում ընտրահամակարգի որոշիչ դերը տեղական և ազգային մակարդակների քաղաքական էլիտայի հավաքագրմանը նշել է Մ.Ի.Չագիրդոլիսը, որով սահմանել է էլիտայի ձևավորման իրավական և կազմակերպչական հիմքերը⁹⁹: Ընտրահամակարգերի ուսումնասիրությունը փաստում է, որ դրա

⁹⁸ Տե՛ս **Norris P.** Passages to Power: Legislative Recruitment in Advanced Democracies, Cambridge University Press, Cambridge, 1997, էջ 3:

⁹⁹ Տե՛ս **Загидулин М.И.** ФРГ: избирательная парадигма в конкурентной среде выборов // Вестник Института мировых цивилизаций, 2012, № 5, էջ 27-31, <http://old.tisbi.ru/assets/Site/Science/--2014/frg.pdf>:

առանձնահատկությունները էկախված քվեարկություն արդյունքների հաշվարկը: Այդ առանձնահատկությունները ցույց տալու համար վերլուծել ենք մեծամասնական (մաժորիտար), համամասնական և խառը ընտրահամակարգերը: Մինչև 19-րդ դարի կեսերը արևմտեվրոպական երկրների մեծ մասում գործել է մեծամասնական ընտրահամակարգը՝ հիմնականում կուսակցությունների զարգացած չլիսելու պատճառով: Մեծամասնական ընտրահամակարգով անցկացվող ընտրություններում փոքր կուսակցության խորհրդարան անցնելու հնարավորությունը քիչ է: Այս առումով հետաքրքիր է Ֆրանսիայի օրինակը, որտեղ կիրառվում է հետևյալ պրակտիկան. խոշոր կուսակցությունները այսպես կոչված «ոչ համակարգային կուսակցությունների» մուտքը խորհրդարան թույլ չտալու համար դիմում են համագործակցության՝ միայնակ թողնելով փոքր կուսակցությանը: Ֆրանսիայի հինգերորդ հանրապետության պատմության մեջ 2017թ. ընտրությունները բացառիկ էին, որովհետև համակարգային կուսակցություն չհամարվող Լե Պենի ընդդիմադիր կուսակցությունն առաջին անգամ անցավ խորհրդարան, սակայն չկարողացավ ձևավորել խորհրդարանական խմբակցություն անհրաժեշտ մանդատներ չունենալու պատճառով (պահանջվող 15-ից 8 մանդատ)¹⁰⁰: Ֆրանսիայի օրինակը ցույց տվեց, որ փոքր կուսակցությունը կարող է մեծամասնականով անցնել խորհրդարան, չնայած նրան, որ խորհրդարանական խմբակցությունն այնուամենայնիվ, չհաջողվեց ձևավորել: Այդուհանդերձ, մեր կարծիքով, այն Ֆրանսիական խորհրդարանի համար ունեցավ նաև դրական

¹⁰⁰ Տե՛ս **Выборы в парламент Франции: почему Марин Ле Пен не смогла взять реванш,** https://www.pravda.ru/world/europe/european/13-06-2017/1337845-france_parliament-0/:

նշանակություն: Ի դեպ, այդ մասին գրել է նաև
Եվրոպական հետազոտությունների մասնագետ
Վ.Պ.Ժուրավելը, նշելով, որ 2017թ. ընտրությունների
արդյունքում ֆրանսիական քաղաքական էլիտան
թարմացվեց¹⁰¹:

Ընտրությունների և ընտրական համակարգերի
օրենսդրական փոփոխությունների
ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին
տասնամյակում նույնիսկ կայուն
երկկուսակցական համակարգեր դասական իմաստով
չկան և օրենսդրական փոփոխությունները տեղ են
բացում փոքր կուսակցությունների համար:
Կուսակցական համակարգի զարգացմանը գուցե թաց
Եվրոպական երկրները անցել են լրիվ համամաս-
նական ընտրակարգի, ընդ որում՝ համամասնական
ընտրակարգով են ձևավորվում այսօր և՛ խորհր-
դարանը, և՛ տեղական ինքնակառավարման մարմիննե-
րը: Մեծամասնական ընտրահամակարգից անցումը
համամասնականին, ըստ ուսումնասիրության,
նպատակ ուներ բարձրացնել ու
կուսակցությունների դերը քաղաքական էլիտայի
հավաքագրման գործընթացում: Գերազանց ընտրական
օրենսդրություն և կուսակցական համակարգեր
ունեն Սկանդինավյան երկրները, Շվեյցարիան,
քանի որ քաղաքական էլիտայի հավաքագրմանն
առնչվող սահմանադրաիրավական կարգավորումը
այդ երկրներում օրինակ է ծառայում ամբողջ
աշխարհի համար: Համամասնական ընտրահամակարգի
կիրառումը քաղաքական էլիտայի կազմում
փոփոխություններ է բերել նաև Ռուսաստանում:
Օրինակ՝ 2008թ. ՌԴ Բելգորոդ քաղաքում տեղի
ունեցած ընտրությունների արդյունքով բոլոր 27
մանդատները ստացան «Եդինայա Ռոսիա» կուսակ-

¹⁰¹ Տե՛ս Ջուրավել Վ.Պ. Итоги парламентских выборов и влияние терроризма на избирателей Франции, /Выборы во Франции 2017: итоги и перспективы, Доклады Института Европы, Инт. Европы РАН, 2017, No 347, էջ 45:

ց ու թյան պատգամավորները՝ բացառելով այլ կուսակցությունների ներկայացուցչությունը: Մինչդեռ 2010թ. ՌԴ Տուլայի քաղաքային ընտրությունները, որոնք անցկացվել են միայն համամասնական ընտրակարգով, 35 մանդատներից 16-ն է միայն ստացել «Եդինայա Ռոսիա» կուսակցությունը՝ հնարավորություն տալով խորհրդարանում ներկայացուցչություն ունենալ նաև այլ կուսակցությունների՝ «Կոմունիստական կուսակցություն»՝ 6 մանդատ, «Սպրավեդլիվայա Ռոսիա»՝ 6 մանդատ, «Լիբերալ-դեմոկրատական կուսակցություն»՝ 3 մանդատ, «Յաբլոկո»՝ 4 մանդատ¹⁰²:

20-րդ դարից քաղաքական էլիտայի հավաքաբան առնչվող սահմանադրաիրավական կարգավորման շրջանակներում մեծամասնական և համամասնական ընտրահամակարգերը կիրառվում են նաև միասին (խառը ընտրահամակարգ)՝ ելնելով պետական կառավարման առանձնահատկություններից: Ձ.Սարտորին նմանատիպ ընտրահամակարգի ստեղծումը բացատրել է մեծամասնականի և համամասնականի առավելություններով ու թերություններով¹⁰³: Ըստ հեղինակի, երիտասարդ ժողովրդավարական երկրներում խառը ընտրահամակարգը պետական կառավարման արդյունավետության տեսանկյունից արդյունավետ է դեռ, որովհետև նպաստել է կուսակցությունների տարածքային միավորների ձևավորմանը: Ինչ վերաբերում է զարգացած ժողովրդավարություններին, ապա պատահական չենք համարում, որ խառը ընտրահամակարգը արդյունավետ է գործում հենց Գերմանիայում (Բունդեսթագի ընտրությունները), ինչը մեր կարծիքով, պայմանավորված է ոչ միայն կառավարման

¹⁰² Տե՛ս Шилов В.Н., Рылкина А.П. և շվ.աշխ., էջ 170:
¹⁰³ Տե՛ս Sartori G. Comparative Constitutional Engineering: An Inquiry into Structures, Incentives and Outcomes, New York Univ. Press, New York, 1997, էջ 5-7:

Երկմակարդակ համակարգով, այլ նաև պրոֆեսիոնալ մոդելով քաղաքական Էլիտայի հավաքագրման փորձով: Գերմանիայի և արևմտաեվրոպական, սկանդինավյան երկրներում քաղաքական Էլիտայի հավաքագրմանն առնչվող ընտրահամակարգերի օրենսդրական կարգավորման վերաբերյալ գնահատականներ տալիս հարկավոր է արձանագրել մի փաստ. ունենալով բարդ պետական կառավարման համակարգ մշակվել է քաղաքական Էլիտայի հավաքագրմանն առնչվող ընտրական օրենսդրությունը, որի նպատակն է սոցիալական ներկայացուցչության ու ինստիտուտների կայացման միջոցով հասնել բարձր արդյունավետության:

Արդյունավետության հասնելու նպատակից ելնելով՝ քաղաքական Էլիտայի հավաքագրման սահմանադրաիրավական կարգավորումների ուսումնասիրության առանցքը սույն աշխատանքում չի սահմանափակվում միայն կուսակցության և ընտրահամակարգի օրենսդրությամբ: Չաշվի առնելով, որ քաղաքական Էլիտայի հավաքագրման գործընթացում որոշիչ է նաև պետական կառավարման համակարգում աշխատելու և փորձ ունենալու պայմանը, սույնով կարևորել ենք հանրային (պետական) ծառայության ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը: Չանրային ծառայության ինստիտուտը արևմտաեվրոպական երկրներում և ԱՄՆ-ում ներդրվել է 20-րդ դարի կեսերից, քանի որ հիմնարար օրենսդրական կարգավորումներն ընդունվել են հենց այդ ժամանակ: Այդ պահից ի վեր, հանրային ծառայության օրենսդրությունը մշտապես կատարելագործվել է, ինչը հիմքեր է տալիս կարծելու, որ հանրային ծառայության ինստիտուտը ոչ միայն ընդլայնել է քաղաքական Էլիտայի

հավաքագրման կադրային ավագանը, այլև մեծ
 ներդրում է ունեցել քաղաքական էլիտայի
 պրոֆեսիոնալիզմը բարձրացնելու տեսանկյունից:
 Յանրային ծառայությունն այսօր ընդգրկում է
 պետական կառավարման համակարգի լայն օղակ,
 որում ինչպես իրավացիորեն նշել է ռուս հեղինակ
 Ա.Ի.Վասիլենկոն, հատուկ խումբ է իրենից ներկայաց-
 նում քաղաքական պաշտոնները¹⁰⁴:
 Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քաղաքական
 պաշտոնները թեև պաշտոնապես սահմանվում են
 հանրային ծառայության օրենսդրությամբ և
 կազմում են հանրային ծառայության ինստիտուտի
 բարձրագույն շերտը, դրանցում նշանակման և
 ազատման կարգը տարբերվում է հանրային ծառա-
 յողների հավաքագրման ընդհանուր կարգից:
 Քաղաքական պաշտոններին նշանակումն օրինակ՝
 Գերմանիայում կարգավորվում է հետևյալ կերպ.
 «Քաղաքական պաշտոն գբադեցնող անձը քաղաքական
 ուժերի հարաբերակցության փոփոխման դեպքում
 կա՛մ ժամանակավորապես անցնում է թոշակի, կա՛մ
 փոխադրվում հանրային ծառայության այլ պաշտոնի,
 որովհետև քաղաքական պաշտոնյան չի կարող
 չընդունել կառավարության քաղաքական կուրսն ու
 ծրագիրը»¹⁰⁵: Ֆրանսիայում, դարերով եկած
 ավանդույթի համաձայն, քաղաքական պաշտոններին
 նշանակել են պետական ծառայության համակարգից՝
 լոյալության հիմքով¹⁰⁶: ԱՄՆ-ում, քաղաքական պաշ-
 տոններին նշանակումը, ինչպես նշել է Ն.Ի.Տարասովը,
 իրականացվում է քաղաքական ծառայություններ
 մատուցելու մեթոդով և քաղաքական պաշտոններում
 կադրերի փոփոխությունը ունի կուսակցական

¹⁰⁴ Տե՛ս **Василенко И. А.** Административно-государственное управление в странах Запада: США, Великобритания, Франция, Германия: Учебное пособие. Изд.2-е, перераб. и доп., Изд. корпорация «Логос», Москва, 2001, էջ 129-130:

¹⁰⁵ Տե՛ս **Sartorius** Verfassungs und Verwaltungsgesell. Munchen, 1972., էջ 11:

¹⁰⁶ **Dellory D.** The Manager of Public Enterprise in France //The Mandarins of Western Europe. N.Y., 1975, էջ 210-213:

բ ն ու յ թ¹⁰⁷: Քաղաքական պաշտոններին նշանակումը կարգավորող օրենսդրության միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ հանրային ծառայության վերին օղակի օրենսդրական կարգավորումը լիարժեք չէ: Այդ ու հանդերձ, արևմտաեվրոպական երկրներին փորձն ավելի արդյունավետ է պետական կառավարման արդյունավետությունը տեսանկյունից, քան ամերիկյանը:

Արևմտաեվրոպական և ամերիկյան փորձի տարբերության առումով հատկանշական է նաև հանրային ծառայության ինստիտուտի օրենսդրական կարգավորման ձևերը, թեև պետք է նշենք, որ դրանց հիմքում գրեթե նույն սկզբունքներն են: Եվ այսպես, Գերմանիայի հանրային ծառայության օրենսդրության հիմքում, օրինակ, ընկած են երկու գերակա սկզբունքներ՝ բարձր որակավորումն ու աստիճանական կարիերան (հանրային պաշտոններին նշանակումն ու գործունեությունը կարգավորող մայր փաստաթուղթը «Չինովնիկներին մասին» դաշնային օրենքն է, 1971թ.)¹⁰⁸: Նշված օրենսդրական սկզբունքները կարող է փոխել միայն Կադրերի դաշնային կոմիտեն, որը գործում է անկախ¹⁰⁹: Յանային ծառայության ինստիտուտը Ֆրանսիայում կարգավորվում է «Պաշտոնյայի (չինովնիկ) մասին» ընդհանուր օրենքով (1946թ.) և ձևավորվում մասնագիտական պատրաստվածություն հիմքով¹¹⁰: Յանային ծառայության ինստիտուտի իրավական կարգավորման առումով Ֆրանսիայում ակտիվ է վարչական դատարանների դերը: Յանային ծառայության օրենսդրական կարգավորման առանձ-

¹⁰⁷ Տե՛ս **Тарасова Н.И.** Государственные работники США. Москва, 1992, էջ 121-122:

¹⁰⁸ Տե՛ս **Кеник К.И.** Государственная служба Германии, <http://pravo.kulichki.com/dop/otdk/otdk0197.htm>:

¹⁰⁹ Տե՛ս **Бергманн В.** Право и система государственной службы в Германии // Проблемы теории и практики управления. 1992. № 5, էջ 87-88:

¹¹⁰ Տե՛ս **Государственная служба Франции** // Государственная служба основных капиталистических стран, Наука, Москва, 1977, էջ 182-183:

նահատուկ փորձ ունի ԱՄՆ-ն, որտեղ պետական կառավարման արդյունավետությանն ապահովելու տեսանկյունից կարևորվել են մասնագիտացումը, նվիրվածությունը գործին և համակարգին («Քաղաքացիական ծառայության» մասին օրենքը 1970-ականներից մշտապես բարեփոխվել է)¹¹¹: Միևնույն ժամանակ, ամերիկյան հանրային ծառայության առանձնահատկությունն այն է, որ օրենքով այդ ինստիտուտին են վերապահվում քաղաքական գործունեության միշտ քլիզոնություններ, այդ թվում՝ հանրային ծառայողի իրավունքը անդամակցելու քաղաքական կուսակցության կամ քաղաքական կազմակերպության, մասնակցելու քաղաքական քննարկումներին և այլն¹¹²: Նմանատիպ օրենսդրական կարգավորումներ նախատեսված չէ արևմտաեվրոպական երկրների օրենսդրությամբ, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ այն ավելի քիչ քաղաքականացված է, քան ամերիկյանը:

Հանրային ծառայության ինստիտուտի ուսումնասիրությունը այլ երկրներում ցույց է տվել, որ հանրային ծառայության համակարգում իրականացված բարեփոխումներն ու օրենսդրական կարգավորումները մշակվել են արևմտաեվրոպական երկրների և ամերիկյան օրենսդրական համակարգերի հիման վրա: Վերոնշյալ բարեփոխումների արդյունքում 2000-ականներից ի վեր Լատվիայում, Էստոնիայում, Լեհաստանում ընդունվել և գործում են հանրային ծառայության մասին օրենքներ¹¹³: Բոլոր նշված օրինակներում հանրային ծառայության հիերարխիան նույնն է, բայց որոշ երկրներում առկա են պետական

¹¹¹ S Ե Դ United States Code Title 5. Government Organisation and Employees. United States Senate. March 23, 1973. Wash., 1973. § 5104:
¹¹² S Ե Դ Политическая деятельность государственных служащих. Организация управления и требование к гражданской службе в США. Указ., Է ջ 63-69:
¹¹³ S Ե Դ Закон о государственной службе Латвии, 1994г.: Закон о публичной службы Эстонии, от 15 февраля, 1995 http://estonia.news-city.info/docs/sistemsr/dok_iernui/index.htm:

կառավարման համակարգային և արժեքային տարբերություններ: Այսպես օրինակ՝ Ռուսաստանում հանրային ծառայությունների տեսակներն ածանցվում են պետական ծառայություններից, ըստ այդմ՝ պետական քաղաքացիական ծառայությունը պետական ծառայության տեսակ է¹¹⁴: Ընդհանուր ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը կարգավորվում է նաև հանրային ծառայության օրենսդրությամբ, իսկ եթե հաշվի առնենք, որ հանրային ծառայողների վերին օղակից հավաքագրվում է քաղաքական էլիտան, ապա վերջինս ուղղակիորեն կարգավորում է էլիտայի հավաքագրման գործընթացը:

ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը կարգավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով: 1995թ. ՀՀ առաջին սահմանադրության ընդունումը, ապա 2005թ. և 2015թ. փոփոխություններն իրականացվել են ժողովրդավարական սահմանադրությունների չափանիշներին համապատասխան, սակայն գործնականում առանձին ինստիտուտների արդյունավետ գործառնության համար մինչ այսօր առկա են օրենսդրական բացեր: Պետական կառավարման բարձր արդյունավետության ունենցող երկրներին հասնելու համար հարկավոր է սկսել քաղաքացիական հասարակության ունից: Քաղաքացիական հասարակությունը մեզանում չունի հստակ կառուցվածք, իսկ կազմակերպությունները գործում են պասիվ: Թեև 2013 թ. ՀՀ Հանրային խորհրդի (ՀԽ) քաղաքացիական հարցերի կայացման հանձնաժողովի կողմից մշակվել է «ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմա-

¹¹⁴ Տե՛ս Դեմոկրատիկ ֆեդերալ զինուժի օրենսդրությունը, ընդունվել է 4 յուլի, 2004 թ.:

վարու թյան հայեցակարգ»¹¹⁵, որտեղ կարելի է գտնել կենսունակ առաջարկություններ, թե ինչպես քարձրացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերը, գործանական ու մդրանք իրավիճակն ավելի լավը չեն դարձրել: 2015թ. դրու թյամբ, ինչպես նշել է Լ.Ստեփանյանը, ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպություններին 15-20%-ը գործել է թղթի վրա, իսկ այն կազմակերպությունները, որոնք նվազագույն ակտիվություն են ունեցել կամ \$ի նսն սավորվել են արտասահմանյան դոնորների կողմից, կամ համագործակցել իշխանությունների հետ¹¹⁶: Ինչ վերաբերում է քաղաքական կազմակերպությունների և հանրային ծառայություններին, ապա ուսումնասիրությունից կարող ենք նշել, որ 2000-ականներից սկսած օրենսդրական դաշտ են բերվել «Քաղաքացիական ծառայություն մասին» օրենքը, «Կուսակցությունների մասին» օրենքը, որոնք կարգավորել են քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը, թեև ոչ լիարժեք¹¹⁷: Ուսումնասիրելով քաղաքական էլիտայի հավաքագրման առնչվող սահմանադրարկական կարգավորման համակարգը ՀՀ-ում, կարող ենք նշել, որ այն պետական կառավարման արդյունավետությունը երաշխավորելու համար այն լիարժեք չի կատարվել: Ըստ այդմ, քաղաքական էլիտայի

¹¹⁵ Տե՛ս Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգ, Հավելված N1, ՀՀ կառավարության 2014 թ. սեպտեմբերի 25-ի նիստի N40 արձանագրային որոշման, https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/09/40-42.pdf:

¹¹⁶ **Ստեփանյան Լ.** ՀՀ-ում հասարակական կազմակերպությունների գործունեությունն առանձնահատկությունների մասին, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ. Քաղաքագիտություն», Երևան, 2015, №2(17), էջ 63-67:

¹¹⁷ Տե՛ս «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2002թ. Հունիսի 3; «Քաղաքացիական ծառայություն մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2001թ. դեկտեմբերի 4-ին:

հավաքագրման գործընթացի
ինստիտուցիոնալացման համար արժևորել ենք ոչ
միայն արտասահմանյան փորձի պարզ փոխադրումը,
այլ նաև դրանց հիմքում ընկած իրավունքների,
ազատությունների և արժեքների որդեգրումն ու
պահպանումը:

**ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻՆ ՅԱՎԱՔԱԳՐՄԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**2.1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻՆ ՅԱՎԱՔԱԳՐՄԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

Երրորդ հանրապետության հռչակումից ի վեր ՀՀ-ում քաղաքական իշխանության և եզրինակության և ժողովրդավարական վարչակարգի ձևավորման խնդիրը ուղարկվել է իր տարածքում և իր ժողովրդի վրա քաղաքական և իր տարածքում հավաքագրման մեխանիզմի ուսումնասիրությանը: Մինչդեռ, ինչպես ցույց տվեց մեր հետազոտությանը, հավաքագրման արդի մոդելը, որում կարևորվել են ազատ մրցակցությանը, հավաքագրման ինստիտուտների՝ պրոֆեսիոնալ հիմքով կայացումն ու արդիականացման շարունակականությանը, կարևոր է հավաքագրման մեխանիզմի ուսումնասիրությանը: Այդ անհրաժեշտությանը նշում է նաև ռուս հեղինակ Ա.Վ.Սամոևը՝ ընդգծելով, որ կայուն և ժողովրդավարական քաղաքական համակարգ ունենցող երկրներում քաղաքական և իր տարածքում հավաքագրման մեխանիզմի վերլուծությանը ենթարկում է իր տարածքում ինստիտուտների և դրանց կադրային քաղաքականության սկզբունքների ու ընթացակարգերի հետազոտության շարունակականությանը¹¹⁸: Քաղաքական և իր տարածքում կառուցվածքային ուսումնասիրությանը մի շարք երկրներում ցույց է տվել, որ հավաքագրման մեխանիզմը, որպես կանոն, թելադրում են վերոնշյալ ինստիտուտները:

¹¹⁸ Տե՛ս Самусевич А.В. Анализ основных институтов рекрутации политических элит, Международный научный журнал «Иновационная наука», 2015, No 6, էջ 266-268, <https://cyberleninka.ru/article/n/analiz-osnovnyh-institutov-rekrutatsii-politicheskikh-elit> :

Այսպես օրինակ, այն երկրներում, որտեղ պետական կառավարման տեսանկյունից առաջատար է բյուրոկրատական ինստիտուտը քաղաքական էլիտան հավաքագրվում է բյուրոկրատական մեխանիզմով: Վերջինիս պրակտիկան լայն տարածում ունի այսօր ամբողջ աշխարհում, իսկ այդ մասին ավելի վաղ գրել է նաև ամերիկացի փիլիսոփա, սոցիոլոգ, ֆուտուրոլոգ Է.Թոֆլերը՝ նշելով, որ 20-րդ դարում լինելու են սուպերբյուրոկրատական կառավարման համակարգեր ¹¹⁹: Բյուրոկրատիայի ինստիտուտը ՀՀ-ում, այդ թվում ԱՊՀ որոշ երկրներում, պետական կառավարման համակարգում եղել և մնում է գերակա ինստիտուտը՝ իր կառավարչական և մեթոդական աշխատանքի շնորհիվ, սակայն քաղաքական էլիտայի հավաքագրման տեսանկյունից բյուրոկրատական մեխանիզմի արդյունավետությունը հեռու է զարգացած երկրների փորձից: ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի էվոլյուցիան պատկերացնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ առաջին հերթին կուսակցաբյուրոկրատական մեխանիզմին: Խորհրդային պետության քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցաբյուրոկրատական մեխանիզմն իրենից ներկայացրել է կադրային քաղաքականության իրականացման ընդհանուր սկզբունքներ և ընթացակարգեր: Այդ մասին նշել է նաև քաղաքական գործիչ, հրապարակախոս և գիտնական Ռ.Խասբուլատովը՝ ընդգծելով, որ միակուսակցական վարչակարգում դրանով էր պայմանավորված ընտրովի պաշտոնների (և ույնիսկ բյուրոկրատական) շատ լինելը ¹²⁰: Նմանատիպ պրակտիկա կիրառվել է նաև այլ երկրներում, օրինակ 1960-ականներին Ինդոնեզիայում, որտեղ ռազմական հեղաշրջման արդյունքում

¹¹⁹ Տե՛ս **Тоффлер Э.** Шок будущего, /пер. с англ./, Изд. «АСТ», Москва, 2002, էջ 14-16:

¹²⁰ Տե՛ս **Хасбулатов Р.И.** Бюрократия тоже наш враг...: Социализм и бюрократия, Изд. Политической литературы, Москва, 1989, էջ 96:

ի շխանությունը կենտրոնացել է «Գոլկար» կոչվող քաղաքական կազմակերպության ձեռքում, որը Ե.Վ.Գոլուբևան անվանել է բյուրոկրատներին կուսակցություն¹²¹: Ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, խորհրդային քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցաբյուրոկրատական մեխանիզմը 1991 թվականից պահպանվել է հետխորհրդային միջարքերկրներում, այդ թվում նաև ՅՅ-ում, ինչը, կարծում ենք, պայմանավորված է եղել նաև ձևավորված ավանդույթներով: Ավանդույթի դերն առհասարակ կարևոր է քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի հաստատման ժամանակ: Բրիտանացի մարդաբան Ք.Ֆոքսը այդ կարևորությունը արևմտեվրոպական երկրներում պայմանավորում է կայացած արիստոկրատիաներ ունենալու և դրանք ընդունելու հասարակական գիտակցության հետ¹²²: Խնդիրն այլ ըմբռնում ունի օրինակ՝ Սաուդյան Արաբիայում և արաբական այլ երկրներում, որոնցում քաղաքական էլիտան հավաքագրվում է ավանդական մեխանիզմով: Այսպես՝ չնայած 2005 թվականից Սաուդյան Արաբիայում անցկացվում են ընտրություններ (բացառապես տեղական մակարդակում), իշխանության բարձրագույն մարմինները շարունակում են հավաքագրվել արյունակցական կամ ժառանգականության սկզբունքով: Նախարարական պաշտոնները զբաղեցնում են, որպես կանոն, թագավորական ընտանիքի ներկայացուցիչները, իսկ թագավորի գլխավորած նախարարների խորհուրդն իրականացնում է գործադիր և օրենսդիր իշխանությունը: Ժամանակի ընթացքում, ինչպես տեսնում ենք, դանդաղ փորձում են ներդնել քաղաքական էլիտայի հավաքագրման **մրցակցային**

¹²¹ Տե՛ս Գոլուբեա Ե.Վ. Государственная бюрократия и политика: Индонезия и Филиппины. 70-80-е годы, Изд. «Наука», Москва, 1988, էջ 76:

¹²² Տե՛ս Ֆոքս Կ. Наблюдая за англичанами. Скрытые правила поведения, Изд. РИПОЛ классик, Москва, 2008, էջ 11-12:

ը ն թ ա գ ա կ ա ր գ ե ր, բայց այն դեռևս չի փոխել քաղաքական էլիտայի հավաքագրման ավանդական մեխանիզմը: Ռուս քաղաքական գործիչ Ն.Գրիցենկոյի կարծիքով, հետխորհրդային միջարքերկրներում էլ, մասնավորապես Ռուսաստանում, խորհրդային ժամանակներից պահպանված ավանդույթները թույլ չեն տալիս, որ մրցակցային ընթացակարգերը լիարժեք կիրարկվեն, քանի որ պաշտոններին նշանակման և ընտրության ձևերը մնացել են հինը¹²³: Իհարկե, հեղինակը նկատի չունի արաքական երկրների ավանդական մեխանիզմը, որի հիմքում ընկած է արյունակցական սկզբունքով ընտրությունը կամ նշանակումը քաղաքական և պետական պաշտոններին, բայց նշվում են հոսանքավոր չունեցողները, \$ավորիտիզմը և այլ սկզբունքներ: Հավաքագրման կուսակցաբյուրոկրատական մեխանիզմն այս հիմաստով հետխորհրդային երկրներում և ՀՀ-ում բացասական է անդրադարձել բյուրոկրատիայի և կուսակցության՝ որպես առանձին ինստիտուտների կայացման գործընթացի վրա: Հաշվի առնելով, որ նորանկախ Հայաստանի քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի սկզբնավորման պատմության վրա իր ազդեցությունն է ունեցել խորհրդային քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմը, էլ ավելի է կարևորվում ժողովրդավարական երկրների փորձի ուսումնասիրությունը: Վերջիններիս առավելություններից է այն, որ քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի հիմքում ընկած մրցակցային ընթացակարգերի և սկզբունքների շնորհիվ, այդ երկրները կարողացել են ապահովել քաղաքական էլիտայի շրջապտույտը, անցնում իշխանափոխություն և պետական կառավարման

¹²³ Տե՛ս **Гриценко Н.П.** Формирование региональных политических элит в современной России: Теоретические аспекты исследования, Известия высших учебных заведений. Поволжский регион, Общественные науки. Политика и право, 2010, № 1 (13), էջ 30:

անընդհատություն՝ անկախ քաղաքական էլիտայի փոփոխությունից: Մյուս առավելությունն այն է, որ կայացած էլիտայաստեղծ ինստիտուտներուն են ալ ու շնորհիվ ձևավորվել է մի մեխանիզմ, որը գործառույթն է արհեստավարժության հիմքով:

Քաղաքական էլիտայի շրջապատը տի ուսումնասիրությունը հետխորհրդային մի շարք երկրներում ցույց տվեց, որ քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմը արդիականացվել է կուսակցությունների շնորհիվ: Վերջիններիս դերը կարևորել է ուս քաղաքագետ Դ.Օ.Կրյուկովը՝ քաղաքական համակարգի գործառույթներն իրականացնելու հիմքով¹²⁴: Յիմնվելով այդ ուսումնասիրությունների վրա, կարող ենք նշել, որ ՅՅ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի արդիականացման տեսանկյունից կուսակցությունների դերն անկախությունից հետո մեկ տասնամյակից ավելի եղել է պայմանական, քանի որ դրանք ստորադասվել են այլ ինստիտուտների: Արդյունքում այդ վիճակն անդրադարձել է նաև ՅՅ-ում իշխանության ձևավորման ինստիտուտացիոնալ հիմքերի վրա:

Էլիտայաստեղծ ինստիտուտների ուսումնասիրությունները զարգացած երկրներում, ինչպես նաև ՅՅ-ում, փաստում են, որ քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմն արտացոլում է քաղաքական էլիտայի կառուցվածքը, որի մեջ լայն իմաստով ներառված են կուսակցությունները և բյուրոկրատիան¹²⁵: Այդ մեխանիզմը ուսումնասիրելու նպատակով ուսումնասիրել ենք կարդային քաղաքականության սկզբունքներն ու ընթացակարգերը՝ առանձին-

¹²⁴ Տե՛ս **Крюков Д.О.** Политическая и научная элита в постиндустриальном обществе, Вестник СПбУ, 2010, Сер. 12, Вып. 1, էջ 350:

¹²⁵ Տե՛ս **Jann W., Veit S.**, Politicisation of Administration or Bureaucratisation of Politics: The Case of Germany, Universitätsveplag Potsdam, ECPR, Potsdam, 2010, էջ 4:

առանձին վերլուծելով բյուրոկրատական և կուսակցական մեխանիզմները:

2.1.1. ԷԼԻՏԱՅԻՆ ԶԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲՅՈՒՐՈԿՐԱՏԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքական էլիտայի բյուրոկրատական մեխանիզմը ամբողջ աշխարհում, գործառույթ է բարդ ընթացակարգերով և սկզբունքներով: ՀՀ-ում և հետխորհրդային միջաբերկրներում քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական մեխանիզմն, այնուամենայնիվ, ձևավորվել է շուրջ երկու տասնամյակ և դեռ լիարժեք չի կիրառել այդ ընթացակարգերն ու սկզբունքները: Դրանց մի մասն արդի հասարակույթյունները վերցրել են չինական մանդարինների և գերմանական բյուրոկրատիայի պատմույթյունից: Ինչպես իրավացիորեն նշել է Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Վ.Դոմհոֆը, կադրային քաղաքականության վերոնշյալ ընթացակարգերն ու սկզբունքները, պետական կառավարման բոլոր ձևերում բյուրոկրատիան դարձրել են ամենաարդյունավետ կադրային մեքենան¹²⁶: Անկախությունից հետո, ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական մեխանիզմն է գործարկվել, որովհետև քիչ թե շատ այդ ինստիտուտն է կադրեր մատակարարել քաղաքական բարձր պաշտոնների համար: Բազմաթիվ երկրներում, այդ թվում ՀՀ-ում, բյուրոկրատական մեխանիզմն ապահովել է պետությունը կառավարելու ընդունակ մարդկանց հավաքագրում: Այդ կապակցությամբ, 20-րդ դարի ավստրիացի քաղաքագետ Լ.Ֆոն Միզեսը կիրառել է նույնիսկ «պետության օգ-

¹²⁶ Տե՛ս **Domhoff W.** Power Elite and the State: How Policy is made in the America, Routledge by Taylor & Francis, London and New York, 1990, էջ 11:

նական» եզրույթը¹²⁷: Եվ այսպես, ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական մեխանիզմի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 1999 թվականից պետական կառավարման համակարգը վերականգնվել է: 1999-2003թթ ընթացքում ՀՀ ԱԺ կողմից ընդունվել են «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Քաղաքացիական ծառայությունների մասին», «Քաղաքացիական ծառայողների վարձատրությունների մասին» օրենքները, իսկ նախագահի կողմից հաստատվել են բազմաթիվ որոշումներ¹²⁸: Այսպես, 2001թ. ընդունված Քաղաքացիական ծառայությունների մասին օրենքով սահմանվել է «հանրային ծառայություն» հասկացությունը, որն ընդգրկել է պետական և տեղական կառավարման մակարդակները: Իլրումն քաղաքացիական ծառայություն` ՀՀ-ում գործել են մի շարք գուգահեռ ծառայություններ, որոնք կարգավորվել են տարբեր օրենքներով, իսկ դրանց ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանցում կադրերի հավաքագրման գործընթացը բավականին փակ է եղել և անձակենտրոն¹²⁹:

Թևակոխելով իր պատմությունն որ փուլ, իսկ ապա նաև տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջան, որում տեղեկատվությունը և գիտելիքը դառնում են

¹²⁷ Տե՛ս **Мизес фон А.** Бюрократия, /пер. с англ. Е.Журавская, под ред. Б.Пинскера, науч. ред. П.Левита/, Сциум, Челябинск, 2006, էջ 115:

¹²⁸ Տե՛ս «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2001թ. հոկտեմբերի 23-ին: «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2001թ. հոկտեմբերի 23-ին: «Քաղաքացիական ծառայությունների մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2001թ. դեկտեմբերի 4-ին: «Քաղաքացիական ծառայողների վարձատրությունների մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2002թ. հունիսի 3-ին: ՀՀ նախագահի ՀՀ կառավարության կառուցվածքը սահմանելու մասին 2002թ. մարտի 16 թիվ ՆՅ 1063 հրամանագիրը:

¹²⁹ Տե՛ս «Դիվանագիտական ծառայությունների մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2001թ. հոկտեմբերի 24-ին: «Քաղաքացիական հատուկ ծառայությունների մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2007թ. նոյեմբերի 28-ին: «Մաքսային ծառայությունների մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2002թ. հունիսի 3-ին:

հասարակության զարգացումը արագացնող ուժ, ՀՀ-
 ում քաղաքական էլիտայի հավաքագրման
 բյուրոկրատական մեխանիզմը արդիականացնելու
 խնդիրը եղել է հրատապ: Հաշվի առնելով զարգացած
 հասարակություններում կրթված ու բանիմաց
 էլիտա ունենալու պահանջը՝ ՀՀ-ում
 բյուրոկրատական մեխանիզմը ձգտել են համապատաս-
 խանեցնել միջազգային չափանիշներին: Այդ
 չափանիշներին ուսումնասիրությունը պահանջում
 է հանրային կառավարման հարացույցի փոփոխու-
 թյան ուսումնասիրություն: Վերջինը թույլ է
 տալիս եզրակացնելու, որ թեև դասական
 հարացույցով չի խրախուսվել քաղաքական էլիտայի
 հավաքագրումը բյուրոկրատական մեխանիզմով, այն
 չի էլ բացառվել: Արդի հարացույցով քաղաքական
 էլիտայի հավաքագրման բյուրոկրատական
 մեխանիզմի կիրարկումը պայմանավորող գործոն-
 ներ են նշվել ոչ միայն բյուրոկրատիայի
 գործառույթների ընդլայնումը, այլ նաև խորհր-
 դատվական և փորձագիտական հաստիքների
 ավելացումը: Պետական ծառայության ռուսական
 ակադեմիայի պրոֆեսոր Մ.Գ.Անոխինը փաստում է այս
 առիթով, որ արևմտեվրոպական երկրներում
 վերոնշյալ հաստիքների ընդլայնումը նպաստել է
 բյուրոկրատական մեխանիզմի տարածմանը ամբողջ
 աշխարհում¹³⁰: Հանրային կառավարման արդի հարա-
 ցույցի շրջանակներում կարևորվել է նաև
 քաղաքական պաշտոնների նշանակման և ընտրու-
 թյան ներկայացուցչական սկզբունքը¹³¹: Վերջինը
 ենթադրում է կարգերի ընտրու-
 թյան ժամանակ հաշվի
 առնել նաև նրանց հանրային գործունեու-
 թյունը: Կոպենհագենի բիզնես դպրոցի պրոֆեսոր Փոլ
 Դյոն Գայը բյուրոկրատական մեխանիզմի

¹³⁰ Տե՛ս Անոխին М.Г. Современные технологии эффективной политики, РУДН, Москва, 2008, էջ 41:

¹³¹ Տե՛ս Peters B. G. The Politics of Bureaucracy, 5th ed., Routledge Taylor & Francise, London and New York, 2001, էջ 88:

արդիականացման կարևոր չափանիշները է համարել «արժանիքային» սկզբունքի ներդրումը՝ կարգերի արհեստավարժությունը բարձրացնելու համար¹³²: Քաղաքականության կառավարման փոխհամաձայնեցված գործունեությունն ապահովելու համար եվրոպական միջարքերկրներում բյուրոկրատական մեխանիզմի շրջանակներում ներդրվել են նաև մրցութային ընթացակարգեր¹³³: Ուսումնասիրելով ՀՀ-ում քաղաքացիական ծառայության ներդրման ու արդիականացման գործընթացը, կարող ենք նշել, որ չնայած կառավարության կառուցվածքը օպտիմալացնելու քաղաքացիական ծառայության բոլոր ջանքերին՝ դրանք արդյունավետ չեն եղել: 1999-2008 թթ. ընկած ժամանակահատվածում օրենսդրության ուսումնասիրությունը փաստում է, որ կառավարությունը իրավունք է ունեցել ստեղծելու նոր կառուցվածքներ ու հաստիքներ, կատարել պաշտոնների նշանակումներ¹³⁴: Ավելին կառավարման որակը բարձրացնելու ծրագրերը խափանել է նաև 2003 թվականից փոխնախարարների նշանակման կարգի ազատականացումը՝ կոալիցիոն կառավարության ձևավորման արդյունքում¹³⁵: Կառավարության վարչապետի իրավասության մեջ են մտել ՀՀ նախարարության, մարզպետարանների աշխատակազմերի ղեկավարների նշանակումը: Հաշվի առնելով նշված փաստերը կարող ենք նշել, որ կարգերի հավաքագրման նման կարգը նպաստել է

¹³² Տե՛ս **Gay du P.** The Values of Bureaucracy, Oxford University Press, New York, 2005, էջ 17:

¹³³ Տե՛ս **Administration and the Civil Service in the EU 27 Member States: 27 County Profiles, Des Comptes Publics Et De La Fonction Publique, Italy, 2008, էջ 43-45, https://www.fonction-publique.gouv.fr/files/files/publications/etudes_perspectives/Administration_and_the_Civil_service_in_the_27_EU_Member_states.pdf:**

¹³⁴ Տե՛ս ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 30-ի թվով 488 որոշման մեջ լրացում կատարելու մասին», 2002թ. սեպտեմբերի 19-ի թիվ 1470-Ն որոշումը:

¹³⁵ Տե՛ս **Խոսկալեբոյան Ա.** Հանրային ոլորտի կառավարման բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում, Սարվարդի հրատ., Երևան, 2008թ., էջ 83:

բյուրոկրատիայի ազդեցության մեծացմանն ու պետական կառավարման կենտրոնացմանը:

Հաշվի առնելով անկախության և ինքնիշխանության վերահաստատման և բազմաթիվ ազդեցությունների դերը, անհրաժեշտ է նշել բյուրոկրատական մեխանիզմի դերի բարձրացումը, ինչը նաև քաղաքացիական ծառայության ներդրման արդյունք էր: Միջազգային պրակտիկայում, ինչպես ցույց է տվել մեր ուսումնասիրությանը, բյուրոկրատական մեխանիզմի դերի բարձրացումը պայմանավորված էր ժողովրդավարական պետության և բյուրոկրատական իշխանության ընդլայնմամբ: Պետության կադրային քաղաքականության ոլորտի հայտնի մասնագետ Վ.Գերմենչուկի կարծիքով, ժողովրդավարական պետության և բյուրոկրատական իշխանությանը չի սահմանափակվում տեխնիկական ու մեխանիկական աշխատանքով¹³⁶: Իլրումն վերջինիս՝ ժողովրդավարական և վարչական պետության ներքին մասին տեսական նյութի շրջանակներում կատարված բյուրոկրատիայի գործառնությունների համեմատական վերլուծության և վերոնշյալի հիմնավորման նպատակով կցանկանայինք առանձնացնել հետևյալ հիմնադրույթները՝

- ժողովրդավարական պետության բյուրոկրատիան մենեջերական է, ոչ թե կարգավիճակային:
- ժողովրդավարական պետության մեջ բյուրոկրատական իշխանության արժեքը կապում է նոչ այնքան պետական սեփականության (հոգևոր ու նյութական) կառավարման գործառնություն, որքան որակյալ հանրային ծառայությունների մատուցմանն ու հանրային կառավարման կառուցվածքային և գործառնության բարեփո-

¹³⁶ Տե՛ս **Герменчук В.** Пространство власти и управления, Монография, «Право и экономика», Минск, 2010, էջ 61:

խումնէրի իրականացման հետ: Ձևավորվում է այսպես կոչված հանրային բյուրոկրատիան՝ կադրային քաղաքականության իրականացման բազմամակարդակ համակարգով¹³⁷:

- Ժողովրդավարական պետության մեջ (ի տարբերություն օրինակ՝ խորհրդային վարչական պետության) բյուրոկրատական իշխանությունը սերտաճած է քաղաքական իշխանության հետ, սակայն օրենսդրական նախաձեռնություններն ակտիվությամբ ու հանրային (այդ թվում քաղաքական) պաշտոններին նշանակման կարգով կարողանում է ազդել քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի վրա:

Հիմնվելով ուսումնասիրության վերոնշյալ հիմնադրույթների վրա, կարծում ենք, որ այդ հիմքով է միշտ բերկրներում (այդ թվում ՀՀ-ում) քաղաքական էլիտայի ձևավորման ռազմավարական փուլը կապվել բյուրոկրատական իշխանության (իդեմագործադիր մարմնի) հետ, հատկապես, երբ հաշվի ենք առնում, որ միջազգային հարթակում պետական կառավարման արդյունավետության գնահատման ազգային ու միջազգային սանդղակավորումն իրականացնում են բյուրոկրատիայի կառավարման արդյունավետության նայլ ցուցանիշների հիման վրա:

Վերոնշյալ հիմնադրույթների ուսումնասիրությունը ՀՀ-ում ցույց է տվել, որ ժողովրդավարական պետության մոդելով բյուրոկրատական ինստիտուտի կայացմանը խոչընդոտել են ուժեղ նախագահական կառավարման համակարգը, որը 1995թ. Սահմանադրությամբ ՀՀ նախագահին զգալի լիազորություններ է տվել պետական ու քաղաքական բարձր պաշտոններում

¹³⁷ Տե՛ս **Gormley W.T., Balla S.** Bureaucracy and Democracy: Accountability and Performance, 2nd ed., "CQ Press", Washington D.C., 2007, էջ 7:

նշանակու մներ կատարելու համար: Այդ պաշտոններին նշանակման վերլուծությունից կարող ենք նշել, որ նախագահին տրված սահմանադրական լիազորությունները, իրենց հերթին, սահմանափակել են կադրային քաղաքականության բազմամակարդակ համակարգ ձևավորելու հնարավորությունը: Նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ բարձրաստիճան քաղաքական պաշտոններին լիազորությունները սահմանվել են սահմանադրությամբ, իսկ հայեցողական ու քաղաքական մյուս պաշտոնյաներին իրավասության շրջանակները սահմանվել են կամ ՀՀ Նախագահի կողմից, կամ համապատասխան կառավարման մարմիններին կանոնադրություններով, ապա կարող ենք եզրակացնել, որ բյուրոկրատական ինստիտուտը սերտաճել է քաղաքական իշխանության հետ:

ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական մեխանիզմի ուսումնասիրությունը անկախության առաջին տասնամյակում, ի թիվս գործնական, քաղաքական էլիտայի ներքին կառուցվածքում առկա բաժանարար գծերի անցկացման և մի շարք այլ խնդիրներին առնչվող դժվարությունների, բարդ էր՝ քաղաքականության և վարչարարության միջև փոխգործակցության ու փոխազդեցության խնդրի պատճառով: Սահմանված չեն եղել բյուրոկրատական մեխանիզմի մակարդակները, մինչդեռ 1990-ական թվականներին քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական մեխանիզմը զարգացած երկրներում գործառել է երկու մակարդակներով: Առաջինը բարձր օղակի՝ քաղաքական բյուրոկրատիայի մակարդակն է, որը հավաքագրվել է քաղաքական կարիերայի, պոտենցիալ կարողություններին, քաղաքական կառույցներին պատկանելու, քաղաքական ծառայություններ մատու-

ցելու սկզբունքներով: Երկրորդը՝ միջին և ստորին օղակների մակարդակն է, որի հավաքագրումը իրականացվել է կրթության, աշխատանքային ստաժիև մրցութային քննությունների անցկացման սկզբունքներով¹³⁸: Առավել հստակ պատկերացնելու համար, որպես օրինակ քննարկենք ԱՄՆ-ում և Գերմանիայում իրավիճակը: Եվ այսպես. ԱՄՆ-ում դաշնային քաղաքական պաշտոններում կադրերի հավաքագրումն իրականացվում է «spoils system»-ների (անվանում են նաև քաղաքականության մնացուկների համակարգ) համակարգով: Կարծիքը, թե 1883 թվականից հետո այդ համակարգը փոխարինվել է «արժանիքային համակարգով», հիմնավոր չէ, որովհետև մինչ օրս իրավական տեսանկյունից, քաղաքական բյուրոկրատիան շարունակում է քաղաքացիական ծառայության համակարգից դուրս մնալ, իսկ փաստացիորեն ձևավորվում է քաղաքական ղեկավարությանը մատուցած ծառայության և սկզբունքով: Զիմնավորելու համար բերենք մի քանի փաստեր: ԱՄՆ նախկին նախագահ Բ.Օբամայի դեռևս 2008թ. ընտրարշավի ժամանակ ձևավորված անցումային թիմի մի շարք անդամներ պաշտոնավարել են նաև նախագահ ընտրվելուց հետո: Ավելին, դաշնային բյուրոկրատիայի բարձրագույն օղակի անդամների մեծ մասն աշխատել է նախկին վարչական ապարատում (կառավարության 15 անդամներից 6-ը աշխատել է Բ.Քլինթոնի կաբինետում), ինչը ոչ միայն խրախուսում է քաղաքական կարիերայի կառուցման բյուրոկրատական մեխանիզմը, այլև ընդգծում ամերիկյան քաղաքական կարիերայի կառուցման առանձնահատկություններից մեկը:¹³⁹ Ինչ

¹³⁸ Տե՛ս **Lenz O.T., Holman M.** American Government, Florida Atlantic University, Department of Political Science, Florida, 2013, էջ 51-52:

¹³⁹ Տե՛ս ԱՄՆ ֆեդերատիվ կառավարության պաշտոնական կայքում ներբեռնված կենսագրական տվյալները՝ <https://obamawhitehouse.archives.gov/administration> (վերջին մուտքը՝ 10.08.2017):

վերաբերում է Գերմանիային, ապա այստեղ քաղաքական պաշտոններն ամենաբյուրոկրատացվածներին, իսկ բյուրոկրատիան ամենաքաղաքականացվածներին մեկը աշխարհում¹⁴⁰: Վերջինիս գլխավոր պատճառը, ինչպես ցույց տվեց մեր հետազոտությունը, քաղաքական էլիտայի հավաքագրման, այսպես կոչված, քաղաքական միաբանության կամ քաղաքական կուսակցությունների ու արհկոմիտեների համագործակցության սկզբունքով իրականացվող կադրային քաղաքականության իրականացման պրակտիկան է: Կուզենանք նշել նաև հետևյալը, որ քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական մեխանիզմի ազդեցությունը վերոնշյալով չի սահմանափակվում: **«Ամուր քաղաքական բյուրոկրատական միջուկ»** ունեցող կառավարման համակարգերում բյուրոկրատիան իրականացնում է նաև օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու գործառնությունը (նույն ԱՄՆ, Գերմանիայի օրինակով): ԱՄՆ-ում օրենքն ու ժողովուրդը, քանի որ չի համաձայնեցվել քաղաքական բյուրոկրատիայի հետ, իսկ Գերմանիայում քաղաքական բյուրոկրատիայի օրենսդրական նախաձեռնությունը պայմանավորված է խորհրդարանական ու նախարարական պաշտոնների լրիվ կամ մասնակիորեն համատեղելու հնարավորությամբ: Եթե դիտարկենք նորին ԱՄՆ օրինակը, ապա կտեսնենք, որ բյուրոկրատական մեխանիզմի գործառնության միջին և ստորին մակարդակները մեծացրել են քաղաքական էլիտայի հավաքագրման ավագանը: Ավելին, այդ ուղղությամբ ռազմավարական ծրագրեր մշակելու շնորհիվ այդ մակարդակն էականորեն ապակենտրոնացվել է: Այսպես 1978 թվականին՝ ԱՄՆ քաղծառայության

¹⁴⁰ Տե՛ս Jann W., Veit S., նշվ. աշխ., էջ 4-5:

հանձնաժողովի լուծարումից ի վեր, ամերիկյան դաշնային բյուրոկրատիայի միջին և ստորին օղակների հավաքագրմամբ զբաղվում են անկախ գործակալները՝ հանդիսացող Անձնակազմի կառավարման բյուրոն (ԱԿՄ) և Արժանիքային համակարգի պաշտպանության խորհուրդը (ԱՅՊԽ)¹⁴¹: Ավելին, ինչպես պարզվում է ԱՄՆ ԱՅՊԽ ամենամյա հաշվետվությունից (2015), սկսած 2000-ականներից, ամերիկյան քաղաքացիական ծառայության զգալի հատվածի մասնավորեցման արդյունքում մեծացել են քաղծառայության աշխատաշուկայում վարձման հատուկ մարմինների (Special Hiring Authorities) թիվն ու ցուցանիշները¹⁴²: Բյուրոկրատական մեխանիզմի գործառնությունների և ստորին մակարդակների անձնահատուկ համակարգում զերմանիան, որտեղ երկրի աշխատավորական ուժը ներկայացված է զերմանիայի արհկոմիտեների կազմակերպության (ԳԱԿ) միջոցով: Եվ չնայած ԳԱԿ-ի (որը, ի դեպ, ներառում է ութ անդամ-արհմիություններ) մեջ մտնող անձին անդամ-արհմիություններից յուրաքանչյուրը \$իսանսավորվում է քաղաքական կուսակցությունների կողմից, դրանցից ամենախոշորը՝ Պետական ծառայության միությունը, դեյուրե ունեցել է անկախ, ապաքաղաքական մարմնի կարգավիճակ: Ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, ՅՅ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական մեխանիզմի կառուցվածքային բաժանումը վերոնշյալ երկրների ձևով բացակայել է մինչև 2000-ական թվականներ, իսկ բյուրոկրատական մեխանիզմը գործառնել է «վերսից ներքև» սկզբունքով, անանց մրցությունը նթացակարգերի:

¹⁴¹ Տե՛ս ԱՄՆ Ֆեդերալ կառավարության անձնակազմի կառավարման բյուրոյի պաշտոնական կայքէջը՝ www.opm.gov; ԱՄՆ արժանիքային համակարգի պաշտպանության խորհրդի պաշտոնական կայքէջը՝ www.mspb.gov:

¹⁴² Տե՛ս The Impact of Recruitment Strategy on Fair and Open Competition for Federal Jobs: A Report to the President and the Congress of the US by the US Merit System Protection Board, N.W. Washington, DC, 2015, էջ 11-13:

Քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական մեխանիզմի գործառնության երկրորդ մակարդակի բացակայությունն, իր հերթին, էականորեն նեղացրել է հավաքագրման ավագանը՝ բացառելով կադրային թարմացումները ներքևից: Թեև 2001 թվականից երկմակարդակ համակարգը ներդրվել է, այնուամենայնիվ, գործել է ազգային առանձնահատկություններով: «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից (2001) երևում է, որ քաղաքական բյուրոկրատիան ձևավորվել է քաղաքական ուժերի հարաբերակցությամբ, ինչը միջազգային պրակտիկային թեև չի հակասել, բայց տարբերվել է նրանով, որ հավաքագրման միասնական ընթացակարգերի ու սկզբունքների բացակայությունն պատճառով կրել է կամայական բնույթ (այդ թվում հայեցողական պաշտոնների դեպքում), ինչը իր հերթին այդ օղակը դարձրել է անկայուն: Ինչ վերաբերում է բյուրոկրատիայի միջին և ստորին մակարդակներին, ապա 2001թ. օրենքով բարձրաստիճան քաղծառայողները նշանակվել են քաղաքական սուբյեկտների կողմից, ինչը ուղղակիորեն ցույց է տալիս նրանց վրա քաղաքական ազդեցության առկայությունը¹⁴³: Ելնելով օրենսդրական կարգավորումից, կարող ենք նաև նշել, որ 2002թ. ստեղծված քաղծառայության խորհուրդը, մրցույթային սկզբունքով կազմակերպել է միայն բարձրագույն-գլխավոր պաշտոնների համար, իսկ առաջատար-կրտսեր թափուր պաշտոնների համալրումը իրականացրել է ինքնուրույն պետական հաստատությունը¹⁴⁴: Ինչպես ստեսնում ենք, քաղծառայության համակարգը

¹⁴³ Տե՛ս «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2001թ. դեկտեմբերի 4-ին, Հոդված 15:

¹⁴⁴ Տե՛ս «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2001թ. դեկտեմբերի 4-ին, Հոդված 14:

լիբրաժեք չի ապահովել քաղաքական իշխանության ապակենտրոնացումը:

Ամփոփելով ուսումնասիրությունը կարող ենք նշել, որ ի տարբերություն զարգացած երկրների, որտեղ քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական մեխանիզմը 1990-ականներին զարգանում էր հանրային կառավարման արդի հայեցակարգի տրամաբանությամբ, ՀՀ-ում դեռևս սահմանված չէին բյուրոկրատական մեխանիզմի գործառնության մակարդակները: Քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական մեխանիզմը ՀՀ-ում չի եղել ապակենտրոնացված, որի արդյունքում համակարգին հատկանշական են եղել կադրային նշանակումները կամայականության սկզբունքով: Հավաքագրման մրցութային ընթացակարգերի, կադրային ֆիլտրերի բացակայությունը բյուրոկրատական մեխանիզմը վերածել են փակ շրջանակի, որտեղից քաղաքական էլիտա տանող ճանապարհը կարող էր անցնել «թռիչքային» (չանցնելով կարիերային ճանապարհ): Նույն ժամանակ, քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական մեխանիզմը զարգացած երկրներում բնութագրվել է պաշտոնական չափանիշներով, կադրային ֆիլտրերի, արժանիքային սկզբունքներով: Վերջիննը այդ երկրներում խթանել է քաղաքական էլիտա արհեստավարժների հավաքագրումը՝ ապահովելով պետական կառավարման արդյունավետությունը:

2.1.2. Է Լ Ի Տ Ա Յ Ի Հ Ա Վ Ա Ք Ա Գ Ր Մ Ա Ն Կ ՈՒ Ս Ա Կ Ց Ա Կ Ա Ն Մ Ե Խ Ա Ն Ի Չ Մ Ի Ա Ռ Ա Ն Ձ Ն Ա Յ Ա Տ Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ը

Անկախությունը նիցիվեր քաղաքականության մեջ կուսակցություններին ակտիվ դերը կարևորել են ՀՀ-ում քաղաքական էլիտայի վերաբերյալ առաջին հետազոտությունները կատարած հեղինակները:

Նրանցից պրոֆեսոր Մ.Մինասյանը գրել է, որ քաղաքական էլիտան ոչ միայն քաղաքականության մեջ հաստատված, այլև սեփական քաղաքականությանն ունեցող ուժերը¹⁴⁵: Կուսակցությունների գործառույթների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հանրային մեծ նշանակություն ունի հատկապես քաղաքական էլիտայի հավաքագրման գործառույթը: Այդ գործառույթի հանրային նշանակությունն այնքան մեծ է, որ թույլ է տալիս կարծելու, որ քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմը շատ ավելի կարևոր դեր ունի, քան ընտրությունները: Կուսակցական մեխանիզմը, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, ժողովրդավարական երկրներում կարող է որոշել ընտրությունների ելքը (կուսակցական կադրերի միջոցով): Կուսակցական մեխանիզմի շրջանակներում գործող կադրային սկզբունքներն ու ֆիլտրերը կարող են երաշխավորել որակական բարձր հատկանիշներ ունեցող կադրերով քաղաքական էլիտայի հավաքագրումը: Ներկայացուցչական ժողովրդավարության կողմնակիցները բացի հավաքագրման գործառույթից, կարևորել են նաև կուսակցությունների՝ հանրային շահերն արտիկուլացնելու, քաղաքական ծրագրեր մշակելու գործառույթները¹⁴⁶: Վերոնշյալ գործառույթների կարևորությունից հետևում է, որ դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կադրային արսենալ ունենալ: Յետխորհրդային որոշ երկրներում, ներառյալ ՌՌ-ում, կուսակցությունների ձևավորման փաստն ինքնին չի ապահովել վերոնշյալ գործառույթների լիարժեք կատարումը:

¹⁴⁵ Տե՛ս **Մինասյան Մ.** քաղաքական էլիտա, ԵՊՀ հրատ., Երևան, 2005, էջ 204:

¹⁴⁶ Տե՛ս **Diamond L., Gunter R.** Political Parties and Democracy, The Johns Hopkins University Press and the National Endowment for Democracy: A Journal of Democracy book, Baltimore and London, 2001, էջ 55-57:

Ավելին, փորձագետ Վ.Վ.Գիլմանովը փաստում է, որ քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմը նույն ձևով չի գործառել տարբեր վարչակարգերում¹⁴⁷: Այստեղից հետևում է, որ կուսակցությունների գործունեությունը նույն արդյունավետությունը չի ունեցել բոլոր երկրներում: 1991թ. կառավարման նախագահական ձևն ընտրած ՅՅ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմը քիչ թե շատ գործարկվել է մինչև 1998թ., քանի որ քաղաքական և պետական բարձր պաշտոններում կադրերի նշանակումն իրականացրել է նախագահը: Այդ ընթացքում, քաղաքական և պետական բարձր պաշտոններում նշանակվել են հիմնականում Յայոց համագային շարժում (ՅՅԾ) կուսակցության անդամները, ինչը պայմանավորված էր նաև նրանով, որ նախագահն ինքը ներկայացնում էր այդ կուսակցությունը: Ավելին, խորհրդային կարգերի փլուզումից հետո դեյուրե հայաստանյան բազմակուսակցական համակարգի գերիշխող կուսակցությունը ՅՅԾ-ն էր: Եթե կուսակցական մեխանիզմի դերը որոշենք այն չափանշով, թե որքանով է այն մասնակցում կառավարության ձևավորմանը, ապա կտեսնենք, որ ՅՅ-ում կուսակցական մեխանիզմի դերը քաղաքական էլիտայի հավաքագրման գործում անկախության առաջին ութ տարիների համեմատ նվազել է, ինչը պահպանվեց 1998-ից մինչև 2008 թվականները: Վերջինը պայմանավորված էր նաև ՅՅ երկրորդ նախագահի կուսակցական չլինելով հանգամանքով: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ՅՅ-ում 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմի ակտիվությունը կրել է անկայուն բնույթ: Ինչ վերաբերում

¹⁴⁷ Տե՛ս Գիլմանով Վ.Վ. Партийные модели рекрутирования правящих элит и лидеров, Научные ведомости, Серия История. Политология, 2017, № 22 (271), Выпуск 44, էջ 190-191:

Է խորհրդարանի ձևավորմանը մասնակցելու չափանիշով կուսակցական մեխանիզմը գնահատելուն, ապավստահաբար կարելի է նշել, որ ՀՀ-ում կուսակցական մեխանիզմն անկախությունն իր ցիտոսկելոսկալային ձևավորվելու գարգացած երկրների, ինչն էլ նաև ԿԱԵ երկրների օրինակով: ԿԱԵ երկրները խորհրդային կարգերի փլուզումից հետո նախընտրելով կառավարման խորհրդարանական ձևը՝ Եկանոթն առաջանցան ԱՊՀ երկրներից: Քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմի կատարելագործումը (այդ թվում օրենսդրական իմաստով) նպաստել է բազմակուսակցական համակարգի հաստատմանը (կուսակցական խմբակցությունների թիվը խորհրդարանում պահպանվում է 5-7-ի միջակայքում)¹⁴⁸:

Քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմը ՀՀ-ում հասկանալու համար հարկավոր է ուսումնասիրել և նկատի ունենալ միջազգային փորձը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կուսակցական մեխանիզմով արհեստավարժ քաղաքական էլիտայի հավաքագրումը մերօրյա գարգացած երկրներում սկսել է վաղ ժամանակներից: Եվ այսպես, քննարկենք այդ փորձը. նախատիպային կուսակցությունները, որոնք գործել են 11-14-րդ դարերում Իտալիայում, մասնակցել են բարձրաստիճանի հոգևորականության ու ֆեոդալական ազնվականության միջև ընթացող պայքարին և հավաքագրվել՝ վերոնշյալ խմբերի ներշնչանքով պաշտպանելու սկզբունքով: Կուսակցական մեխանիզմով քաղաքական էլիտայի հավաքագրումը արդյունավետ է եղել Անգլիայում, երբ **վիգերի** ու **թորիների** կուսակցություններին հաջողվել է անգլիական թագի ներկայացուցիչների և բուրժուազիայի շահերի պայքարը տեղափոխել խորհրդարան:

¹⁴⁸ Տե՛ս **Semenova E., Edinger M., Best H.**, Parliamentary Elites in Central and Eastern Europe: Recruitment and Representation /ed by E.Semenova, M. Edinger, H. Best/, by Routledge, New York, 2014, էջ 6:

Դրանից ի վեր, կուսակցական մեխանիզմով քաղաքական էլիտայի հավաքագրումը Անգլիայում համարվել է պետական կառավարման արդյունավետ տոլթյան երաշխիքներից մեկը: Շարունակելով արհեստավարժության սկզբունքով կուսակցությունների ձևավորման փորձի ուսումնասիրությունը տեղին է հիշել Ֆրանսիական հեղափոխությունը (1789թ.), որը սկսել և գլխավորել է յակոբինների, կորդելյերների քաղաքական ակումբներից հավաքագրված քաղաքական էլիտան: Կուսակցական մեխանիզմով է ձևավորվել նաև ամերիկյան քաղաքական էլիտան՝ անկախության համար պայքարի առաջին տարիներին (1812թ.) և մինչև 1867 թվականին համընդհանուր ընտրությունների ընդունումը, քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմը արդյունավետորեն գործել է խմբային նեղ շահերի, գաղափարախոսության սկզբունքներով: 1932 թ. ԱՄՆ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմը սկսել է գործառել մեծամասնության սկզբունքով (catch all parties), որի անարդյունավետությունը, ինչպես փաստում է պատմությունը, ի հայտ է եկել 1970-ականներին սկսված ֆինանսական ճգնաժամից, երբ կադրային քաղաքականության լիբերալ սկզբունքներով հավաքագրվող քաղաքական էլիտան երկիրը տարավ փակուղի: Կառավարության և խորհրդարանի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ամերիկյան կուսակցությունները որոշեցին փոխել հավաքագրման սկզբունքները՝ կարևորելով կադրերի խնդիրը (կարծում ենք՝ դրանից հետո ձևավորվեցին կարտելային կուսակցությունները): Ձևավորվեց կուսակցական ապարատը, որի անդամների համար քաղաքականությունը դարձավ մասնագի-

տական գործունեություն: Այսօրվերը քննարկվող բոլոր երկրներում քաղաքական կուսակցություններն ունեն ձևավորված կուսակցական ապարատ: Ինչպես տեսնում ենք, կուսակցական մեխանիզմի արդյունավետության կարևոր պայմաններն է կայացած կուսակցական ապարատի ստեղծումը: Նկատի ունենալով այդ հանգամանքը, քննարկենք այժմ խնդիրը ՀՀ-ում: Երրորդ հանրապետության պատմության սկիզբը նշանավորած Ղարաբաղյան շարժման հիման վրա 1989թ. հիմնադրվեց ՀՀԾ կուսակցությունը, Սահմանադրական իրավունք միությունը (ՍԻՄ): Մինչ այդ, 1967 այլախոհական շարժման հիման վրա հիմնադրվել էր Ազգային միացյալ կուսակցությունը (ԱՄԿ): Թեև զարգացած երկրների կուսակցական մեխանիզմի հետ համեմատած ՀՀ-ում կուսակցական մեխանիզմը համեմատել չի կարելի, բայց պետք է նշել, որ ՀՀ-ում էլ քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմը 1990-ականներին գործառել է նեղ խմբային շահերի սկզբունքով: Ավելին, այդ մեխանիզմի շնորհիվ կոմունիստական կուսակցության հետ քաղաքական պայքարը տեղափոխվել է խորհրդարան: Կուսակցական մեխանիզմն, այդուհանդերձ, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, ամենասկզբից չի ապահովել կուսակցական ապարատի կայացումը, ինչի մասին, փաստում է օրինակ՝ կուսակցությունից կուսակցություն պատգամավորների անընդհատ տեղաշարժը: Այդ մասին փաստել են անհ. Մինասյանը՝ նշելով, որ պատգամավորական խմբակցություններում ընդգրկված պատգամավորների քանակը դրա պատճառով 1990-1995 թթ. հաճախ էր ենթարկվում վայրիվերումների¹⁴⁹: Կուսակցական

¹⁴⁹Տե՛ս **Մինասյան Է.** Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2013, էջ 261:

ապարատի կայացման և մասնագիտացման խնդիրը ՀՀ-ում անկախությունն առաջին տարիներին ցուցաբերելու չի տվել, որ կուսակցական մեխանիզմն արդյունավետ աշխատի: Եթե ուսումնասիրենք զարգացած կուսակցական մեխանիզմ ունեցող երկրները, ապա կտեսնենք, որ կուսակցական ապարատի ձևավորման պարտադիր չափանիշներինց մեկը մասնագիտական ցենզն է¹⁵⁰: Հաշվի առնելով, որ խիստ մասնագիտական ցենզը կարող է նվազեցնել սոցիալական ներկայացուցչությունը կուսակցությունում, կարևորվում է նաև կուսակցության շարքերում աշխատանքի ու գործունեություն ծավալելու չափանիշը: Վերոնշյալ չափանիշներին տեսանկյունից ակտիվ ֆիլտրերի դեր են կատարում քաղաքական կուսակցությունների երիտասարդական կազմակերպությունները: Կուսակցության շարքերում կատարված աշխատանքի, երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև կուսակցական կադրային դպրոցներ ստեղծելու փորձը լայնորեն կիրառվել է Ռուսաստանում դեռ 2000-ականներին¹⁵¹: Կուսակցական մեխանիզմի արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից, ՀՀ-ում առնվազն անկախության առաջին տասնամյակում կուսակցական մեխանիզմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ չափանիշները կիրառելիություն չեն ունեցել, թեև բացառություն պետք է համարել միայն Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը, որի երիտասարդական կազմակերպությունները մշտապես գործել են և կատարել են որոշակի գործառնություններ:

¹⁵⁰ Տե՛ս **Заславский С.Е., Зотова З.М.** Правовые основы участия политических партий в выборах, РЦИОИТ, Москва, 2006, էջ 4-13:
¹⁵¹ Տե՛ս **Зотова З.М.** Политические партии России: Организация и деятельность, Российский центр обучения избирательным технологиям, Москва, 2001, էջ 3-18:

Քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմի դերը քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացում, ըստ ուսումնասիրության, պայմանավորված է կուսակցության տեսակով: ՀՀ-ում այդ փորձը ուսումնասիրելու համար հարկավոր է ուսումնասիրել և նկատի ունենալ քաղաքագիտության առաջատար մասնագետներ, քաղաքագետներ Ռ.Հանթերի և Լ.Դայմոնի կողմից ներկայացված կուսակցությունների տիպաբանությունը: Ըստ հեղինակների, կուսակցությունների էլիտայաստեղծ գործառույթը տարբեր ձևով են իրականացնում **Էլիտար (elite), զանգվածային (mass-based party), ընտրակալ (electoralist party), շարժում-կուսակցությունները (movement party)**¹⁵²: Այսպես՝ քաղաքական էլիտայի համար թեկնածուներ առաջադրելիս վերոնշյալ կուսակցություններից ամեն մեկն առաջնորդվում է այն չափանիշներով ու սկզբունքներով, որոնք կապահովեն իրենց ընտրազանգվածի քվեները: **Էլիտար** կուսակցություններին քվեարկում է հիմնականում արիստոկրատիան, ուստի թեկնածուների առաջադրումը այստեղ ավելի միօրինակ մեխանիզմներով է իրականացվում, քան զանգվածայինում, որը ձայներ է հավաքում սոցիալական կազմակերպությունների ու արհեստակցական միությունների անդամակցության ու աջակցության սկզբունքով: **Չափազանց կուսակցություններին** առանձնահատկություններից է կուսակցական աշխատանքի փորձ ունենալ ու չափանիշը, իսկ կուսակցության անդամների հավաքագրման մեխանիզմը բավականին բաց է: **Ընտրակալ և շարժում-կուսակցություններին** դեպքում կարևորվում են լայնընդգրկուն խնդիրներ

¹⁵² Տե՛ս Dimond L., Gunter R., նշվ. աշխ., էջ 27:

բարձրացնելու ու դրանց վերաբերյալ ծրագիր, թեկնածուներին հարիզմատիկ իմիջ, կլիենտիստական կապեր ունենալը: Էլեկտորալ կուսակցու-թյուններն ունեն անհատականացված բնույթ, այդ պատճառով կուսակցության հաջողակ լիդերների ձեռքում կենտրոնանում է ողջ իշխանությունը: Ինչպես նշել է հետխորհրդային տարածքում քաղաքական էլիտայի ուսումնասիրությունների ցմեկը, ԿԱԵ և ԱՊՅ երկրներում առաջին կուսակցու-թյունները եղել են անձնական ու ընկերական ցանցերով կապված քաղաքական փոքր զանգվածով կազմակերպություններ՝ առանց հստակ քաղաքական ծրագրերի¹⁵³: Քննարկելով կուսակցությունների վերոնշյալ տիպերն ու վերոնշյալ ուսումնասիրության արդյունքները, կարծում ենք, որ խորհրդային կարգերի փլուզումից հետո, ինչպես ԿԱԵ երկրներում, այնպես էլ ԱՊՅ երկրներում ձևավորվել են միանգամայն տարբեր կուսակցություններ: Թեև դրանցում պահպանված խորհրդային քաղաքական էլիտայի անընդհատու-թյունը (կոմունիստական կուսակցության անդամների մեծ մասը մնաց քաղաքականության մեջ՝ միավորվելով նոր քաղաքական ուժերում) հնարավոր է դարձրել կառուցել բազմակուսակցական համակարգ, կուսակցությունները ձևավորվել են տարբեր ընտրազանգվածների հիմքով¹⁵⁴: Եվ այսպես, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, ԱՊՅ միշտ բերկրներում, այդ թվում ՅՅ-ում, ձևավորվել են ընտրական և շարժում-կուսակցություններ, ինչի վառ օրինակն է ՅՅԾ-ն, որը ձևավորվեց Ղարաբաղ-յան շարժման ակտիվիստների կազմակերպության հիման վրա:

¹⁵³ Տե՛ս **Semenova E., Edinger M., Best H.**, նշվ. աշխ., էջ 6-7:

¹⁵⁴ Տե՛ս **Ալթունյան Կ.** Կուսակցությունների դերը քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի համատեքստում, Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու, «Լիմոն 2» հրատ., Երևան, 2017, էջ 30-40:

Քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմի ուսումնասիրության կարևոր կողմերից մեկը ՀՀ-ում համարվում է կուսակցության լիդերների ընտրության գործընթացը: Այդ նպատակով նախ քննարկենք լիդերների ընտրության ընդհանուր պրակտիկան: Կուսակցական լիդերների ընտրությունը քաղաքական և պետական բարձր պաշտոնների առաջադրման համար իրականացվում է ուղղակի և անուղղակի ընտրություններով: Սակայն որոշ երկրներում դեռ պահպանվել են կուսակցական լիդերների հավաքագրման ավտոկրատական ձևերը, ինչպիսիք են, ըստ ֆրանսիացի կուսակցագետ Մ.Դյուվերժեյի, կոոպտացիան և կենտրոնից նշանակումը: Այսպիսի մեխանիզմներ է ունեցել ֆաշիստական կուսակցությունը, որտեղ կուսակցության ինքնառաջադրված ղեկավարն է կատարել բոլոր բարձրաստիճան նշանակումները¹⁵⁵: Ժամանակակից պայմաններում զարգացած երկրներում քաղաքական կուսակցությունների կողմից թեկնածուների առաջադրումը հատկապես քաղաքական ու կառավարչական բարձր պաշտոնների կարող է իրականացվել երեք ներքին մեխանիզմով՝ համագումարի կամ նիստի շրջանակներում անցկացվող ընտրություններով, կուսակցության անդամագրվելու և բաց քվեարկության միջոցով¹⁵⁶: Առավել պատասխանատու ընթացակարգով է այդ գործընթացը անցկացվում, օրինակ, Մեծ Բրիտանիայում, որտեղ 2001 թվականից Պահպանողական կուսակցությունում սկսել է գործել խորհրդարանական գնահատման պալատը (The Parliament Assessment Board (PAB)), որը համակարգում է կուսակցությունից ներկայացվող թեկնածուների

¹⁵⁵ Տե՛ս **Дюверже М.** Политические партии, /пер. с фр. Л.А.Зиминой/, Изд. 5-е, Академический проект, Гаудеамус, Москва, 2013, էջ 184:

¹⁵⁶ Տե՛ս **Motlosa Kh., Shale V.** Political Parties Programme Handbook, Published by EISA, Johannesburg, 2008, էջ 35:

ընտրողական և կադրային քաղաքականության այլ խնդիրներ¹⁵⁷: ՀՀ-ում կադրային քաղաքականության ու կուսակցական ցուցակների կազմման, լիդերների առաջադրման մեկնաշնորհը եղել և շարունակում է մնալ կուսակցության առաջնորդների լիազորությամբ շրջանակներում: Եվ այսպես, 2002թ. «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, կարգավորվել է միայն հանրապետության նախագահի թեկնածուի առաջադրումը, որը հաստատվում է կուսակցության համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ¹⁵⁸: Մի շարք կուսակցությունների կանոնադրությունների ու սովորույթներով կարող ենք նշել, որ կադրերի առաջխաղացման որոշումները վերապահվել են կուսակցության նախագահին, որն օրինակ ՀՀԾ կանոնադրության մեջ կոչվում է վարչության խորհրդի նախագահ, ԱՄԿ-ում՝ կուսակցության նախագահություն¹⁵⁹:

Քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմի և սմի կարևոր կողմ են կուսակցական դաշինքների և կոալիցիաների ձևավորման սկզբունքները (վերջինը նույնիսկ չափման միջազգային ինդեքսներ ունի (Index of Coalition Necessity)¹⁶⁰: Քաղաքական պրակտիկայում ու սովորույթներում նրանք ցույց է տվել, որ հանդիպում են կուսակցական դաշինքների ու կոալիցիաների տարբեր տեսակներ, մասնավորապես՝ ընտրական ալյանս, կոալիցիոն կառավարություն, լայն կոա-

¹⁵⁷ Տե՛ս **Williams R., Paun A.** Party People: How Do- and How Should- British Political Parties Select their Parliamentary Candidates?, Institute for Government, London, 2011, էջ 15:

¹⁵⁸ Տե՛ս «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2002թ. հունիսի 3-ին, Հոդված 19:

¹⁵⁹ Տե՛ս «Հայոց կանոնադրության կուսակցության» կանոնադրություն, http://www.anm.am/index.php?option=com_content&view=article&id=82&Itemid=69: «Ազգային միաբանություն կուսակցության» կանոնադրություն, <http://www.amiab.am/hy/programs/ustav.html>:

¹⁶⁰ Տե՛ս **Powers V.** Weak Desirability and Power Index Rankings in Bicameral Legislatures and the US Legislative System, March 12, 2018, էջ 1-13, <https://arxiv.org/pdf/1709.00625.pdf>:

լիցիա, ազգային միասնություն կառավարություն և այլն¹⁶¹: Ընդ որում, նշված տեսակների վերլուծություն ժամանակ կարևորվել են կոալիցիա կազմելու նպատակը, ազդեցությունը քաղաքական գործընթացների, այդ թվում քաղաքական էլիտայի հավաքագրման վրա: Եվ այսպես, անդրադարձ կատարելով օրինակ բերված տեսակների, հարկավոր է նշել, որ **ընտրական ալյանսներ**, ձևավորվում են ընտրություններից առաջ միմյանց հետ չմրցակցելու և խորհրդարանում տեղեր ստանալու համար: **Կոալիցիոն կառավարություններ** ստեղծվում են խորհրդարան անցած կուսակցությունների միջև: Որպես կանոն, կոալիցիոն կառավարության ձևավորման ժամանակ գաղափարապես մոտ կուսակցությունները պայմանավորվում և կիսում են նախարարական տեղերը կառավարությունում: Երբ քաղաքական համակարգի մրցակցող կուսակցությունները միանում են համազգային քաղաքական ճգնաժամ հաղթահարելու նպատակով, ձևավորվում է **լայն կոալիցիա**, ինչպես եղել է Գերմանիայում, Ավստրալիայում, Իսրայելում, Իտալիայում: Եթե դիտարկենք կոալիցիաները քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի տեսանկյունից, ապա կտեսնենք, որ դրանց արդյունավետությունը տարբեր է նախագահական և խորհրդարանական կառավարման ձևերում: Միջազգային վերլուծական գեկոլյցներից մեկում նշվում է, որ նախագահական կառավարման ձև ունեցող համակարգում կոալիցիաների միջոցով հնարավոր է հասնել քաղաքական կայունության հաստատման (այդպիսի փորձ ունեցող երկրների թվում նշվում են Լատինական Ամերիկայի երկրները, ԱՊՅ և խորհրդային ճամբարի

¹⁶¹ Տե՛ս Կոալիցիոն ղեկավարությունների համակարգի մրցակցող կուսակցությունների միջոցով հնարավոր է հասնել քաղաքական կայունության հաստատման (այդպիսի փորձ ունեցող երկրների թվում նշվում են Լատինական Ամերիկայի երկրները, ԱՊՅ և խորհրդային ճամբարի

նախկին երկրներ): Նույն զեկուլյցում նաև նշում է, որ կոալիցիայի ձևավորումն այս դեպքում թուլացնում է (կամ վերացնում) կառավարության հաշվետվողականությունը խորհրդարանին, նպաստում քաղաքական պատրոնաժի (կլիենտիզմի) ձևավորմանը և օգտագործվում՝ կառավարության օրենսդրական նախաձեռնություններն ու ծրագրերը առանց խոչընդոտների հաստատելու համար¹⁶²: Չաշվի առնելով այդ փաստը, կոալիցիաների արդյունավետությունն ավելի բարձր է գնահատվում խորհրդարանական կառավարման ձևում: Բելգիայում, Գերմանիայում, Նիդեռլանդներում, Նորվեգիայում կոալիցիաները խթանել են քաղաքական մրցակցությունն ու պետական կառավարման արդյունավետությունը՝ ընդլայնելով սոցիալական առավել լայն շերտերի շահերի ներկայացուցչությունը խորհրդարանում: Արևմտաեվրոպական երկրների շարքում միայն Մեծ Բրիտանիան է, որտեղ կոալիցիոն կառավարության արդյունավետությունը ցածր է գնահատվում, այդ պատճառով գործում է միակուսակցական կառավարություն: Ուսումնասիրելով և նկատի ունենալով քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմի գործառնության այս կողմը, պետք է նշենք, որ ՅՅ-ում նախընտրական դաշինքներ եղել են դեռ 1990-ականներից, մինչդեռ կոալիցիոն կառավարության ձևավորման փորձը սկսվել է 2003 թվականից: Եվ այսպես, անդրադառնալով նախընտրական դաշինքներին, կարող ենք նշել, որ 1995թ. խորհրդարանական ընտրություններից առաջ ստեղծվել է «Չանրապետություն» միավորումը (ՅՅԸ և ՅՅԿ), 1999թ.-ին՝ «Միասնություն» նախընտրական դաշինքը (ՅՅԿ և Յայաստանի ժողովրդական

¹⁶² Տե՛ս Проект по коалиционному президентализму. Исследовательский отчет, январь 2015 г. Восприятие коалиционной политики депутатами в системах президентского правления, 2015, էջ 4-5, https://www.politics.ox.ac.uk/materials/CCP_Research_Report_RUSSIAv2.pdf:

կուսակցություն՝ 3ԺԿ): Ելնելով ուսումնասիրություններից կարող ենք նշել, որ նախընտրական դաշինքների միջոցով կուսակցություններին հաջողվել է անցնել խորհրդարան, ինչպես օրինակ՝ «Յանրապետություն» միավորումը 1995թ. խորհրդարանական ընտրություններում ստացել է քվեների 50%, իսկ «Միասնությունը»՝ 41.69%-ը, այսինքն՝ ձայների մեծամասնությունը: Այդուհանդերձ, հաշվի առնելով դրանց պառակտման պատճառները (առաջինի դեպքում Արցախի հիմնախնդիրը, իսկ երկրորդի դեպքում՝ հոկտեմբերյան ողբերգական դեպքերը), կարող ենք նշել, որ նպատակի (խորհրդարան անցնելը) շուրջ միավորվելու տեսանկյունից դրանք արդյունավետ են եղել:

Ընդհանրացնելով նշենք, որ քաղաքական էլիտայի հավաքագրման կուսակցական մեխանիզմը 33-ում անկախություն առաջին տասնամյակում աչքի չի ընկել կադրային քաղաքականության մասնագիտական սկզբունքներով, կադրային ֆիլտրերի առկայությունը, ինչը մենք պայմանավորել են կուսակցական համակարգի թերություններով: Հավաքագրման լայն ավազան ունենալու էլիտայի ստեղծ գործառույթի արդյունավետ իրականացման համար կարևորվող կուսակցական ապարատի բացակայությունը 33 նորաստեղծ քաղաքական համակարգի կուսակցություններում պայմանավորված է եղել կուսակցությունների բնույթով: Առաջին քաղաքական կուսակցությունների միջև նախընտրական դաշինքների ձևավորումը չի կրել գաղափարական բնույթ, ըստ այդմ, պետական կառավարման ժողովրդավարական ինստիտուտի գործառույթներն այն չի կատարել լիարժեք: Վերոնշյալից հետևում է քաղաքական և կառավարչական բարձր պաշտոններում թեկնածուների

առաջադրման ժողովրդավարական ընթացակարգեր ներդնելու անհրաժեշտությունը, որը կարող է բարձրացնել կուսակցության պատասխանատվությունը քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացում:

2.2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ուսումնասիրելով հավաքագրման բյուրոկրատական և կուսակցական մեխանիզմները կարող ենք նշել, որ քաղաքական էլիտայի դերը պետության կառավարման համակարգում պայմանավորված է գործադիր և օրենսդիր մարմինների ձևավորման կարիերային գործընթացները մեխանիզմներ դարձնելու արդյունավետությունամբ: Էլիտայի գործունեությունամբ և քաղաքական վարքագծով են որոշվում քաղաքական զարգացման ուղղությունը, քաղաքական համակարգի գործելու կամ չգործելու հեռանկարը: Պետական կառավարումն իրականացվում է իշխանական հենքով, հետևաբար առաջինի անարդյունավետության կամ ցածր արդյունավետության պատճառը քաղաքական էլիտայի մեխանիզմն է, որով ձևավորվում է իշխանությունը: Եթե դիտարկենք զարգացած երկրների փորձը, կտեսնենք, որ այդ մեխանիզմները փոխլրացնում են իրար¹⁶³: Յետխորհրդային և ԱՊՅ երկրների շրջանում ուսումնասիրությունը, որի մեջ մտնում է նաև ՅՅ-ն, ցույց է տվել, որ այդ մեխանիզմների անհամաչափության (պայմանավորված է նաև կառավարման ձևով) պատճառով պետական կառավարման

¹⁶³ Տե՛ս Institutional aspects of interaction of power, society and business in the post-Soviet space (Post-Soviet institutionalism 2012), Коллективная монография, Изд. ОмГУ, Омск, 2012, 302 էջ:

արդյունավետությունը ցածր է գնահատվել: Եթե հաշվի առնենք նաև որոշ երկրներում (Վրաստան, Մոլդովա) հեղափոխական մեխանիզմով քաղաքական էլիտայի հավաքագրման փորձի առկայությունը, որով հաջողվել է հասնել պետական կառավարման արդյունավետությունը քարձրացնելու կարճաժամկետ արդյունքների, ապա կտեսնենք, որ երկրի կայուն զարգացման պայմաններից մեկը մնում է կուսակցական և բյուրոկրատական մեխանիզմի ժողովրդավարացումը:

Անկախությունից հետո մեկ տասնամյակից ավելի ՅՅ-ում պետական կառավարման ոլորտում կատարվել են բարեփոխումներ արհեստավարժ քաղաքական էլիտա ու գործողությունների ռազմավարություն մշակելու ուղղությամբ՝ գիտակցելով, որ պետական կառավարումը և քաղաքականությունը գործնականում ասոցացվում է քաղաքական էլիտայի վարած քաղաքականության հետ: Այդ քաղաքականության՝ ժողովրդի կենսական շահերը լիովին արտահայտելու համար (այսինքն՝ լինի նաև արդյունավետ), որպես առաջնային և պարտադիր պայման, անհրաժեշտ է **գեներացնել որակյալ քաղաքական էլիտա, որն ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը ՅՅ-ում չի իրագործվել:** Որակը ձևավորվում է քաղաքական էլիտայի հատկանիշներով ու գործառույթներով և բնութագրում է էլիտայի գործունեության բոլոր կողմերը՝ սկսած արժեքներից մինչև ռազմավարական որոշումների ընդունում: Միևնույն ժամանակ կցանկանայինք նշել, որ քաղաքական էլիտայի որակի մեջ է վերհանվել հավաքագրման մեխանիզմի և պետական կառավարման

արդյունավետություն միջև կապը¹⁶⁴: Այլ կերպասած, քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմն ու պետական կառավարման արդյունավետությունը կորելացվում են «որակ» հասկացության շրջանակներում: Նշված կապը ուսումնասիրելու համար քննարկենք որակյալ քաղաքական էլիտայի խնդիրը: Եվ այսպես՝ անգամ հավաքագրման պրոֆեսիոնալ մոդելի ուսումնասիրությունից երևում է, որ պետական կառավարման արդյունավետության ապահովման տեսանկյունից նախընտրելի է որակապես բալանսավորված էլիտայի ձևավորումը: Ելնելով վերջինը քննադրող չափանիշների բազմազանությունից, առանձնացրել ենք պետական կառավարման արդյունավետության տեսանկյունից առավել կարևորները, որոնց թվում են՝

- ինտեգրված կադրային քաղաքականությունը,
- քաղաքական բազմակարծություն (պլյուրալիզմ), որը ենթադրում է գաղափարական և ծրագրային մրցակցություն,
- քաղաքական էլիտայի սոցիալական բարձր շարժունությունը (վերջինը հնարավոր է կառավարելու ժամկետները պահպանելու, ինչպես նաև ժամկետներն ու կարգը չհիմնավորված կերպով փոխելու փորձը բացառելու միջոցով),
- քաղաքական գործընթացների ժողովրդավարական ընթացակարգերին խստորեն հետևելու պարտավորությունը:

Վերոնշյալ չափանիշների վերլուծությունը ՀՀ-ում ցույց է տվել, որ անկախությունից հետո մեկ տասնամյակից ավել որակապես բալանսավորված քաղաքական էլիտա չի ձևավորել: Հիմնավորելու

¹⁶⁴ Տե՛ս **Понеделков А.В., Старостин А.М.** Формирование путей рекрутации административно-политических элит в современной России, Власть, 2007, № 3-8:

համար կարող ենք դիտարկել ինստիտուտների կադրային քաղաքականության կարգավորման թույլ հիմքերը, քաղաքական բանավեճի բացակայությունը: Բալանսավորված քաղաքական էլիտա չձևավորվելու պատճառներից է ուժեղ նախագահական կառավարման ձևը, որը 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո մեղմվեց: Ուժեղ նախագահական կառավարման ձևում կուսակցություններն ու խորհրդարանը հիմնականում եղել են «կառավարելի»: Եվ վերջինը՝ ընտրական գործընթացի կոպիտ խախտումները, որոնք արձանագրվել են միջազգային հանրության կողմից անկախությունից հետո անցկացված գրեթե բոլոր ընտրություններից հետո: Ելնելով վերոնշյալից նշենք, որ քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմը հնարավորինս վերահսկելի է եղել անձակենտրոն վարչակարգերի կողմից, իսկ քաղաքական ընդդիմությունը բացակայել է:

Շարունակելով որակյալ քաղաքական էլիտայի ձևավորման խնդրի քննարկումը, հարկավոր է նշել, որ մասնագիտական գրականության մեջ «որակ» և «արդյունավետություն» հասկացությունները առանձնացվում են՝ ելնելով նրանից, որ առաջինն ավելի օբյեկտիվ (իրական) բնույթ ունի, քան երկրորդը¹⁶⁵: Երկրորդի սուբյեկտիվությունը պայմանավորված է քաղաքական էլիտայի գնահատման ազգային և միջազգային կազմակերպությունների ներկայացրած տվյալներով, որոնք կարող էլիարժեք չարտացոլեն իրական վիճակը: Նկատի ունենալով այս երկու մոտեցումները կարող ենք այնուամենայնիվ նշել, որ երկուսի հիմքում էլ ընկած են գրեթե նույն չափանիշները: Միակ դժվարությունն այն է, ինչպես ցույց տվեց

¹⁶⁵ Տե՛ս **Кабаченко А.П.**, История мировой политики, Изд. МГУ, Москва, 2008, էջ 177-178:

ուսումնասիրությունը, որ քաղաքական էլիտայի
 որակի գնահատման միասնական չափանիշ
 գոյություն չունի: Ազգային ու միջազգային
 գնահատականները տրվում են, որպես կանոն, տարբեր
 պետական կառավարման ոլորտների ցուցիչներով՝
 տնտեսության, պաշտպանության, կրթության և այլ:
 Օրինակ՝ հետաքրքիր է նշել քաղաքական էլիտայի
 գործունեության վերաբերյալ հասարակական
 կարծիքի գնահատման միջազգային ուսումնասիրու-
 թյունները¹⁶⁶, կամ ՅԲ-ի և ՄԱԿ-ի կողմից սահմանած
 գնահատման չափանիշները¹⁶⁷: Այստեղից հետևում է,
 որ բիզնես էլիտայի որակի գնահատումն ավելի հեշտ
 է գործնականում և ավելի հավաստի (որովհետև բիզ-
 նեսում գնահատման միասնական չափանիշ է եկա-
 մուտը) քան քաղաքական էլիտայի: Ծատ չխորանալով
 այդ հասկացությունների տարբերություններում
 ավելացնենք, որ քննարկվող երկու հասկացու-
 թյունների միջև ընկած չափանիշները եթե
 նույնիսկ չեն նույնացվում, ապա գոնե միմյանց
 փոխլրացնում և փոխպայմանավորում են: Չափ
 առնելով քաղաքական էլիտայի որակի գնահատման
 խրթինությունը, սույն ուսումնասիրության շրջա-
 նակներում առաջարկվել է չափանիշները
 դասակարգել երկու խմբերում՝ **համակարգային** և
անհատական: Չի չյալ դասակարգումն իրականացվել է
 ուսումնասիրության դաշտում առկա տարբեր մոտե-
 ցումների հիման վրա: Եվ այսպես, համակարգային ի-
 մեջ ներառվել են այն չափանիշները, որոնք
 բնութագրում են էլիտան որպես համակարգ, ըստ որի
 լինում են՝

- **քաղաքական** (հավաքագրման բաց մեխանիզմները,
 էլիտայի ինքնիշխանությունը, քաղաքական

¹⁶⁶ Տե՛ս European Social Survey, www.europeansocialsurvey.org/:

¹⁶⁷ Տե՛ս The Worldide Governance Indicators 1996-2013, World Bank Policy Research, <https://gtmarket.ru/ratings/governance-matters/governance-matters-info>:

ազատութեանը, իրավունքների պաշտպանութեանը, խոսքի ազատութեանը (հանդուրժողականութեանը),

- **Կազմակերպչական-իրավական** (իշխանության մարմինների հակակշռման սկզբունքը, դատական իշխանության անկախութեանը, քաղհասարակութեան վերահսկողութեանը),
- «**մաթեմատիկական**» **կամ հաշվարկվող**, այսինքն՝ չափանիշներ, որոնք հիմնականում գնահատվում են վիճակագրությամբ (հանրային վստահութեանը, հասարակության և էլիտայի բարեկեցության հարաբերակցությանը, կոռուպցիայի աստիճանը)¹⁶⁸:

Երկրորդ՝ անհատական խմբի մեջ ներառվել են այն բոլոր չափանիշները, որոնք ձևավորվում են կադրային քաղաքականության միջոցով, ինչպես օրինակ՝ իրադարձություններին արձագանքելու ակտիվությունը, էլիտայի կրթական ցենզը և այլն: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդպիսիների շարքում կարելի է դիտարկել նաև իշխանության հանդեպ հետաքրքրությունը, էլիտային ձգտումը¹⁶⁹: Կարևորելով քաղաքական էլիտայի արդյունավետ լինելու գիտակցության բարձր արժեքը, ընդգծվել է գործունեության թափանցիկությունը, լայն աշխարհայացքը, մանիպուլացիաների չտրվելու տոկոսնությունը¹⁷⁰, ցանկացած իրավիճակից էլ ք գտնելու կարողությունը¹⁷¹: Ուսումնասիրելով և նկատի ունենալով վերոնշյալ չափանիշները, կուզենանք նշել նաև քաղաքական էլիտայի գործունեության

¹⁶⁸ Տե՛ս **Кабаченко А.П.**, նշվ.աշխ., էջ 179:

¹⁶⁹ Տե՛ս **Рудой В.В., Понеделков А.В.** Персоналистические измерения политической элиты, лидерство в экспертных оценках, Ростов-на-Дону, Вестник Евразийской науки, <https://yandex.ru/search/site/?searchid=2313841&text=%D1%80%D1%83%D0%B4%D0%BE%D0%B9&web=0&l10n=ru>:

¹⁷⁰ Տե՛ս **Archer T.S.** The Efficiency Theory, Improving Society by Eliminating Wasteful Programs, Restructuring the Economy and Fixing Education, CreateSpace Independent Publishing Platform, 2010, էջ 45:

¹⁷¹ Տե՛ս **Брукс Д.** Бобо в раю. Откуда берется новая элита, «Ад Маргинем Пресс», Москва, 2013, էջ 84:

նպատակի կարևորությունը, որի գնահատման համար
 ևս առկա է մեթոդաբանություն և վերջինիս
 քննարկման համար դիտարկենք դրանցից մի քանիսը:
 Եվ այսպես, ըստ դասական մեթոդի էլիտայի
 արդյունավետության չափանիշը սոցիալական
 ներկայացուցչությունն է, ըստ էլիտարիստական
 մեթոդի՝ ազդեցիկությունն ու որոշումների
 ընդունման գործընթացի վրա ազդելը, ըստ քաղաքա-
 կրթական մեթոդի՝ զարգացման առաջադեմ
 (պրոգրեսիվ) ուղի առաջարկելու կարողությունը¹⁷²:
 Վերջինը ուսումնասիրելով կարող ենք նշել, որ
 հատկապես բարդ քաղաքական գործընթացների և
 իրավիճակների դեպքում, քաղաքական էլիտայի
 որակի կարևոր չափանիշներ են անհատական
 պատասխանատվությունը: Ոչ պակաս կարևոր է նաև
 տեղեկատվության կառավարումը որպես
 արդյունավետության չափանիշ¹⁷³: Քաղաքական
 էլիտայի որակի ուսումնասիրությունը ցույց է
 տվել, որ պետական կառավարման
 արդյունավետությունը դրա արդյունքն է, ինչը ՀՀ-
 ում մինչև 2008թ. բոլոր չափանիշներով եղել է ցածր:
 Համակարգային չափանիշներով կարող ենք
 դիտարկել «Թրանսփերենսի ինթերնեշնլ»-ի¹⁷⁴,
 «Ֆրիդոմ Հաուզ»-ի¹⁷⁵ (ըստ աղյուսակների) կողմից
 հրապարակված տվյալները:

¹⁷² Տե՛ս **Գաևա Ա.Վ.** Теоретические подходы к изучению эффективности деятельности политической элиты. Вест. Влогод. гос. ун.-та, 2012, N1(21), Сер. 4, էջ 125:

¹⁷³ Տե՛ս **Դեմենտևա Վ.Վ., Կուրևա Ք.Մ.** Институциональные проблемы эффективного государства / Под ред. В.В. Дементьева, Р.М. Кувеева/, ДонНТУ, Донецк, 2011, էջ 55-58:

¹⁷⁴ Տե՛ս <https://www.transparency.org/research/cpi/overview> 2 միավորը նշանակում է էլիտիկ կոռուպցիայից, իսկ կոռուպցիայից քաղաքականացումը՝ 12.01.2018):

¹⁷⁵ Տե՛ս <https://freedomhouse.org/report/freedom-world/1998/armenia> գնահատվում է 7 բալով, ինչ քան ցածր է ցուցիչը, այնքան ավելի ազատ է երկիրը (վերջին մոլտը՝ 12.01.2018):

Աղյուսակ 1. Տվյալներն ըստ «Ֆրիդոմ Յանգ» կազմակերպության

Տարի	Ազատության ցուցիչ	Քաղաքական իրավունքներ	Քաղաքացիների ազատություններ	Դատական իշխանության անկախություն ¹⁷⁶
2008	4.5	5	4	5.25
2007	4.5	5	4	5.0
2006	4.5	5	4	5.0
2005	4.5	5	4	5.25
2004	4.0	4	4	5.0
2003	4.0	4	4	5.0
2002	4.0	4	4	-
2001	4.0	4	4	-
2000	-	-	-	-
1999	4.0	4	4	-
1998	4.0	4	4	-

Աղյուսակ 2. Տվյալներն ըստ «Թրանսիտենսի ինթերնեշնլ» կազմակերպության

Կոռուպցիայի մակարդակը 33-ով 1999-2008 թթ.	
1999	2.5
2000	2.5
2001	-
2002	-
2003	3
2004	3.1
2005	2.9
2006	2.9
2007	3.0
2008	2.9

¹⁷⁶ Տե՛ս <https://freedomhouse.org/report/nations-transit/2003/armenia> (վերջին մոլտքը՝ 12.01.2018):

Բերված ցուցանիշները փաստում են, որ նշված ժամանակահատվածում ՀՀ-ում կառավարող քաղաքական էլիտան չի կարողացել բարձրացնել պետական կառավարման արդյունավետությունը, չնայած բոլոր ուղղություններով ընդունվել են օրենսդրական կարգավորումներ և միջազգային պարտավորություններ: Անդրադառնալով ՀՀ-ում քաղաքական էլիտայի որակի անհատական չափանիշներին, կարող ենք նշել, որ ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, էլիտայում մինչև 2007թ. աճել է այն գործիչների թիվը, ովքեր օրինակ՝ բարձրագույն կրթություն են ստացել քաղաքական կարիերան սկսելուց հետո: Հատկանշական է նշել նաև, որ 1990-ականների կեսերից մինչև 2007թ. պրոֆեսիոնալ քաղաքական գործիչների և գործարարների աճը գուցե ավելի է համամասնորեն ¹⁷⁷:

Պետական կառավարման արդյունավետության գործում կարգային ներուժի դերն արժևորվել է տարբեր ուսումնասիրություններում ¹⁷⁸: Ուսումնասիրելով և նկատի ունենալով կարգային մեխանիզմները որպես պետական կառավարման արդյունավետությունը պայմանավորող գործոն, այդուհանդերձ կարող ենք նշել, որ քաղաքական էլիտայի դերը որոշող մյուս գործոնը գործառույթներն են: Եթե դիտարկենք այդ երկու գործոնների միջև կապը, ապա կտեսնենք, որ քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմներն ի վիճակի են ձևափոխել (մոդիֆիկացնել) պետության կառուցվածքային և գործառութային բնութագրիչները, պետական (հանրային) քաղաքականության առաջնային և երկրորդային նշանակություն ունեցող ծրագրերը:

¹⁷⁷ Տե՛ս **Դանիելյան Յ.** քաղաքական էլիտան հետխորհրդային Հայաստանում. Բնութագրիչները և ձևավորման ուղիները, Էդիթ պրինտ, Երևան, 2014, էջ 31-35:

¹⁷⁸ Տե՛ս **Атаманчук Г.К.** Теория государственного управления /3-ое изд. доп./, Изд. Омега-Л, Москва, 2005, էջ 75-81:

Գործառույթներին վերլուծության
 շրջանակներում արդյունավետությանը
 ենթադրում է առաջնային քաղաքական էլիտայի
 նպատակադրման, նախապես սահմանված նպատակներին
 հասնելու կարողությանը¹⁷⁹: Վերջինը
 մասնագիտական շրջանակներում անվանում են
ռազմավարական գործառույթ, ըստ որի քաղաքական
 էլիտան արդյունավետ է կատարում այդ
 գործառույթն այն դեպքում, երբ կարողանում է
 նվազագույն կորուստներով հասնել նախապես
 սահմանված նպատակին¹⁸⁰: Որքանով քաղաքական էլի-
 տային կհաջողվի հասնել երկրի զարգացման համար
 հանրայնորեն հայտարարված նպատակին, այնքանով
 բարձր կլինի պետական կառավարման
 արդյունավետությանը: Քաղաքական էլիտայի
 գործառույթներին պետական կառավարման փոխկապ-
 վածությանը ուսումնասիրելուց հետո կարող ենք
 նշել, որ այն արդյունավետ կարելի է համարել այն
 դեպքում, երբ դրանք հակասության մեջ չեն նաև
 գաղափարական հարթության մեջ: Յետաքրքիր է այս
 համատեքստում անդրադառնալ ռուս հեղինակ
 Ս.Սուլկաշինի կողմից առաջ քաշված գաղափարական
 դոկտրիններին, որոնք ըստ էության քննում են
 վերոնշյալ խնդիրը: Եվ այսպես, առաջին՝ լիբերալ
 դոկտրինում մինիմալիստական պետության և
 որակապես նոր քաղաքական էլիտայի դերի մասին է
 նշվում, որտեղ էլիտան ապահովում է միայն
 անվտանգությանը: Երկրորդում, որը հեղինակն
 անվանել է երկրի զարգացումն առաջնորդ,
 քաղաքական էլիտան անմիջական
 պատասխանատվության է կրում երկրի զարգացման

¹⁷⁹ Տե՛ս **Абрамова И.Е.** Политическая элита как составляющая политического процесса: на примере России, «Теория и практика общественного развития», 2015, № 10, էջ 112-114, <https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-elita-kak-sostavlyayuschaya-politicheskogo-protsesssa-na-primere-rossii> :

¹⁸⁰ Տե՛ս **Комлева Н.А., Наронская А.Г.** Роль политической элиты в обеспечении национальной безопасности, 2014, էջ 71-73, http://elar.ufr.ru/bitstream/10995/29143/1/girb_2014_13.pdf :

համար, քանի որ սահմանում է ուղենիշներ և տնօրինում դրանց հասնելու ռեսուրսները¹⁸¹: Սուր հակասություններ հանդիպում են, որոնք կարող են ծագել արժեքային կողմնորոշումների շուրջ, մի շարք երկրներում անխուսափելիորեն հանգեցրել են պետական կառավարման անարդյունավետության, որը դրսևորվել է միջազգային հանրության հետևադաքականության այլ սուբյեկտների հետ փոխհարաբերության ունենալով¹⁸²: Քննարկելով այս խնդիրները ՀՀ-ում, կարող ենք նշել, որ մինչև 1998 թվականը գրանցված աղքատության բարձր մակարդակը, ՀՆԱ անկումը, տնտեսության ճգնաժամը փաստում են, որ կառավարող քաղաքական էլիտան արդյունավետ չի կատարել ռազմավարական գործառնությունը՝ ազգային և միջազգային մակարդակներում գրանցելով պետական կառավարման արդյունավետության ամենացածր մակարդակը: Այսպես Համաշխարհային բանկի տվյալներով ՀՆԱ-ն (դոլլարային արտահայտությամբ) 1990-1998թթ. 2.257-ից հասել է 1.894¹⁸³, աղքատությանը մինչև 2004թ. կազմել է 53.5%¹⁸⁴: Բացի այդ, անկախության հետո մոտ մեկ տասնամյակ քաղաքական էլիտան ՀՀ-ում գործառնել է «պետությանը նախագահն է» արժեքային համակարգի շրջանակներում, այսինքն նախագահի անձի հետևյալ կապվել երկրում սոցիալական հավասարության, զբաղվածության երաշխավորվածության, այլ պետության ներքին հետ ծավալած համագործակցությունը և շատ այլ խնդիրներ: Հաշվի առնելով քննարկվող դոկտրիններից

¹⁸¹ Տե՛ս **Сулкашин С.С.** Современная государственная политика и управление, Директ-Медиа, Москва, 2013, էջ 69-70:
¹⁸² Տե՛ս **Иванова В.И., Лаврикова А.А.** Критерии оценки эффективности деятельности местной политической элиты: К проблеме измерения, 2012, էջ 276-277, <https://cyberleninka.ru/article/n/kriterii-otsenki-effektivnosti-deyatelnosti-mestnoy-politicheskoy-elity-k-probleme-izmereniya> :
¹⁸³ Տե՛ս <https://data.worldbank.org/country/armenia> GDP (current US\$) (վերջին մոլտքը՝ 12.01.2018):
¹⁸⁴ Տե՛ս <https://data.worldbank.org/country/armenia> Poverty headcount ratio at national poverty lines (% of population) (վերջին մոլտքը՝ 12.01.2018):

Երկրորդի մոտ լինելը ՀՀ-ին, կարող ենք նշել, որ 1998թ. նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի հրաժարականը կարելի է դիտարկել հետխորհրդային երկրների պատմության մեջ այն դեպքը, երբ անարդյունավետ պետական կառավարման արդյունքում քաղաքական Էլիտան փոխվել է, իսկ դրա պատճառը նաև պետական կառավարման և գաղափարական հակասությունն էր:

Սահմանված նպատակին նվազագույն կորուստներով հասնելու համար, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, անհրաժեշտ է կարևորել քաղաքական Էլիտայի **կազմակերպչական/կառավարման** գործառույթը:

Կազմակերպական գործառույթի իրականացման առանձնահատկություններով հետխորհրդային և ԱՊՀ երկրներում պետական կառավարման արդյունավետության մակարդակը տարբերվում է: Ըստ ռուս հեղինակ Մ.Բուռնդայի՝ ուղղահայաց իշխանության կոչտ սկզբունքով կառավարվող քաղաքական Էլիտան պետական կառավարման համակարգը կայուն պահելու հետ մեկտեղ արդյունավետ չէ քաղաքական լիդերներ ծնելու տեսանկյունից¹⁸⁵: Այս տեղից կարելի է հետևություններ անել, որ եթե պետական կառավարման արդյունավետություն է համարվում կայուն համակարգի պահպանումը, ուրեմն միջինասիական երկրներում կլանային մեխանիզմով քաղաքական Էլիտայի հավաքագրման պրակտիկան պետական կառավարման արդյունավետության տեսանկյունից պետք է համարել արդյունավետ: Կազմակերպչական գործառույթի իրականացման արդյունավետության մասին համեմատաբար աչքի ընկավ 1998 թվականից հետո կառավարման ղեկը ստանձնած քաղաքական Էլիտան: 1999թ. ի վեր իրականացված կառուցվածքային

¹⁸⁵ Տե՛ս **Бурда А.М.** Политическая элита современной России: Кризис формирования, “Проблемы постсоветского пространства” /Post-Soviet Issues/, 2017, (4/4), էջ 375:

բարեփոխումները հաջորդ տասնամյակում հանգեցրին պետական կառավարման արդյունավետության բարձրացման: Այդ մասին են փաստում երկրի զարգացման տեմպը բնութագրող ցուցանիշները: 2001-2008թթ. ընթացքում ՀՆԱ-ն տարեկան միջին հաշվով աճեց 12%-ով, իսկ հարկաբյուջե տային կառավարման շնորհիվ պետական պարտքը ՀՆԱ-ի 49%-ից նվազեց 16%-ի¹⁸⁶: Ըստ Համաշխարհային բանկի ներկայացրած տվյալների աղքատության մակարդակը մինչև 2004թ. հասել էր 53.5%, որը սակայն մինչև 2008թ. նվազեց մինչև 27.6%¹⁸⁷: Պետական կառավարման արդյունավետության ակնհայտ աճը հաշվի առնելով, ուսումնասիրությունները ցույց է տվել, որ 1998-2008թթ. ընթացքում պահպանված կիսանախագահական կառավարման համակարգում ձևավորվեց ուղղահայաց իշխանություն, ինչը մենք պայմանավորել ենք նաև քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական մեխանիզմի ազդեցությամբ: Ծարունակելով կազմակերպական գործառնությունները, նշենք, որ պետական կառավարման արդյունավետության տեսանկյունից էական դեր խաղաց նաև պետական և քաղաքացիական ծառայությունների դաշտային կարգավորումները: Հատկանշական է, որ արդեն 2005թ. քաղծառայողների թիվը հասել էր 5661 (չնայած օրենքը մի քանի տարի էր ինչ գործում էր), որը մինչև 2008թ. հասավ 8100, որը անկախության տարիներինցիվեր եղել է ամենամեծ թիվը: Ավելին, ՀՀ 2006-2008թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերից երևում է, որ պետական կառա-

¹⁸⁶ Տե՛ս Հարկաբյուջե տային կոնսուլիդացումը և վերականգնումը Հայաստանում Համաշխարհային ճգնաժամի ազդեցությունները փոքր բաց տնտեսության վրա, /Սուլիվան Կոլլիբալին և Ռոդրիգո Արչունդո-Կայայուն Սաչիկո Կատայուն Իգոր Բեյ Ֆեթսը Յանա Օրակը Օուեն Սմիթը /, The World Bank, Washington

DC;<http://documents.worldbank.org/curated/en/802021467997559073/pdf/728800ESW0ARME0Synthesis0Report0arm.pdf>

¹⁸⁷ Տե՛ս <https://data.worldbank.org/country/armenia> (վերջին մուտքը՝ 12.01.2018):

վարման ուղորտում իրականացված բարեփոխումների արդյունքում պետական կառավարման մարմինների աշխատողների թիվն աճել է, իսկ վերջինն ապելին է եղել քան 2003 թվականին¹⁸⁸: Ինչ վերաբերում է կառավարության արդյունավետության գուցանիշներին, ապա Յամաշխարհային բանկի կողմից տրամադրվող միջազգային ինդեքսների ուսումնասիրությունը ցույց է տվել դրական արդյունքներ (ըստ աղյուսակի)¹⁸⁹:

Աղյուսակ 3. Կառավարության արդյունավետության գուցանիշը ըստ Յամաշխարհային բանկի

Տարեթիվ	Ցուցիչ
1996	-0.38
1997	-----
1998	-0.48
1999	----
2000	-0.52
2001	---
2002	-0.09
2003	-0.16
2004	-0.09
2005	-0.14
2006	-0.25
2007	-0.38
2008	-0.17

Թեև աղյուսակից երևում է, որ կառավարության արդյունավետությունը ցածր է գնահատվում, այդուհանդերձ ներքին թվերի համեմատությամբ կարող ենք ասել, որ 2000թ. գրանցվել է ամենադրական

¹⁸⁸ Տե՛ս ԳՅՅ 2006-2008 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 53-54:

¹⁸⁹ Տե՛ս Armenia: Government effectiveness index (-2.5 ցածր; 2.5 բարձր) https://www.theglobaleconomy.com/Armenia/wb_government_effectiveness/ (վերջին մոլտքը՝ 10.01.2018):

ց ու ց ան ի շ ը , ի ս կ դ ր ան ի ց հ ե տո մ ն ա ց ե լ կ այ ու ն ց ա ծ ր : Ու ս ու մ ն ա ս ի ր ու թ յ ու ն ը ց ու յ ց է տ վ ե լ , ո ր կ առ ա վ ար մ ան ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ու ն ը պ այ մ ան ա վ ո ր վ ա ծ է ե ղ ե լ ն ան ք աղ ա ք ա կ ան և պ ե տ ա կ ան պ ա շ տ ո ն ն ե ր ու մ մ ար դ կ ան ց ն շ ան ա կ ու մ ն ե ր ո վ , ո ր ն ու ն ի դ ր ա կ ան և ք ա ց ա ս ա կ ան կ ո ղ մ ե ր : Ա յ ս պ ե ս օ ր ի ն ա կ ` ը ս տ ու ս ու մ ն ա ս ի ր ու թ յ ան , ա մ ե ն ա շ ա տ թ վ ո վ ն ա խ ար ար ն ե ր ն շ ան ա կ ե լ է Լ .Տ ե ր -Պ ե տ ր ո ս յ ան ը , ի ն չ ը կ ար ո ղ է ն շ ան ա կ ե լ , ո ր ք աղ ա ք ա կ ան է լ ի տ ան թ ար մ ա ց վ ե լ է ¹⁹⁰: Մ յ ու ս կ ո ղ մ ի ց է լ ն շ ե ն ք , ո ր հ ա ճ ա խ ա կ ի փ ո փ ո խ ու թ յ ու ն ն ե ր ը կ ար ո ղ ե ն դ ր ա կ ան չ լ ի ն ե լ պ ե տ ա կ ան կ առ ա վ ար մ ան ռ ա զ մ ա վ ար ու թ յ ան ի ր ա կ ան ա ց մ ան տ ե ս ան կ յ ու ն ի ց , հ ան գ ե ց ն ե լ դ ան դ ա ղ ի ր ա կ ան ա ց մ ան կ ա մ փ ո փ ո խ ու թ յ ան :

Ք աղ ա ք ա կ ան է լ ի տ ա յ ի դ ե ր ի ու ս ու մ ն ա ս ի ր ու թ յ ու ն ը պ ե տ ա կ ան կ առ ա վ ար մ ան ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ան հ ա մ ա տ ե ք ս տ ու մ շ ար ու ն ա կ ե լ ո վ ` ան դ ր ա դ ար ծ ե լ ե ն ք ք աղ ա ք ա կ ան է լ ի տ ա յ ի և հ ա ս ար ա կ ու թ յ ան ի ն տ ե գ ռ մ ան խ ն դ ր ի ն , ո ր ը ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ան ք աղ ա ք ա գ ի տ ա կ ան չ ա փ ու մ ն ե ր ի ց մ ե կ ն է ¹⁹¹: Յ ա տ կ ան շ ա կ ան է ա յ ս առ ի թ ո վ պ ե տ ա կ ան կ առ ա վ ար մ ան ո ր ա կ ա կ ան գ ն ա հ ա տ մ ան « լ ա վ կ առ ա վ ար մ ան » դ ո կ տ ր ի ն ի մ ի ջ ա զ գ ա յ ի ն ճ ա ն ա չ ու մ ը , ո ր ու մ կ առ ա վ ար մ ան ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ու ն ը ն ե ր առ ե լ է ք աղ ա ք ա կ ան է լ ի տ ա յ ի ու հ ա ս ար ա կ ու թ յ ան փ ո խ գ ո Ր ծ ա կ ց ու թ յ ու ն ը : Յ ա շ վ ի առ ն ե լ ո վ ա յ ն , ո ր ք աղ ա ք ա կ ան է լ ի տ ա յ ի դ ե ր ի ու պ ե տ ա կ ան կ առ ա վ ար մ ան ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ան գ ն ա հ ա տ ա կ ան ն ե ր ը կ ար ո ղ ե ն լ ի ն ե լ տ ար ք ե ր , ճ ա պ ո ն ա ց ի պ ր ո Ֆ ե ս ո ր Յ .Յ ա գ ի վ ար ան ն շ ե լ է փ ո խ լ ր ա ց ն ո ղ (կ ո մ պ լ ե մ ե ն տ ար) մ ե խ ան ի գ մ ի ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ու ն ը ¹⁹²: Ա յ դ պ ի ս ի ն հ ե ղ ի ն ա կ ը

¹⁹⁰ Տ ե ` ս **Դ ան ի ե լ յ ան Յ** .ն շ վ .ա շ խ ., է ջ 42:
¹⁹¹ Տ ե ` ս **Blatter J.** Forms of Political Governance: Theoretical Foundations and Ideal Types, Working Paper Series “Global governance and democracy”, Univesity of Lucerne, 2012, է ջ 5-8:
¹⁹² Տ ե ` ս **Hagiwara Y.** Democracy and Governance for Civil Society, Center Governance for Civil Society, Keio University, Japan, 2010, է ջ 7-23:

համարել է ընդդիմութան գործունեությունը, որը պետական կառավարման արդյունավետությունը պետք է ծառայեցնի ժողովրդի կարիքներին՝ հավասարակշռելով մրցակցային շահերը: Ուսումնասիրելով և հաշվի առնելով քաղաքական էլիտայի և հասարակության ինտեգրման խնդիրը ՀՀ-ում, կարող ենք նշել, որ պետական կառավարման արդյունավետության ցածր ցուցանիշների պատճառ է դել կազմակերպված ու համակարգված ընդդիմութան բացակայությունը: Ավելի, քան նախկին ամենավերջին ընդդիմութան գործունեությունը անցումային երկրներում, կարող ենք նշել, որ ՀՀ-ում, ինչպես շատ ուրիշներում, այն լիարժեք չի ձևավորվել¹⁹³: Մինչև 2008թ. ընկած քաղաքական գործընթացների ուսումնասիրությունը թույլ է տալիս կարծելու, որ պետական կառավարումն ավելի ավել դարձնելու, ժողովրդի կարիքներին ծառայեցնելու տեսանկյունից ընդդիմութան արդյունք չի ունեցել: Եվ այսպես, 1995թ. մինչև 2004թ. խորհրդարանը գրեթե անվտանգություն չի հայտնել կառավարությանը, և հաստատել է կառավարության ծրագրերը¹⁹⁴: Այդ մասին է վկայում նաև պետական բյուջեի կատարողականի հաշվետվությունների հաստատումը, որի հարցով ընդդիմութանը խոչընդոտներ չի ստեղծել: Ընդդիմութան կողմից դրված նպատակները չեն իրականացել, ինչը հուսահատեցրել է հասարակությանը:

Վերլուծելով քաղաքական էլիտայի գործառնությունը և համեմատության մեջ դնելով նախապես սահմանված նպատակների հետ, ինչպես

¹⁹³ Տե՛ս **Բաղդասարյան Ա.** Ընդդիմութան եությունը և դերն անցումային քաղաքական վարչակարգերում, էջ 33 http://www.noravank.am/upload/pdf/99_am.pdf:

¹⁹⁴ Տե՛ս Օրինականության ազգային համակարգ. Թրանսփերենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության ուսումնասիրության հաշվետվություն, Հայաստան 2003, Երևան 2004, էջ 28:

տեսնում ենք, կարող ենք որոշել քաղաքական
Էլիտայի դերը պետական կառավարման
արդյունավետության ապահովման գործում:
Այդուհանդերձ, իր գործառույթները կատարող
քաղաքական Էլիտան դեռևս պետական կառավարման
արդյունավետության երաշխիք չէ, որովհետև
սահմանված նպատակներին քաղաքական Էլիտան
կարող է այդպես էլ չհասնել: Ի վերջո պետք է նշել,
որ քաղաքական Էլիտան պետական կառավարումն
իրականացնում է նրա համար, որպեսզի կարողանա
հասնել իր կողմից սահմանված նպատակներին: Այդ
նպատակներին իրականացմանը քաղաքական Էլիտան
կարող է չհասնել ոչ միայն այն պատճառով, որ
արդյունավետ չի կառավարել, այլ նաև անկայուն
իշխանական հարաբերություններով: Չաշվի
առնելով այդ հանգամանքը, պետական կառավարման
արդյունավետության ապահովման գործում
քաղաքական Էլիտայի դերը պայմանավորում ենք
գերազանցապես քաղաքական Էլիտայի հավաքագրման
մեխանիզմով, որից մեծապես կախված է
գործառույթների արդյունավետ կատարումը,
այնուհետև նաև պետական կառավարման միջոցով
սահմանված նպատակներին հասնելու
արդյունավետությունը:

Չաշվի առնելով հավաքագրման գործընթացի,
քաղաքական Էլիտայի կառավարման
համընդգրկունությունը ու կադրային
քաղաքականության կապը պետական կառավարման
բոլոր մակարդակներում իրականացվող
գործառույթների հետ՝ քաղաքական Էլիտայի
հավաքագրման գործընթացի
ուսումնասիրությունը համարվում է պետական
կառավարման արդյունավետության գնահատման
ներկայացուցչական մեթոդներից մեկը: Այստեղից
Էլիտան գումար ենք, որ պետական կառավարման

արդյունավետության ապահովման առաջնային դերը կրում է քաղաքական էլիտան: Պետական կառավարման արդյունավետությանը պայմանավորված է արտադրողականությանը, հետևաբար որքան բարձր լինի արտադրողականությանը, այնքան բարձր կլինի արդյունավետությանը: Արդյունավետությանը որոշվում է ոչ միայն ստացված արդյունքով, այլ նաև որակով: Այս դեպքում արդյունավետությանը պարզ արտադրողականության չէ, այլ որակական փոփոխություն: Որքանով է ճիշտ պետական կառավարումը կապել քաղաքական էլիտայի գործունեության հետ այն դեպքում, երբ գիտենք, որ պետական կառավարումն իրականացվում է պետության անունից: Կառավարման իրականացման ողջ իմաստը կառավարման սուբյեկտի գործողությունները կառավարման օբյեկտի պահանջներին համապատասխանեցնելու մեջ է: Պետական կառավարման արդյունավետությանը պայմանավորված է կառավարման սուբյեկտի գործառնությանը և ինստիտուցիոնալ պայմաններով: Արդյունավետությանը պահանջում է քաղաքական էլիտայի գործառնությանը կատարում ռեսուրսների, ժամանակի և հմտությունների նվազագույն ծախսման միջոցով:

Այսպիսով՝ պետական կառավարման արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է՝

- գեներացնել քաղաքական էլիտայի որակյալ կազմ, որի որակական և գործառնությանը հատկանիշները կհամապատասխանեն ժողովորդավարական կառավարման չափանիշներին,
- ուժեղացնել քաղաքական էլիտայի գաղափարական և արժեքային բաղադրիչները,
- ձևավորել կառավարման սուբյեկտ-օբյեկտ հարաբերություններին առողջ մթնոլորտ,

- ստեղծել կայուն իշխանական հարաբերություններ:

Պետական կառավարման արդյունավետությունը պայմանավորող գործոններ են՝

- քաղաքական էլիտայի կողմից որդեգրված ռազմավարության և խնդիրների հստակ գիտակցումն ու իրականացումը,
- քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմը, որը կորելացնում է քաղաքական էլիտայի որակն ու պետական կառավարման արդյունավետությունը,
- կադրային քաղաքականությունը՝ որպես պետական կառավարման արդյունավետության և հավաքագրման մեխանիզմի ինտեգրատիվ ցուցիչ: Որքան ճկուն է քաղաքական էլիտայի վարած կադրային քաղաքականությունը, այնքան ավելի բարձր է պետական կառավարման արդյունավետությունը,
- հանրային կարծիքը՝ որպես պետական կառավարման արդյունավետության ազդեցացված ցուցանիշ,
- քաղաքական էլիտայի հատկանիշները՝ հաշվի առնելով, որ կադրային քաղաքականության արդյունավետությունը թվային ցուցիչներով ցույց տալը բավարար չէ: Հատկանիշներին համապատասխանելու սկզբունքով կարելի է գնահատել կադրային քաղաքականությունը արդյունավետ է, թե՛ ոչ:

Գ Լ Ո Ւ Խ 3. Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Է Լ Ի Տ Ա Յ Ի Յ Ա Կ Ա Ք Ա Գ Ր Մ Ա Ն
Գ Ո Ր Ծ Ն Թ Ա Յ Ը Յ Յ - Ո Ւ Մ Ե Կ Պ Ե Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ռ Ա Կ Ա Ր Մ Ա Ն
Ա Ր Դ Յ Ո Ւ Ն Ա Կ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Բ Ա Ր Զ Ր Ա Ց Մ Ա Ն Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր Ը
3.1. Յ Յ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Է Լ Ի Տ Ա Յ Ի Յ Ա Կ Ա Ք Ա Գ Ր Մ Ա Ն
Գ Ո Ր Ծ Ն Թ Ա Յ Ը Ե Կ Ա Ռ Ա Ն Զ Ն Ա Յ Ա Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ը

Յ Յ - ու մ ք աղ աք ա կ ա ն Է Լ ի տ ա յ ի կ առ ա վ ա ր մ ա ն պ ա տ մ ու թ յ ա ն ն ո Ր Է ջ Ե ք ա գ Ե Լ ա ն կ ա խ ու թ յ ու ն ը , ո Ր ը հ ա ս ա ր ա կ ու թ յ ա ն գ ա ր գ ա գ մ ա ն ն ո Ր հ ն ա ր ա - վ ո Ր ու թ յ ու ն ն Ե Ր ի և Լ ու Ր ջ մ ա ր տ ա հ Ր ա վ Ե Ր ն Ե Ր ի ս կ ի գ ք Ե Ր : Ա ն կ ա խ ու թ յ ու ն ը մ Ե ծ ա գ Ր Ե Լ Ե կ առ ա վ ա ր Ե Լ ու ն ո Ր ո շ ու մ ն Ե Ր կ ա յ ա գ ն Ե Լ ու պ ա տ ա ս խ ա - ն ա տ վ ու թ յ ու ն ը , ք ա յ ց դ Ր ա ն ի ց ք աղ աք ա կ ա ն Է Լ ի տ ա յ ի հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն գ ո Ր ծ ը ն թ ա գ ը ա վ Ե Լ ի հ ա մ ա կ ա ր գ վ ա ծ չ ի դ ա ր ձ Ե Լ , ո Ր ո վ հ Ե տ ն հ Ր ա ժ ա ր վ Ե Լ ո վ հ ն ի ց ` չ ի ս տ Ե դ ծ վ Ե Լ ն ո Ր ը , առ ա վ Ե Լ ա ր դ յ ու ն ա վ Ե տ ը ¹⁹⁵: Խ ո Ր հ Ր - դ ա յ ի ն ժ ա մ ա ն ա կ ա շ Ր ջ ա ն ու մ , կ ա յ ա գ վ ա ծ ո Ր ո շ ու մ - ն Ե Ր ի և ը ն տ Ր ու թ յ ա ն ի մ ա ս տ ո վ , հ Ե շ տ Ե Ր ա ս Ե Լ ` «Մ ո ս կ վ ա ն Ե ո Ր ո շ ու մ » (ո Ր ո շ ու մ ն Ե Ր ը կ ա յ ա գ վ ու մ Ե Ր մ Ե կ ը ն դ հ ա ն ու Ր կ Ե ն տ Ր ո ն ի կ ո ղ մ ի ց) : Առ ա յ ս ո Ր , հ Ե տ խ ո Ր հ Ր դ ա յ ի ն Ե Ր կ Ր ն Ե Ր ի կ Ե Ր պ ա փ ո խ մ ա ն խ ն դ ի Ր ն Ե Ր ո վ գ ք աղ վ ո ղ մ ա ս ն ա գ Ե տ ն Ե Ր ը ն շ ու մ Ե ն ո Ր ո շ Ե Ր կ Ր ն Ե Ր ու մ ա յ դ ի ն Ե Ր ց ի ա յ ի պ ա հ պ ա ն մ ա ն մ ա ս ի ն ¹⁹⁶ : Չ ն ա յ ա ծ Յ Յ - ու մ ա յ դ ի ն Ե Ր ց ի ա յ ի ց հ Ր ա ժ ա ր վ Ե Լ ու ք ո Լ ո Ր ջ ա ն ք Ե Ր ի ն , գ ո Ր ծ ը ն թ ա գ ը Լ ի ա Ր - ժ Ե ք հ ա ջ ո ղ ու թ յ ա մ ք չ ի պ ս ա կ վ Ե Լ և չ ի կ ա յ ա գ Ե Լ ք աղ աք ա կ ա ն Է Լ ի տ ա յ ի հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն ա յ ն պ ի ս ի գ ո Ր ծ ը ն թ ա գ , ո Ր ը կ ս տ Ե դ ծ Ե Ր ք աղ աք ա կ ա ն Է Լ ի տ ա յ ու մ կ ա դ Ր ա յ ի ն ս ա հ ու ն փ ո փ ո խ ու թ յ ու ն ն Ե Ր , ս Ե Ր ն դ ա - փ ո խ ու թ յ ու ն ա ն Ե Լ ու , ք աղ աք ա կ ա ն ու ժ Ե Ր ի հ ա ր ա ք Ե Ր ա կ ց ու թ յ ու ն ը փ ո խ Ե Լ ու հ ն ա ր ա -

¹⁹⁵ Տ Ե ` ս **Ա Լ թ ու ն յ ա ն Կ**. Յ Յ ք աղ աք ա կ ա ն Է Լ ի տ ա յ ի ձ ա վ ո Ր ու մ ը ժ ո ղ ո վ Ր դ ա վ ա ր ա գ մ ա ն խ ն դ ի Ր ն Ե Ր ի հ ա մ ա տ ք ս տ ու մ , Լ Ր ա ք Ե Ր հ ա յ - ռ ու ս ա կ ա ն հ ա մ ա Լ ս ա ր ա ն ի , Ս Ե Ր ի ա ` հ ու մ ա ն ի տ ա Ր և հ ա ս ա ր ա կ ա կ ա ն գ ի տ ու թ յ ու ն ն Ե Ր , N3(27), Յ Ռ Յ հ Ր ա տ . , Ե Ր և ա ն , 2017, Է ջ 74-87:

¹⁹⁶ Տ Ե ` ս **Егоров В.Г.** Постсоветская трансформация политических систем новых независимых государств: материалы международной науч.-практ. конф. (Москва, 25 ноябр. 2011г.), Изд. МГОУ, М., 2012, Է ջ 52-53:

վորություն: Ավելին, Կովկասի ակադեմիական շվեյցարական ցանցի աջակցությամբ Յայաստանում քաղաքական Էլիտայի ձևավորման մասին ուսումնասիրությունն կատարած հետազոտական խումբը նշել է, որ քաղաքական Էլիտայի սերնդափոխությունը դանդաղել է ¹⁹⁷:

Սույն հետազոտության մեջ, քաղաքական Էլիտայի հավաքագրման գործընթացի խորքային ուսումնասիրության նպատակով իրականացված որակական հետազոտությունը ներկայացնում է Էլիտայի անդամների կարծիքները նդրանց վերլուծությունը: Եվ այսպես՝ հետխորհրդային երկրներում ժողովրդավարական անցումային գործընթացները խափանելու պատճառով առայսօր փորձագիտական կարծիք կա, որ քաղաքական Էլիտայի հավաքագրումը խորհրդային կառավարման համակարգում ավելի կայացած էր, կանոնակարգված և արդյունավետ: Նույնիսկ իր թերություններով հանդերձ խորհրդային քաղաքական Էլիտան, շատերի կարծիքով, արհեստավարժ էր: Յնչեցված փորձագիտական կարծիքների համաձայն, բացի նրանից, որ հասարակության կենսագործունեությունը բոլոր ոլորտներում հետևում էին լավագույն ուղեղներին և կադրերին՝ կարիերան քաղաքականության ոլորտում, ունեցել էին ստիտոլոգիոնալ աստիճանական սխեմա, բոլոր ընթացակարգերը փորձված էին ու հիմնավորված: Մատնանշվել է լավագույնների համար ճանապարհը հարթելու խորհրդային միության կոմունիստական կուսակցության կողմից կիրառվող մարտավարությունը, ըստ որի դեպի քաղաքական Էլիտայի բարձր մակարդակներ լավագույնների ճանապարհը հարթելու համար, միջին մակարդակի

¹⁹⁷ Տե՛ս **Դանիելյան Յ. քաղաքական Էլիտան** հետխորհրդային Յայաստանում. Բնութագրիչները և ձևավորման ուղիները, /Դանիելյան Յ. և ուրիշ./, «Էդիթպրինտ», Եր., 2014, էջ 22-66:

դ Ե ր ա կ ա տ ա ր ն Ե ր ի ն ն շ ա ն ա կ ո ւ մ Է ի ն ո ր ն Է ղ Ե կ ա վ ա ր
պ ա շ տ ո ն ո ւ մ (օ ր ի ն ա կ ` գ ո ր ծ ա ր ա ն ի կ ա մ
ա ր տ ա դ ր ո ւ թ յ ա ն ղ Ե կ ա վ ա ր), ո ր ո վ վ Ե ր ջ ի ն ի ս
ք ա ղ ա ք ա կ ա ն կ ա ր ի Ե ր ա ն հ ա մ ա ր վ ո ւ մ Է ր ա վ ա ր տ վ ա ծ ¹⁹⁸:
Ք ա ղ ա ք ա կ ա ն կ ա ր ի Ե ր ա յ ի ն շ վ ա ծ մ ա ր տ ա վ ա ր ո ւ թ յ ո ւ ն ը
ճ ա ն ա պ ա ր հ Ե ր հ ա ր թ ո ւ մ կ ա դ ր Ե ր ի հ ա մ ա ր և ձ ն ա վ ո ր ո ւ մ
ք ա ղ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա ` տ Ե ղ ա վ ո ր Ե լ ո վ ա յ ն
կ ո մ ո ւ ն ի ս տ ա կ ա ն գ ա ղ ա փ ա ր ա խ ո ս ո ւ թ յ ա ն
շ ր ջ ա ն ա կ ն Ե ր ո ւ մ : Կ ո ւ զ Ե ն ա ն ք ն շ Ե լ , ա յ ն ո ւ ա մ Ե -
ն ա յ ն ի վ , ո ր խ ո ր հ ր դ ա յ ի ն շ ր ջ ա ն ի ք ա ղ ա ք ա կ ա ն
Է լ ի տ ա յ ի հ ա վ ա ք ա գ ր մ ա ն գ ո ր ծ ը ն թ ա ց ն ո ւ ն Ե ր
բ ա ց ա ս ա կ ա ն կ ո ղ մ Ե ր , օ ր ի ն ա կ ` ք ա ց ա ր ձ ա կ
կ ո ւ ս ա կ ց ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն ը , ը ս տ ո ր ի ` պ ա շ տ ո ն ն Ե ր ի
բ ա շ խ ո ւ մ ն ի ր ա կ ա ն ա ց վ Ե լ Է կ ո ւ ս ա կ ց ա կ ա ն ց ո ւ ց ա կ ն Ե -
ր ո վ : Մ ի ա կ ո ւ ս ա կ ց ա կ ա ն ո ւ թ յ ա ն պ ա յ մ ա ն ն Ե ր ո ւ մ
ք ա ղ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա կ ա ր ո ղ Է ի ն հ ա վ ա ք ա գ ր վ Ե լ
ա մ Ե ն ա տ ա ր Բ Ե ր ո լ ո ր տ ն Ե ր ի ց (տ ն տ Ե ս ո ւ թ յ ո ւ ն , ք ա ն ա կ
և ա յ լ ն), ս ա կ ա յ ն փ ո ր ձ ա գ ի տ ա կ ա ն կ ա ր ծ ի ք ն Ե ր ո ւ մ ,
ո ր պ Ե ս դ ր ա կ ա ն Ե ր ն ո ւ յ թ , ն շ վ Ե լ Է հ ա մ ա կ ա ր գ ի
գ ո յ ո ւ թ յ ա ն փ ա ս տ ը : Յ ա մ ա կ ա ր գ ի չ ա փ ա ն ի շ ն Ե ր ի ն
չ հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ո ղ մ ա ր դ ի կ դ ո ւ ր ս Է ի ն մ ն ո ւ մ
հ ա մ ա կ ա ր գ ի ց : Փ ո ր ձ ա գ ի տ ա կ ա ն կ ա ր ծ ի ք ն ա յ ս հ ա ր ց ո ւ մ
բ ա ժ ա ն վ Ե լ Է Ե ր կ ո ւ մ ա ս Ե ր ի : Ա ռ ա ջ ի ն մ ա ս ը հ ա մ ա -
կ ա ր գ ի ա ռ ա վ Ե լ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի շ ա ր ք ո ւ մ ն շ Ե լ Է
ք ա ղ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա յ ի հ ա վ ա ք ա գ ր մ ա ն գ ո ր ծ ը ն թ ա ց ի
ի ն ս տ ի տ ո ւ ց ի ո ն ա լ լ ի ն Ե լ ը , չ հ ա մ ա կ ա ր գ վ ա ծ
կ ա ր ի Ե ր ա յ ի ն ա ճ ի ք ա ց ա ռ վ ա ծ լ ի ն Ե լ ը , պ Ե տ ա կ ա ն և
մ ա ս ն ա վ ո ր հ ա տ վ ա ծ ն Ե ր ի վ ա ր ձ ա տ ր ո ւ թ յ ա ն ա ն հ ա մ ա չ ա -
փ ո ւ թ յ ա ն ք ա ց ա կ ա յ ո ւ թ յ ո ւ ն ը : Ե ր կ ր ո ր դ մ ա ս ը
ք ն ն ա դ ա տ Ե լ Է հ ա մ ա կ ա ր գ ա յ ի ն մ ո տ Ե ց ո ւ մ ն ը ն դ հ ա ն ր ա -
պ Ե ս , ա յ դ թ վ ո ւ մ պ ա ր տ ա դ ի ր կ ո ւ ս ա կ ց ա կ ա ն
պ ա տ կ ա ն Ե լ ո ւ թ յ ո ւ ն ը , հ ո վ ա ն ա վ ո ր չ ո ւ թ յ ա ն
խ ո ր հ ր դ ա յ ի ն ձ ն Ե ր ն ո ւ կ ո մ ո ւ ն ի ս տ ա կ ա ն գ ա ղ ա փ ա ր ա -

¹⁹⁸ Փ ո ր ձ ա գ Ե տ ի հ Ե տ հ ա ր ց ա գ ր ո ւ յ ց ի ց , Յ Յ ս փ յ ո ւ ն ք ի
ն ա խ ա ր ա ր ո ւ թ յ ո ւ ն , ս Ե պ տ Ե մ Բ Ե ր , 2017թ :

խոսու թյունն անվերապահորեն ընդունելու չափանիշները: Ինչպես տեսնում ենք, քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը խորհրդային համակարգում ուներ առավել ություններ և թերու-թյուններ: Այդուհանդերձ, փորձագետների կարծիքով, այդ գործընթացի միջոցով ձևավորված քաղաքական էլիտան չի եղել միայն ստատուսային: Խորհրդային քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացն ուսումնասիրած Կալգարի համալսարանի պրոֆեսոր Բ.Յարասիմը նշել է, որ ինակ, դրա ստատուսային բնույթը՝ էլիտայում լինելը պայմանավորելով բացառապես իշխանութայան մեջ դիրքավորվելու հնարավորութ-թյամբ¹⁹⁹: Փորձագետների այն խումբը, ովքեր խորհր-դային քաղաքական էլիտան միայն ստատուսային չեն համարել, նշել են դրանում իրենց գործու-նենութայան մեջ լավագույն ցուցանիշներ ունեցող հմուտ մասնագետների առկայությունն ու հանրային բարձր ակնածանքը: Այդուհանդերձ, կուզենայինք այս առումով մեջբերել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի սոցիոլոգիական ինստիտուտի առաջատար մասնագետ Ա.Դուկայի կարծիքը, ըստ որի հետխորհրդային միշտաբանա-պետություններում քաղաքական էլիտան չի դադարել լինել բացառապես ստատուսային²⁰⁰: Այդ մասին նշել է նաև փորձագիտական մյուս խումբը՝ ընդգծելով, որ ՅՅ-ում անկախությունից ի վեր քաղաքական էլիտան եղել է միայն ստատուսային: Քաղաքական և պետական բարձր պաշտոններ զբաղեցնող մարդկանց մի մասը էլիտա է դարձել իշխանութայան գալուց հետո, ինչը միշտ չի զուգակցվել իրենց գործունենութայան մեջ լավագույն ցուցանիշներ և անձնական

¹⁹⁹ Տե՛ս **Harasymiw B.** Political Elite Recruitment in the Soviet Union, by Macmillan Press, London, 1984, 1st ed., էջ 11-12:

²⁰⁰ Տե՛ս **Дука А.В.** Власть и элиты, СПб. Интер соицис, Санкт-Петербург, 2014, Т. 1, էջ 8-41:

հատկանիշներ ունենալու հետ: Այդ պատճառով, «քաղաքական էլիտա» եզրույթը լայն հանրության շրջանում ավելի շատ քաղաքական է ընկալվել, քան դրական: Եվ այսպես՝ փորձագետների գերակշիռ մասը նշել են, որ երկու տասնամյակից ավել անկախություն ունենցող ՀՀ-ում քաղաքական էլիտան գտնվել է կայացման փուլում, որի առիթով հնչեցված սահմանումներից մեկի համաձայն նշվել է. «...անկախությունն ից հետո նախընտրելի է խոսել քաղաքական թիմերի հերթափոխման, քան ձևավորված քաղաքական էլիտայի մասին»²⁰¹: Ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունն ու փորձագիտական կարծիքը, ՀՀ-ում իշխանության մաս չկազմող քաղաքական ուժերը եղել են ազդեցության ռեսուրսներ չունեցող կամ շատ թույլ ազդեցություն ունեցող ուժեր (բնորոշ է ԱՊՀ երկրների մի մասին):

Անկախությունն ից հետո, ինչպես արդեն նշել ենք, քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը բնութագրվել է ձևավորման ուղիների բազմազանությունամբ, որոնց թվում նշվել են գործարար աշխարհը, ակադեմիական և գիտական շրջանակները, տեղական ինքնակառավարման մարմինները և այլ ²⁰²: Որոշ հեղինակներ գրել են քաղաքական գործընթացներում ուղեղային կենտրոնների դերի մեծացման մասին ²⁰³: Հաշվի առնելով այդ հանգամանքը, կցանկանայինք նշել, այնուամենայնիվ, որ հավաքագրման հիմնական ինստիտուտներն, ի սկզբանե եղել և մնացել են հանրային ծառայությունը (բյուրոկրատիա) և կուսակցությունները, որոնց դերը էականորեն փոխվել

²⁰¹ Փորձագետի հետ հարցազրույցից, ՀՀ կառավարություն, հոկտեմբեր, 2017թ.:

²⁰² Տե՛ս **Դանիելյան Հ.**, նշվ. աշխ., էջ 18:

²⁰³ Տե՛ս **Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքոյան Ա.** Ուղեղային կենտրոններն արդի քաղաքական գործընթացներում, «Տնտեսագետ», Երևան, 2016, էջ 44-56:

Է 2008 թվականից, որի նկատմամբ ավելի ուշ :
 Վերջինը հաստատել է նաև փորձագետների շրջանում
 անցկացված հետազոտությունը, որոնց մի մասը
 նշել է, որ թեև քաղաքական դերակատարներն ի դեմս
 քաղաքական անհատ գործիչների, հանրահայտ
 բլոգերների, սոցիալական ցանցերում ակտիվ
 մարդկանց կամ ուղեղային կենտրոնների
 ընդլայնվել է, նրանք էական ազդեցություն չեն
 ունեցել քաղաքական էլիտայի հավաքարման
 գործընթացի վրա: Այդ առիթով նշվել է հետևյալ
 կարծիքը. «...հանրային տրամադրություններ
 ձևավորելը ազդեցիկ է դարձնում միգուցե նրանց
 քաղաքական էլիտայի կառուցակարգերում, բայց ոչ
 ավելի»²⁰⁴: Նկատի ունենալով փորձագիտական
 կարծիքը, հավելենք, որ եթե նույնիսկ նշված
 դերակատարներին նույն հարթության մեջ
 դիտարկենք քաղաքական էլիտայի հետ՝ ելնելով
 որոշումների ընդունման վրա ազդելու
 վերջիններիս հնարավորությունից, միևնույն է
 պետք է հիշել, որ վերջնական որոշում ընդունում է
 իշխանությունը, որը կառավարում է և կրում
 քաղաքական պատասխանատվություն: Որոշումների
 ընդունման միակենտրոն համակարգը, որը գործել է
 ՀՀ-ում վերջին տասնամյակում, փորձագետների մի
 մասն անվանել է «իշխող շերտ ու դրան սպասարկող
 մարդկանց շրջապատ»²⁰⁵: Ելնելով որոշումների
 միակենտրոնության սկզբունքից քաղաքական
 էլիտան եղել է մեկը՝ իշխանականը, որը հրահանգ-
 ներ է իջեցրել և պահանջել դրանց անվերապահ
 կատարումը: Թեև զարգացած երկրներում
 որոշումները ինտեգրում են ազդեցության տարբեր
 դերակատարներին և քաղաքական էլիտային, ՀՀ-ում

²⁰⁴ Փորձագետի հետ հարցազրույցից, ՀՀ ԱԺ 6-րդ գումարման
 պատգամավոր:

²⁰⁵ Փորձագետի հետ հարցազրույցից, ԱԺ 5-րդ և 6-րդ գումարման
 պատգամավորներ, նոյեմբեր 2017թ.:

այդպիսի ավանդույթներ չեն հաստատվել ²⁰⁶: Մեզ մոտ, ինչպես ԱՊՀ երկրների գերակշիռ մասում, քաղաքական էլիտան որոշումներ ընդունելիս առաջնորդվել ու բավարարվել է իշխանության ներսում կամ նրանց շատ մոտ կանգնած մարդկանց բանիմացությամբ: Որպես հետևանք, որոշումների ընդունման գործընթացը կրել է սովետային և կենտրոնացված բնույթ՝ ծնելով հանրային անվստահություն և ապահիստեգրված համակարգ: Վերը քննարկված փոփոխություններով հանդերձ, կարծում ենք, քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը բովանդակային փոփոխություն չի կրել, որովհետև երկար տարիներ պահպանվել է միակենտրոն, ուղղահայաց իշխանության մոդելը:

Քաղաքական էլիտան իշխանության հետ է նույնացնել ու հաջորդ պատճառը հասկանալու համար քննարկենք հավաքագրման գործընթացի հիմնական ինստիտուտները, որոնց դերը որոշակիորեն փոխվել է 2008-ից հետո: Ի դեպ, ինստիտուտներին ձևավորման և փոխակերպման խնդիրներին ՀՀ-ում անդրադարձել են Ս.Գրիգորյանը, Ս.Մխիթարյանը և ուրիշներ, ովքեր քաղաքական էլիտայի որակը բարելավելու տեսանկյունից կարևորել են ինստիտուտների ամուր հիմքի ձևավորումը ²⁰⁷: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտրություններով քաղաքական էլիտայի հավաքագրումը (հատակապես 2008 թվականից) չի բերել էլիտայի փոփոխության ու սերնդափոխության, կենտրոնացել ենք ինստիտուտների ազդեցության ուսումնասիրության վրա: Ընտրություններով,

²⁰⁶ Տե՛ս **Ալթունյան Կ.** Քաղաքական էլիտայի ձևավորման և սահմանման խնդիրներին շուրջ, Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու, «Լիմոն» հրատարակչություն, Երևան, 2018, էջ 15:

²⁰⁷ Տե՛ս **Գրիգորյան Ս.** Քաղաքական ինստիտուտների փոխակերպումն ու զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, «ԵԳԵԱ», Երևան, 2008, էջ 51-52; **Մխիթարյան Ս.** Քաղաքական ինստիտուտների ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում, «21-րդ Դար», թիվ 1(15), 2007, էջ 119-127:

ի ն չ պ ե ս ն շ ե լ է պրոֆեսոր Ա.Մարգարովը, փոխվել են ինստիտուտների ազդեցությունը²⁰⁸: Մինչև 2008թ. քաղաքական էլիտան հավաքագրվել է տարբեր ուղիներով, սակայն նկատվել է բյուրոկրատական ինստիտուտի (այսուհետ՝ հանրային ծառայության) գերակայությունը: 2008-ից, ինչպես ցույց տվեց փորձագիտական հետազոտությունը, հավաքագրման գերակա ինստիտուտը դարձել է կուսակցությունը, այսինքն աճել է պետական ու քաղաքական բարձր պաշտոնների նշանակման կուսակցական սկզբունքը, որը արդյունավետ չի գնահատվել: Մինչև նույն ժամանակ, մեր ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կուսակցությունները չեն եղել էլիտայի որակը ձևավորող ինստիտուտներ, ինչը նշանակում է, որ որակական կողմը քիչ թե շատ ապահովել է հանրային ծառայության ինստիտուտը: Այդ երկու ինստիտուտներն են քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի քաղադրիչները, որոնց կադրային քաղաքականությունը լիարժեք չի խթանել որակական բարձր հատկանիշներ ունեցող էլիտայի ձևավորումը ՀՀ-ում²⁰⁹: Քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի հետազոտության շրջանակներում անանձին-անանձին քննարկելն է վերոնշյալ ինստիտուտները: Փորձագետների գերակշիռ մասի կարծիքով, քաղաքական էլիտա տանող **ամենակարճ** ճանապարհն անցնում է կուսակցություններով: Պատասխանների հիմքում ընկած են նվազագույնը երկու փաստ: *Առաջինը*, որ ՀՀ-ում ձևավորվել են կուսակցություններ, որոնք չեն ներկայացնում սոցիալական լայն շերտերին և իրենց

²⁰⁸ Տե՛ս **Маркаров А.А.** Институциональная трансформация в Армении в 1990-2010гг., «Բանբեր Երևանի համալսարանի», Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Երևան, 2011, 135.6, էջ 35-47:

²⁰⁹ Տե՛ս **Ալթունյան Կ.** Պետական կադրային քաղաքականությունը ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման գործին, Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Երևան, 2017, №3(24), էջ 63-71:

գործունեության համար չունեն կադրային և րջ հենք: Այս իմաստով, հետաքրքիր է նշել, որ քաղաքական կուսակցությունները (նկատի ունենք առավել խոշոր և հարաբերականորեն կայացած) անցել են հավաքագրման փուլեր, որոնց ընթացքում կուսակցությունների սոցիալական հենքն ու կադրային քաղաքականության սկզբունքները փոխվել են: Հավաքագրման փուլերը հիմնականում համընկել են այն քաղաքական գործընթացների ժամանակագրության հետ, որոնց դրանք մասնակցել կամ ղեկավարել են: Ըստ այդմ` վերլուծելով քաղաքական կուսակցությունների գործունեությունը փորձագիտական հետազոտության հիման վրա առանձնացրել ենք հավաքագրման երեք փուլեր.

- առաջին` առաջնորդության փուլ, այսինքն` ձևավորումը և անդամների համալրումը,
- երկրորդ` շխանության մեջ լինելու փուլ, որի ընթացքում կուսակցությունը չի կարող խուսափել մասնագիտական առաջընթացի ձգտողների և այդ պահին կուսակցության հետ ընդհանուր շահեր ունեցող այլ շահառուների ներհոսքից,
- երրորդ` հետիշխանական, երբ քաղաքական գործընթացների ակտիվացման պարագայում կուսակցության անդամակցությունը ենթադրում է հիմնականում գաղափարական հենքով միացում, իսկ ակտիվությունը որոշվում է տարածքային կազմակերպությունների, երիտասարդական միությունների աշխատանքով:

Երկրորդ փաստը, որ քաղաքական կուսակցությունները անհատ-կազմակերպություններ են և անդամակցությունը կուսակցությանն իրականացվել է հիմնականում անհատ-գործիչներին

նվիրվածության սկզբունքով, անձնական շահերով, քան գաղափարախոսությանը և քաղաքական համոզմունքներով: Հիմնվելով փորձագիտական կարծիքի վրա, կարող ենք նշել, որ գուցե կուսակցությունը քաղաքական էլիտա տանող ամենակարճ ճանապարհն է, բայց ոչ միշտ արդյունավետ: Անարդյունավետության բազմաթիվ չափանիշներ կարելի է դիտարկել, օրինակ՝ նախարարների փոփոխությունը: Քաղաքական էլիտայի հավաքագրման ուսումնասիրությունը 2012-2017թթ. ցույց է տվել, որ նախարարների փոփոխությամբ ամենաշատն աչքի է ընկել Բարգավաճ Հայաստան կուսակցությունը (ԲՀԿ), որը քաղաքական պատասխանատվության առումով անընդունելի է, իսկ պետական կառավարման որակի առումով՝ անարդյունավետ²¹⁰: Վերոնշյալ իրողությունները և փորձագիտական հետազոտությունը փաստում են, որ քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի և կուսակցությունների ինստիտուցիոնալ կայացման խնդրից բացի, հարկավոր է մշակել ու իրականացնել **արդյունավետ կադրային քաղաքականություն**՝ որակական բարձր հատկանիշներ ունեցող քաղաքական էլիտա ունենալու համար:

ՀՀ-ում քաղաքական կուսակցությունների վերաբերյալ ուսումնասիրություններ կան, սակայն դրանցում կադրային խնդիրները լիարժեք չեն քննարկվել ²¹¹: Աժ 5-րդ և 6-րդ գումարման

²¹⁰ Տե՛ս Հայաստանի հանրապետության կառավարության պաշտոնական կայք, Նախկին նախարարներ, <http://www.gov.am/am/previous-ministers/>:

²¹¹ Տե՛ս **Քենյան Գ.** Հայաստանի Հանրապետության կուսակցությունները և արտաքին քաղաքականությունը, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 2006, No 2(19), էջ 3-11; **Քենյան Գ.** Բազմակուսակցականության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում 1990-2000թթ. (պատմաքաղաքական ակնարկ), Բանբեր Երևանի համալսարանի, Երևան 2001, No 2(104), էջ 52-62; **Քենյան Գ.** Հայաստանի երրորդ հանրապետության կուսակցական համակարգը և քաղաքական կուսակցությունները, «Մխիթար Գոշ», Երևան, 1996: **Չաքարյան Ա.** Անկայունություն և հատվածականություն գործունեությունը նոր ժողովրդավարությունների կուսակցական համակարգերի

և արտախորհրդարանական կուսակցությունների շրջանում անցկացված փորձագիտական հետազոտության արդյունքում մեր կողմից մշակվել և համակարգվել են այն խնդիրները, որոնք անհրաժեշտ են կուսակցությունների կադրային քաղաքականության որակը բարձրացնելու համար: Փորձագետների գերակշիռ մասի կարծիքով, քաղաքական կուսակցությունները էլիտայաստեղծ գործառույթն արդյունավետ չեն կատարել, իսկ պատճառների հիմքում նշվել են **գաղափարներ**ի բացակայությունը, **Ֆինանսական** շահագրգռման միջոցների բացակայությունը: Փորձագիտական կարծիքում նշվել է գաղափարներ մատուցելու կարևորությունը հետևյալ հիմնավորմամբ. «...նույնիսկ այն հասարակությունում, որը հմտացած չէ ժողովրդավարությանը հարկավոր է գաղափարներ մատուցել»²¹²: Արտախորհրդարանական կուսակցությունների գործունեությունն ակտիվացնելու նպատակով փորձագետները նշել են **Ֆինանսական** խնդիրը, այդ թվում դրա օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը: ՀՀ-ում քաղաքական կուսակցությունների կայացմանը նպաստող բայլ կարող է լինել պետական **Ֆինանսավորման** նոր կարգավորումները, հատկապես արտախորհրդարանական կուսակցությունների համար (չափանիշների սահմանումով), որոնք նախատեսված չեն «Կուսակցությունների մասին» օրենքով²¹³: Վերլուծելով 2002 թվականից մինչև 2016 թվականն ընկած ժամանակահատվածում օրենքով

ձևաչափերում, «21-րդ ԴԱԲ», 2006, No 2 (12), էջ 138-155: **Սարգսյան Ա.** Ընդդիմադիր կուսակցությունների ձևավորման գործընթացը և երկբևեռ քաղաքական համակարգի դրսևորումները Հայաստանում, Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 2015, No 1(6), էջ 68-76:

²¹² Փորձագետի հետհարցազրույցից, ՀՀ 5-րդ գումարման պատգամավոր, հոկտեմբեր, 2017թ.:

²¹³ Տե՛ս «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, ընդդեպ 16-ին, 2016, Հոդված 26, www.arlis.am:

կուսակցությունների ֆինանսավորման կարգը, կարող ենք նշել, որ օրենքով պետական ֆինանսավորում է հատկացվել միայն այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որը ԱԺ վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի անճշտությունների թվի գումարի առնվազն 3%-ը²¹⁴: 2007 թվականից ի վեր ԱԺ գումարման ընտրությունների արդյունքներից երևում է, որ խորհրդարան չանցած կուսակցությունները, որպես կանոն, չեն հասել այդ սահմանագծին: Այսպես օրինակ՝ «Ազգային միաբանություն» կուսակցությունը 2007թ. ընտրություններում ստացավ 2.7%, 2012թ. ընտրություններում՝ «Յայաստանի կոմունիստական կուսակցությունը» (ՅԿԿ)՝ 1.50%, «Յայաստանի դեմոկրատական կուսակցությունը»՝ 0.37%, 2017թ. ընտրություններում՝ «Կոնգրես-ՅԺԿ» դաշինքը՝ 1.65%, ՅԿԿ՝ 0.75%, «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքը՝ 2.07%: Յաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ 2016թ. օրենքով երկու անգամ անընդմեջ ընտրությունների չմասնակցելու դեպքում կուսակցության գործունեությունը կարող էր կասեցվել, կարող ենք նշել, որ բազմակուսակցական համակարգի ձևավորմանն ուղղված կարգավորումները արդյունավետ չեն եղել, հատկապես խորհրդարանական կառավարման ձևին անցնելու տրամաբանության շրջանակներում:

Յաջորդ կարևոր խնդիրը, որ փորձագետները կարևորել են կուսակցության կադրային քաղաքականությունը որակական առումով

²¹⁴Տե՛ս «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2002թ. հունիսի 3-ին, Հոդված 27-ի 2-րդ մաս; «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2016թ. դեկտեմբերի 16-ին, Հոդված 26-ի 3-րդ մաս:

բարելավելու համար, **Կադրային ֆիլտրերի անհրաժեշտությունն** է, ընդ որում ինչպես քաղաքական և պետական բարձր պաշտոններին նշանակումներ անելիս, այնպես էլ կուսակցության շարքերում մարդկանց առաջխաղացումը կանոնավորելիս: Ճիշտ է կուսակցություններում միավորվելու համար ոչ մի երկրի օրենսդրությամբ չի սահմանվում մասնագիտական և կրթական բարձր ցենզդնել, սակայն կրթությունն ու կուսակցական շարքերում աշխատանքը, ըստ փորձագիտական կարծիքի, անհրաժեշտությունն է՝ ՀՀ-ում կուսակցությունների կադրային քաղաքականությունը որակապես լավացնելու համար: Կադրային քաղաքականության հիմքում այդ չափանիշների բացակայությունն արժեզրկել է կուսակցության ինստիտուտը, ինչը հաստատում է հետյալ կարծիքը. «...նշված չափանիշների բացակայության պատճառով քաղաքական կուսակցության նախկին անդամներն ավելի շատ են, քան գործողները»²¹⁵: Փորձագետների մյուս խումբը, ովքեր իրենց կուսակցության կադրային քաղաքականության շրջանակներում այնքան էլ չեն կարևորել կադրային ֆիլտրերը, նշել են, որ կուսակցությունը գաղափարի, սկզբունքների և ծրագրերի միասնական հարթակ է կուսակցական աշխատանքն է մարդկանց դարձնում արհեստավարժ քաղաքական գործիչներ: Ընդգծվել է, որ քաղաքականությունը, մասնագիտական գործունեությունն է քաղաքական կուսակցությունների համար, սակայն վերջինը խնդիր չի դնում հավաքագրել բացառապես արհեստավարժներին: Նման մոտեցման շրջանակներում առավել արդյունավետ է գնահատվել հանրային գործունեության սկզբունքով կադրերի հավաքագրումը, որը հիմնված

²¹⁵ Փորձագետի հետ հարցազրույցից, ՀՀ ԱԺ 6-րդ գումարման պատգամավոր, նոյեմբեր 2017թ.:

Ե «Ճանաչելի ու թյան» վրա: Հետագոտություն արդյունքները ցույց են տվել, որ այնուամենայնիվ, քաղաքական և պետական բարձր պաշտոններին կուսակցության կադրերին առաջադրելու հիմքում փորձագետների մեծ մասը դրել է «*բալանսավորված ընտրությունն արժանի-քային և անհատական հատկանիշների հիման վրա*» սկզբունքը: Ընդունելով հնչեցված փորձագիտական կարծիքների կարևորությունը, հետագոտությունը ցույց է տվել, որ ՀՀ-ում քաղաքական կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը կադրային որոշումներ կայացնելիս առաջնորդվել է հիմնականում բերվող ձայների տոկոսով: Հաստատելու համար, որ մեխանիզմը հենց այդ սկզբունքով է գործել, բավական է համեմատել խորհրդարանական ընտրությունների կուսակցական ցուցակներում նշված կուսակցական/անկուսակցական հարաբերակցությունը թվերով: Օրինակ, 2017 թվականի խորհրդարանական ընտրություններին «Հայ հեղափոխական դաշնակցության» (ՀՅԴ) ընտրական ցուցակի 60%-ը կուսակցականներ էին, իսկ 40%-ն՝ անկուսակցական²¹⁶, մինչդեռ «Հայկական վերածնունդ» կուսակցության ընտրական ցուցակում անկուսակցականներն ընդհանրապես բացակայում էին: Վերջինը կարելի է համարել նաև քաղաքական կուսակցությունում կադրային սովորական ցուցանիշ, երբ կադրերի պակասը լրացնելու համար ընտրացուցակում ներառվում են նաև մեծ թվով անկուսակցականներ:

ՀՀ-ում քաղաքական կուսակցությունների նստիտուցիոնալ և կադրային բարեփոխումների մյուս խնդիրը վերաբերում է բազմակուսակցական

²¹⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայք, ապրիլ 2, 2017թ. ընտրություններ, Գրանցված թեկնածուներ, <http://www.elections.am/parliamentary/election-27339/>:

համար գին: Փորձագետներին մի խումբ, տարածաշրջանային և գլոբալ անվտանգության ֆունդին արհեստական և անարդյունավետ գնահատել բազմակուսակցականությունը, այդ թվում նաև ՀՀ-ում: Հետազոտությունից պարզ է դարձել, որ բազմակուսակցական համակարգի տրամաբանության հիմքում, մեկ տասնամյակից ավելի ընկած է քաղաքական և մասնավոր շահերի փոխնունացման սկզբունքը: Այդ պատճառով, հայաստանյան հասարակությունում գործող կուսակցություններին միջև ոչ թե ծրագրային և գաղափարական, այլ շահերի ջրբաժանն է անցնում և հետևաբար իշխանության համար պայքարը մարմնավորել է շահերի մրցակցություն: Բազմակուսակցական համակարգի արհեստական լինելով մասին է փաստել նաև կուսակցություններին ներկայացուցչությունը: Պատշաճ տարածքային ներկայացուցչություն չունենալը ըստ փորձագիտական կարծիքի ազդում է կադրային քաղաքականության որակի վրա, որի համաձայն հնչել է հետևյալ կաժիքը. «...տարածքային ներկայացուցչություններին սակավությունը թույլ չի տալիս, որ կուսակցություններին քանակական և որակական կազմը համապատասխանի քաղաքական գործընթացներին, օրինակ՝ ընտրություններին պատշաճ մասնակցությունը»²¹⁷: Ավելին, հետազոտության ժամանակ նշվել է, որ կազմակերպչական աշխատանքի անարդյունավետությունն է պատճառը, որ չեն ձևավորվել «ամուր կազմակերպչական» հիմքերով, կայուն ընտրազանգված ունեցող կուսակցություններ: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նույնիսկ խորհրդարանական քաղաքական

²¹⁷ Փորձագետի հետ հարցազրույցից, ժամանակություն և կուսակցություն, հոկտեմբեր, 2017թ:

կուսակցություններ կան, որոնք ոչ միայն քիչ են ներկայացված, այլև որոշ տեղերում վերջիններս կուսակցական կառույցները բացակայում են: Օրինակ՝ «Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ» կազմակերպության տվյալներով 2012թ. դրությամբ ՀՀ ամբողջ տարածքում հաշվվում են ՀՅԴ-ն թվով 58 տարածքային ստորաբաժանումներ, ԲՀԿ-ն՝ 59, «Ժամանակակիցություն» կուսակցությունը՝ 43, ՀՀԿ-ն՝ 103, ՀՀԾ-ն՝ 48: Իսկ ամենաքիչ թվով տարածքային ստորաբաժանումներ ունեցող կուսակցություններն են «Ազատ դեմոկրատներ»՝ 11, «Հայաստանի աշխատավորական սոցիալիստական» կուսակցությունը՝ 11, «Հայաստանի դեմոկրատական» կուսակցությունը՝ 27, «Հայաստանի մարքսիստական» կուսակցությունը՝ 16, «Հայաստանի Բրիտոնեա-Դեմոկրատական միություն»՝ 6²¹⁸: Եվ այսպես կուսակցության՝ որպես քաղաքական էլիտայի հավաքագրման ինստիտուտի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրա հավաքագրման **ուղղահայաց մեխանիզմները** թույլ են, որից համակարգի ներդաշնակությունը բավականին խաթարված վիճակում է: Քաղաքական էլիտայի ուղղահայաց հիերարխիան ընդհատված է և կտրտված: Հետազոտության ժամանակ տրված գնահատականների համաձայն, այդ ընդհատվածությունը հաղթահարելու ուղղված քայլերից մեկը տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում սկսած բարեփոխումներն են: Փորձ է արվել համայնքների խոշորացման միջոցով (Բերդ, Սիսիան) նպաստել ընտրովի ներկայացուցիչների ձևավորմանը համայնքներում: Հնչեցված կարծիքի համաձայն, ընտրովի ներկայացուցիչների ձևավորման

²¹⁸ Տե՛ս «Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ» ոչ առևտրային կազմակերպության պաշտոնական կայք՝ www.fcsd.am:

դեպքում հնարավոր է՝ ի հայտ գա քաղաքական
Էլիտայի թեկնածու : Այսինքն , այդ դեպքում կարելի
է խոսել քաղաքական Էլիտա նոր թեկնածուների
հավաքագրման մասին , իսկ մինչ այդ , մարգալտարանը
որպես կենտրոնական կառավարման մարմին՝ ինքն էր
որոշում քաղաքական Էլիտայի շարքերը համալրող
մարդկանց , որոնք կարող է ընդհանրապես ծանոթ
չլինեին ժողովրդին :

Շարունակելով հետազոտության օբյեկտների
քննարկումը , նշենք , որ քաղաքական Էլիտայի
որակական կողմն ապահովող ինստիտուտը , ինչպես
արդեն նշվել է վերը , ՀՀ-ում հանդիսացել է
հանրային ծառայության ինստիտուտը : Հանրային
ոլորտի կառավարման բարեփոխումների մասնագետ
Ա.Խուդավերդյանի կարծիքով , պետական կառավարման
համակարգի կառուցվածքային և գործառնության
վերափոխումներն ու քաղաքացիական ծառայության
ներդրման ճանապարհը կազմել են համալիր մեկ
միասնական ծրագիր²¹⁹ : Հանրային ծառայության
ինստիտուտի դերը պետակաշինության գործում
կարևորել են Յ.Սուվարյանը , Վ.Քալաշյանը²²⁰ : Նկատի
ունենալով հանրային ծառայության ոլորտի
բարեփոխումների շարժընթացը , ուսումնասիրու-
թյունը ցույց է տվել , որ ՀՀ գործադիր մարմինն՝ ի
դեմս կառավարության , որդեգրել է առաջնային
հանրային ծառայության ներքին մրցունակ
մատուցման ու վերահսկողության գործառնյա-
նների կատարման քաղաքականությունը : Այդ նպատա-
կով , կառավարությունն օժտված է եղել հանրային
ծառայության պաշտոնների հաստիքացուցակների

²¹⁹ Տե՛ս **Խուդավերդյան Ա.** Հանրային ոլորտի բարեփոխումները
Հայաստանի Հանրապետությունում , Սարվարդ հրատ. , Երևան , 2008 ,
Էջ 12 :

²²⁰ Տե՛ս Տե՛ս **Սուվարյան Յու.** Պետական կառավարման և տեղական
ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում , /Յու.
Սուվարյան և ուրիշներ / , «Տնտեսագետ» , Երևան , 2014 , Էջ 59-70 :
Քալաշյան Վ. Պետական կառավարման արդյունավետություն ,
ԵՊՀ հրատ. , Երևան , 2014 :

սահմանման, ինչպես նաև օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու լայն լիազորություններով ու իրավունքներով: Վերջինը պայմանավորվել է նաև խորհրդարանական հանձնաժողովների կողմից կազմակերպվող խորհրդարանական լսումների՝ որպես այլընտրանքային գործիքների ոչ բավարարու սահմանափակ ազդեցությունը²²¹: Կուզենանք նշել, որ մեր ուսումնասիրություններն արդյունքում ցույց է տրվել, որ օրենսդրական նախաձեռնությունների թվով և ակտիվությունով կառավարությունն ակնհայտ առավելություն է ունեցել խորհրդարանի հանդեպ²²²:

Ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, 2000-ականների սկզբից ՀՀ-ում ձևավորվել է երկմակարդակ պետական ապարատ, որի կառավարչական մասը (public administration) գործել է քաղաքացիական ծառայության համակարգով, իսկ քաղաքական դեկավարումը (public policy)՝ քաղաքական, հայեցողական սկզբունքով: Ըստ այդմ, առկա է կարիերայի կառուցման և կարերի հավաքագրման երկու գործընթաց՝ կառավարչի կարիերա և դրա ածանցյալը: Հաշվի առնելով բյուրոկրատական ինստիտուտի դերը քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացում նշենք, որ կարային քաղաքականության տրամաբանությունն էականորեն փոխվել է 2011թ., երբ ընդունվեց

²²¹ Տե՛ս Ալթունյան Կ. Քաղաքական էլիտայի հավաքագրման բյուրոկրատական որոշ ասպեկտների շուրջ, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 1/2017, «Պետական ծառայություն», Երևան, 2017, էջ 179-187:

²²² Տե՛ս Աժ քաղաքական ուժերի օրենսդրական գործունեության մշտադիտարկում, «Մանդատ» տեղեկատվական հասարակական կազմ., Երևան, 2012, էջ 4-7: Աժ մշտադիտարկում, 5-րդ գումարում. 3-րդ նստաշրջան, Երևան, 2013, էջ 4-7: Աժ մշտադիտարկում, 5-րդ գումարում. 5-րդ նստաշրջան, «Մանդատ» տեղեկատվական հասարակական կազմ., Երևան, 2014 էջ 4-7: Աժ մշտադիտարկում, 5-րդ գումարում. 8-րդ նստաշրջան, 2015, էջ 4-7, www.parliamentmonitoring.am/reports.html:

«Հանրային ծառայություն մասին» ՀՀ օրենքը²²³: Ըստ այդ օրենքի առանձնացրել ենք ընտրովի և նշանակովի պաշտոն զբաղեցնող (քաղաքական, հայեցողական, քաղաքացիական) և մրցույթի (արտամրցույթի) սկզբունքով պաշտոն զբաղեցնողների խմբերը: Առաջին խմբի պաշտոնյաները հավաքագրվել են քաղաքական ուժերի հարաբերակցության, քաղաքական կարիերայի և քաղաքական ծառայությունների մատուցման սկզբունքներով, ինչից ելնելով կարող ենք նշել, որ հավաքագրման համակարգը կրել է բավականին փակ բնույթ: Իսկ երկրորդ խմբի ծառայողներին հավաքագրելու առումով պահպանվեց քաղաքացիական ծառայության (այսուհետև՝ քաղծառայության) համակարգը, որի արդյունավետության բարձրացմանը էապես նպաստել է պետական պաշտոնյաների էթիկայի կանոնների սահմանումը²²⁴: Այնուամենայնիվ, օրենսդրական կարգավորումներում հանրային ծառայության ոլորտում կադրային քաղաքականության մեխանիզմը լիարժեք արտացոլված չէ: Թեև հանրային ծառայության կառուցվածքը համապատասխանել է միջազգայինին, այդուհանդերձ, ունեցել է առանձնահատկություններ, որոնք փորձել ենք վերհանել հենց որակական հետազոտության միջոցով: Նախքան բուն կադրային քաղաքականության խնդիրները քննարկելը, նշենք, որ հետազոտությանը ցույց է տվել, որ հանրային ծառայությանը քաղաքական էլիտա անցնող բոլոր ճանապարհներից ամենաերկարատև, դանդաղ և անորոշ ճանապարհն է գնահատվել. «...եթե մարդը հեռահար

²²³ Տե՛ս «Հանրային ծառայություն մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2011թ. մայիսի 26-ին:

²²⁴ Տե՛ս **Քալ աշյան Վ.** Քաղաքացիական ծառայության ամբողջականության սկզբունքները ՀՀ-ում, «Ասողիկ» հրատ., Երևան, 2015, էջ 7-9; **Քալ աշյան Վ.** Հանրային կառավարման կառուցվածքային հիմնախնդիրները և զարգացման ուղենիշները, «Հանրային կառավարում» գիտական հանդես, No 3-4, Եր. 2013, էջ 71-84:

նպատակ ու նի գբաղվել քաղաքականությունը ամբկարող է սկսել հանրային ծառայություններից, բայց դատարկար կարող է տնել »²²⁵: Հանրային ծառայության տարբեր ոլորտներում աշխատանքի գրավչությունը փորձագիտական հետազոտության արդյունքներով ցածր է գնահատվել: Պատճառների շարքում առաջինը նշվել է ցածր վարձատրությունը: Հանրային ծառայության ոլորտում գբաղված քաղաքացիների վարձատրության դինամիկայի ուսումնասիրությունը 2008-2017 թթ. ընթացքում ցույց է տվել, որ աշխատավարձերը չնչին մակարդակով են աճել, ընդ որում երկրում ընդհանուր թանկացումների \$ոնին՝ դրանք գրեթե աննկատ են մնացել ²²⁶: Հանրային ծառայության տարբեր ոլորտներում, այդ թվում կառավարման միջին և ցածր օղակներում, վարձատրության խնդիրը կարևորվել է կադրային քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու համար ²²⁷: Եթե դիտարկենք կառավարման օպտիմալացման համատեքստում իրականացված բարեփոխումները (հատկապես վերջին 8-9 տարիներին), կտեսնենք, որ դրանք կատարվել են աշխատանքի վերադասավորման ու վերաբաշխման նպատակով, ինչը չի հանգեցրել հանրային ծառայության համակարգում \$ինանսական բարելավման կամ աշխատավարձերի բարձրացմանը:

Համակարգային հաշորդ խնդիրը, որը հետազոտության արդյունքներով դուրս է բերվել, վերաբերում է հանրային ծառայության համակարգում կադրային \$իլտրերի բացակայությունը: Հանրային ծառայության

²²⁵ Փորձագետի հետհարցազրույցից, ՀՀ կառավարություն, սեպտեմբեր, 2017թ.:

²²⁶ Տե՛ս Պետական աշխատողների միջին աշխատավարձը նվազել է, մայիս 1, 2017, <http://hetq.am/arm/news/78305/petakan-ashkhatoxneri-mijin-ashkhatavardzy-nvazel-e.html>:

²²⁷ Տե՛ս **Չոբանյան Մ.** Քաղաքացիական ծառայողների վարձատրության կազմակերպման խնդիրները, «Այլ ընտրանք» գիտական հանդես, Երևան, 2017, 10/2017, էջ 114-120:

օրենսդրական ուսումնասիրությունից հանգել ենք, որ հանրային ծառայության համակարգի ձևավորման գլխավոր նպատակը եղել է քաղաքական իշխանությունն ապակենտրոնացնելը: Այդ նպատակի իրականացման համար կատարվել են օրենսդրական բարեփոխումներ և փոփոխություններ, սակայն փորձագետների կողմից հնչեցված խնդիրները բավարար հիմքեր են տալիս կարծելու, որ դրանք նպատակին չեն ծառայել: Ելնելով դրանից, կարող ենք նշել, որ հանրային ծառայության համակարգը չի դարձել այն կադրային ֆիլտրը, որով հնարավոր կլիներ ճանապարհ բացել նոր «լավ» կադրերի հավաքագրման համար: Եվ այսպես, առկա փորձագիտական կարծիքների համաձայն՝ կադրային փոքր հենքի առկայության պայմաններում, քաղաքացիական ծառայությունը պետական կառավարչական մարմիններում ներդրման պահից դարձել է կադրային քաղաքականությանը թելադրող ինստիտուտ, սակայն չի կատարել կադրերի ֆիլտրի գործառնությունը: Այդ կապակցությամբ նշվել է հետևյալ կարծիքը. «...քաղաքացիական ծառայության ամենաթույլ կողմը նեղ մասնագիտական սկզբունքով կադրային քաղաքականությանն վարելու անկարողությունն է»²²⁸: Մեր ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թեպետ հանրային կառավարման բարեփոխումների ընթացքում քաղաքացիական ծառայությունը ներդրման և ընդլայնման փուլերն արդեն անցել է, սակայն երրորդ՝ «արժանիքային համակարգի» փորձմենք չունենք: Այդ համակարգի գործարկման գործիքակազմ դեռևս մշակված չէ: Վերջինի բացակայության մասին, մեր կարծիքով, փաստում են պետական ծառայության առանձին ոլորտներում

²²⁸ Փորձագետի հետ հարցազրույցից, 33 գյուղատնտեսության նախարարություն, նոյեմբեր, 2017թ.:

կիրառվող կադրերի ընտրության ընթացակարգերն ու մեթոդները: Դրանցից մեկը, ինչպես սցոլոգ Ետվել փորձագիտական հետազոտությանը, պետական կառավարչական մարմիններում ներքին կադրերի կարիերային աճն ապահովելու եղանակն է. «...նախարարությանը թափուր հաստիքներ առաջանալու դեպքում նոր կադրերի փոխարեն ժամանակավորապես նշանակվել են համակարգային կադրեր, որոնք հետո մասնակցել են ըստ կարգի մրցույթի: Նման մեխանիզմով համակարգում եղած կադրերին հնարավոր է եղել «կապելու» համակարգին»²²⁹: Քաղաքացիական ծառայության համակարգի կարային ֆիլտրի գործառնույթի իրականացման հաջորդ խնդիրը, ըստ փորձագիտական հետազոտության արդյունքների, բովանդակային աշխատանքի և որակի սկզբունքներով կադրեր ընտրելու մեխանիզմի բացակայությունն է: Փորձագետների մի մասը, այս համատեքստում նշել են, որ նշված խնդրին առերեսվելու պատճառով պետական ծառայության որոշ տեսակներ առանձնացվել են՝ ելնելով դրանցում իրականացվող աշխատանքի բովանդակային և որակական առանձնահատկություններից: Քաղաքացիական ծառայության խորհրդի (2018-ից՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակի) գործունեության ուսումնասիրությանը հաստատելու է գալիս այն, որ վերջինիս իրավասությունների դաշտը չի ներառում պետական կառավարման առանձին ոլորտները: Վերջինը հիմնավորող երկու փաստեր կարելի է նշել: Առաջինը, որ այդ ոլորտները կարգավորող օրենքներով նախատեսվում են փակ, մրցութային քննության ներքին անցկացման

²²⁹ Փորձագետի հետ հարցազրույցից, 33 կրթության և գիտության նախարարությանը, հոկտեմբեր, 2017թ.:

հնարավորությունը²³⁰: Երկրորդը՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների մասին պաշտոնական վիճակագրությունը: Օրինակ՝ 2015թ. տվյալներով, քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված նվազագույն մրցույթների քանակով նշվել են հետևյալ պետական մարմինները՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն (1), ՀՀ նախագահի աշխատակազմ (5), իսկ ՀՀ արտաքին գործերի նախարարությունն առհասարակ մրցույթներ չի հայտարարել (0)²³¹: Ինչպես տեսնում ենք, հանրային ծառայության համակարգում իրականացվող կադրային քաղաքականության անհամաչափությունը փաստում է, որ կադրային ֆիլտրի գործառույթն արդյունավետ չկատարելու արդյունքում խախտվել է համակարգային ներդաշնակությունը:

Կադրային քաղաքականության անհամաչափությունը չի սահմանափակվում վերոնշյալով: Հանրային ծառայության հաստիքացանկով նախատեսված քաղաքական և հայեցողական բարձր պաշտոններում կադրերի հավաքագրման կարգավորումը ևս ունի որոշակի անհամաչափություններ: Պաշտոնատար անձանց վարձատրության՝ օրենքով սահմանված դրույքաչափերի աղյուսակի ուսումնասիրությունը կարող է հաստատել նշված անհամաչափությանը: Ըստ 2013թ. ընդունված «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի, 12.00 պաշտոնային դրույքաչափերի

²³⁰ Տե՛ս «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդ. է մարտի 23-ին, 2018 թ., «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդ. է մարտի 23-ին, 2018թ., «ՀՀ ԱԺ աշխատակազմում պետական ծառայության մասին», ընդ. է հունիսի 11-ին, 2009թ., <http://www.arlis.am>:

²³¹ Տե՛ս «Տեղեկանք համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 2015-ին անցկացված մրցույթների վերաբերյալ», <http://www.csc.am/documents/statistics/23.pdf>:

հաշվարկման գործակիցներ ունեցող պաշտոնատար անձանց լիազորություններ ղեկնելու թյուրմեզությամբ, որ միևնույն դրույթաչափերի հաշվարկման գործակիցներ ունեցող և դրանց համապատասխան վարձատրվող պաշտոնատար անձինք իրականացնում են լիազորություններ և գործառնություններ, որոնք ոչ միայն համաչափ չեն, այլ նաև ունեն պատասխանատվության խիստ տարբեր մակարդակներ, օրինակ՝ ՀՀ նախարարի ու ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության պետի հաստիքները²³²: Բացի այդ, ուսումնասիրությունն այդ պաշտոնների մասով վերհանել է, որ քաղաքական և հայեցողական բարձր պաշտոններ զբաղեցնելու համար բավարար չեն միայն թեկնածուների՝ օրենքի չափանիշներին համապատասխանությունը, ծառայողական ստաժը: Քաղաքական պաշտոններում նշանակման սկզբունքների շարքում, բացի օրենքով սահմանված չափանիշներից, փորձագետները նշել են անձնական կապերը, վերադասի հետ նախկինում աշխատանքային փորձը, թիմի անդամ լինելը, պաշտոնի անձնագրերը փոփոխելու հնարավորությունը քաղաքական վերադաս սուբյեկտների կողմից: Մատնանշվել են ոչ պաշտոնական այլ չափանիշներ, որոնք հաշվի են առնվել, որպես կանոն, քաղաքական և հայեցողական պաշտոններում նշանակման ժամանակ, որի առթիվ նշվել է. «...կարևոր է ազդեցիկությունը, որը ստորակարգության սկզբունքով գործող պետական կառավարման համակարգում պայմանավորված չէ միայն ծառայողական աստիճանով (ռանգով)»²³³: Փորձագետների մի մասն էլ նշել է անձի համոզելու

²³² Տե՛ս «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2013 թ. դեկտեմբերի 12-ին, էջ 16, <http://www.arlis.am>:

²³³ Փորձագետի հետ հարցազրույցից, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, նոյեմբեր, 2017թ.:

կարողու թյուները, վերադասի կարծիքը անվերապահորեն կատարելը և այլն: Ոչ պաշտոնական չափանիշներին առկայու թյուները փաստում է, որ կադրերի ընտրության չափանիշներում բաց թողնված լուսանցքներ կան, որոնք չեն լրացվում ո՛չ սահմանադրությամբ, ո՛չ օրենքներով: Որակական հետազոտություները ցույց է տվել, որ պաշտոնական չափանիշներին հետմեկտեղ համակարգում գնահատվել են անձնական նվիրվածություները իշխանություները, հեղինակություները և անձնական կապերը, հետևաբար պաշտոնական չափանիշները կարևորվել են այնքանով, որքանով որ սահմանվել են կարգով: Քաղաքական պաշտոններում նշանակումն ու ընտրություները կարգավորող օրենսդրության ուսումնասիրություները ներկայացրել են կարող ենք նշել, որ ընտրովի քաղաքական պաշտոնների համար պարտադիր չի եղել բարձրագույն կրթություները և ներառելով ²³⁴: Հաշվի առնելով, որ հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վերապահվել է իրենց լիազորություներին շրջանակներում ընդունել որոշումներ և համակարգել դրանց կատարումը, 2011թ. ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքում դարձյալ այդ պաշտոններին նշանակումը վերապահվել է քաղաքական դեմքերին, ընդ որում, չսահմանելով, թե ինչ սկզբունքով են կատարվում նշանակումները: Ելնելով վերոնշյալից, փորձագիտական հետազոտության շրջանակներում կարևորել է հատկապես հայեցողական (բայց ոչ միայն) պաշտոններում **նլորտային մասնագիտացումն ու աշխատանքը**, ինչը չի եղել այդ պաշտոններում կադրերի ընտրության կամ նշանակման ժամանակ: Այդուհանդերձ, փորձագետների մյուս խումբը պարտադիր չի համարել

²³⁴ Տե՛ս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2011թ. վականի մայիսի 26-ին, Հոդված 4-ի 4-րդ մաս:

ոլորտային մասնագիտացման սկզբունքը՝ նշելով, որ պետական կառավարման համակարգում արդյունավետ կադրերին որոշում են ըստ գործառույթների: Ըստ այդմ, նորմալ է գնահատվել նաև քաղաքական ու հայեցողական պաշտոններում տարբեր մասնագիտությունների տեղարդյան ցայաշտոնավարումը: Գործառույթների կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ըստ փորձագիտական կարծիքների, կարևորվել է վերապատրաստումների մեխանիզմը, թեև պետք է նկատի ունենալ, որ ըստ օրենքի, քաղաքական և հայեցողական պաշտոններ գբադեցնողները վերապատրաստում չեն անցնում: Ինչպես հետագայում ցույց տվեց մեր ուսումնասիրությունը, վերապատրաստման արդյունքների ստուգման ընթացակարգերի և հետադարձ կապի բացակայությունը փաստում են հավաքագրման արդյունավետության տեսանկյունից դրանց արդարացված չլինելը: Չափի առնելով այդ հրոդու-թյունը, խորհուրդ ենք տալիս ներդնել վերապատրաստման նոր ընթացակարգեր հանրային ծառայության այլ պաշտոններում, որոնցից են՝ խմբային հաշվետվությունները, ձեռք բերված գիտելիքների և փորձի փոխանակումը գործընկերների հետ աշխատանքային սեմինարների կազմակերպման միջոցով և այլ: Իսկ կառավարություն և նախարարությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ծախսերը կրճատելու նպատակով կարելի է նաև հեռահար վերապատրաստումների արտասահմանյան փորձը կիրառել: Չետազոտության արդյունքները հաշվի առնելով և ուսումնասիրելով քաղաքական և հայեցողական պաշտոններում նշանակման սկզբունքները, ինչպես օրենսդրական այնպես էլ փաստացի, չեն ապահովել **նպատակային կադրային քա-**

դաքականություն: Այս տեղից էլ հետևում է, որ քանի դեռ այն չի կիրարկվել, քաղաքական պաշտոններում նշանակումները չեն ապահովելու պետական կառավարման արդյունավետությունը: 2018թ. ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, որով փոխվեց հանրային պաշտոնների դասակարգման ձևը, նույնպես այս խնդիրը չլուծվեց: Ավելի և օրենքի ուսումնասիրության հիման վրա կարող ենք նշել, որ հանրային պաշտոնների դասակարգման նոր ձևը ընդլայնել է քաղաքական պաշտոնները, որոնց մեջ ներառվել են փոխնախարարները, փոխվարչապետները²³⁵: Քաղաքական դեմքերի կողմից նշանակվող հաստիքների մեծացման մասին է փաստում նաև վարչական և հայեցողական պաշտոնների օրենսդրական կարգավորման կարգը²³⁶: Թեպետ քաղաքական գույվածությունը հռչակված է որպես հանրային ծառայության կարևոր սկզբունք, ինչպես տեսնում ենք, հանրային ծառայությունն ունի քաղաքականացման միտում:

Ուսումնասիրելով և նկատի ունենալով կուսակցությունների և հանրային ծառայության կադրային քաղաքականության խնդիրները, կուզենանք նշել նաև, որ դրանցից ցանկացածով քաղաքական էլիտա հավաքագրվելու համար կարևորվել են երեք պայմաններ: **Առաջին պայմանը** հասարակական-քաղաքական համակարգում տեղի ունեցող գործընթացներին, ծրագրերին և կառույցներին ինտեգրված լինելն է: **Երկրորդը**՝ իրավիճակին և գործերին լավ տիրապետելը, որը համակարգում հայտնվելու և մնալու կարևոր

²³⁵ Տե՛ս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, ընդ. է 2018թ. մարտի 23-ին, Հոդված 5, 2-րդ մաս:

²³⁶ Տե՛ս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2018թ. մարտի 23-ին, Հոդված 6և 8:

պայման է: **Երրորդը՝** անցած ճանապարհն ու դրա հիմքում ընկած առաջնահերթությունները:

Եվ այսպես, քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի խորքային ուսումնասիրությունը թույլ է տվել վերհանել ու համակարգային հատկանիշներ: Հետազոտության էմպիրիկ պատասխաններին հիման վրա, քաղաքական էլիտայի հատկանիշների մասին հարցումների պատասխանները խմբավորել են ք,և,ը ստայ դմ,առավել կարևորվել են.

- *Հաբիտուսը (բնութագրում է անհատի սոցիալական վարքը)*, որի բնութագրիչներն են ազգային մտածողությունը, բանիմացությունը, մասնագիտացումը, քաղաքական գործունեության փորձը, գործընթացները գնահատելու, ընկալելու և կանխատեսելու ունակությունը, ինտեգրված և համախմբված լինելը:
- *Արժեհամակարգը և քաղաքական մշակույթը*, որը ենթադրում է ազգային և պետական շահերին նվիրվածություն, ազնվություն, պատասխանատվության բարձր զգացում՝ որպես լիդերության դրսևորում, գոհողությունների դիմելու կամք (խոսքը գիտակցված ընտրության մասին է), ընդհանուրի շահը մասնավորից վերդասելու ունակություն, քաղաքական որոշումներ կայացնելու վճռականություն, հանդուրժողականություն, օրինապաշտություն, մարդու իրավունքների հանդեպ հարգանք, հանդուրժողականություն, քաղաքական երկխոսություն գնալու կարողություն:
- *Հանրային ակտիվությունը*, որի մաս են կազմում առաջնորդությունը՝ ժողովրդի քվեն ունենալու, նպատակի շուրջ համախմբելու միջոցով, ազդեցությունը՝ որոշումներ ընդունելու գործընթացում,

արդյունավետությունը՝ ռեսուրսները ճիշտ
տնօրինելու միջոցով, ընդգրկվածությունն
ունենրկայանալիլիները:

Հաշվի առնելով փորձագետների կողմից նշված
հատկանիշներով քաղաքական էլիտա ունենալու
անհրաժեշտությունը, կադրային
քաղաքականության հետազոտության շնորհիվ
վերհանել ենք հավաքագրման գործընթացի
առաջնային խնդիրները, որոնց արդիականացումն
անհրաժեշտություն է.

- **Քաղաքական էլիտայի «տեսակի»**
բացակայությունը, որի բաղկացուցիչներն են
«օրինակելի վարքը», մասնագիտական
բանիմացություն և պատրաստվածություն որակը՝
հաշվի առնելով, որ հասարակության շատ շերտեր
կողմնորոշվում են քաղաքական էլիտայի
պահվածքով: Առկա փորձագիտական կարծիքների
հիման վրա քաղաքական էլիտայի
կառուցվածքում հանդիպող մարդկանց կարելի է
տիպավորել .
 - **Գաղափարապես միավորող մարդիկ**, որոնք ի
վիճակի են առանց հաճոյանալու համախմբել:
 - **Նպատակասլաց և հանձնառու մարդիկ**, որոնք ի
վիճակի են մասնագիտական և տեխնիկական
աջակցությունն ցույց տալու՝ համատեղ
աշխատելու համար:
 - **Պատահական մարդիկ**, որոնք քաղաքական
էլիտայում են հայտնվել իրավիճակի
թելադրանքով՝ մասնավոր շահերից ելնելով:
 - **Հովանավորչություն քաղաքական էլիտայում**
հայտնված մարդիկ, որոնք քաղաքական
էլիտայում են հայտնվել միջանձնային
կապերի, ռեսուրսների փոխանակման
արդյունքում:

- *Համակարգային մոտեցման բացակայությունը*, որում հանդիպած «բացառությունները» խաթարել են համակարգի բնական գործառնությունը, ձևավորել անվստահություն և անարդարություն մթնոլորտ: Հատկանիշների այս խմբի մեջ են նաև նվիրվածությունը քաղաքական իշխանությունը՝ որպես էլիտայի կազմում լինելու և մնալու կարևոր պայման, սերնդափոխության բացակայությունը, իշխանության անձնավորումը, որի հետևանքով, հավասարության, հավասար պայմանների հանդեպ հանրությունը չունի վստահություն:
- *Քաղաքական մշակույթի՝* որպես արժեքների, վարքի կանոնների, գաղափարների և միշտ բայլ հատկանիշների համալիրի բացակայությունը, որի պատճառով քաղաքական համակարգի բնականոն ընթացքը խախտված է: Քաղաքական մշակույթի կայացման համար անհրաժեշտ է զարգացնել քաղաքական երկխոսության, բանավեճի ինստիտուտը: Որակապես բարեփոխվելու համար պետք է քաղաքական ուժերը հասունանան, մատուցեն այլ քաղաքական մշակույթ, ծրագրային դրույթներ: Հասարակությունն, իր հերթին, պետք է այնքան հասուն լինի քաղաքականապես, որ կարողանա գնահատել և ընտրել: Քաղաքական մշակույթ չունեցող համակարգում որոշիչ դեր ունենան ձևական և ընտանեկան կապերը (վոլլգարներ պոտիզմի դրսևորման տարբեր ձևերով):
- *Քաղաքական էլիտայի հավաքագրման կադրային ֆիլտրերի անարդյունավետությունը:* Վերոնշյալ ֆիլտրերի ստեղծումը, ըստ մեզ, անհրաժեշտություն է, որը նախատեսված է հասարակության լայն խավերից կադրեր հավաքագրելու համար:

Որ ակալական հետազոտությունը փաստում է, որ ՀՀ-
ում քաղաքական էլիտայի հավաքագրման
գործընթացն ունի մի շարք
առանձնահատկություններ: Առաջինը, որ քաղաքական
էլիտան հավաքագրվել է մի մեխանիզմով, որը
գործնականում ունեցել է ինստիտուցիոնալ հենք,
սակայն դրա քաղաքական այլընտրանքը եղել են
անձնական կապերը և իշխանության հանդեպ
նվիրվածությունը: Քաղաքական ինստիտուտների
թերագրագովածությունը կառավարման ցանկացած
ձևի դեպքում կարող է պարարտ հող ստեղծել
կլանների ձևավորման համար: Երկրորդ՝ քաղաքական
էլիտան հավաքագրվել է հիմնականում
կուսակցական և բյուրոկրատական ինստիտուտ-
ներով և դրանց կադրային տարբեր մեխանիզմներով՝
դիտելով դրանցում անդամակցությունը կամ
ծառայությունը որպես պարտադիր պայման: Ամուր
կադրային հենք ստեղծելու նպատակով այս երկու
ինստիտուտներում կատարվել են բարեփոխումներ
(այդ թվում օրենսդրական), սակայն «արժանիքային
համակարգ» չի հաստատվել: Երրորդ՝ բացակայում է
քաղաքական էլիտայում կադրային ներուժ
ապահովող ընտրության գործիքակազմը,
մրցակցություն ու մրցունակությունը: Այդպիսի
գործիքներ չեն համարվում նաև
նախարարություններին և կուսակցություններին
կից ձևավորված ակադեմիաներն ու դպրոցները:
Թվարկված իրողություններով հանդերձ,
քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացում
կիրարկված բյուրոկրատական և կուսակցական
մեխանիզմները լիարժեք չեն ապահովել քաղաքական
էլիտայի հորիզոնական և ուղղահայաց
շարժումները: Դրանցից ոչ մեկը չի ապահովել
մերիտոկրատիայի լիարժեք ձևավորումը, որը կլինի
օրինակելի, ներկայանալի և կունենա «լավագույն

օրինակներ»:

Ամփոփելով վերոնշյալը, կարծում ենք, որ ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի կայացման ու արդյունավետությանը քարձրացնելու համար անհրաժեշտ է.

- Ձգտել ինստիտուցիոնալ կայացման, հատկապես հասարակական հատվածում, որը հնարավորություն կտա քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացն իրականացնել քաղաքական համակարգի (այսինքն՝ գործընթացին համակարգային բնույթ հաղորդել) ողջ սպեկտրով՝ ընդլայնելով կադրերի հավաքագրման ավազանը:
- Կրթական համակարգը դարձնել քաղաքական էլիտայի հավաքագրման կարևորագույն կամուրջներից մեկը՝ «առաջարկի և պահանջարկի» սկզբունքով ձևավորված միջանկյալ օղակ, որով հնարավոր կլինի հրաժարվել կադրային քաղաքականության կորպորատիվի սատական մշակույթից, «թռիչքային կարիերայի» փորձից:
- Քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացում կիրարկել կադրերի ընտրության գործիքակազմ, որպիսին, բացի \$որմալ չափանիշներից, գաղափարներից ու ծրագրերից, մրցույթներից, կարող են լինել գործունենության արդյունքները, արդիականացնելու կարողությունը:
- Ներդնել ՀՀ-ում պետական կադրային քաղաքականության ինտեգրված համակարգ՝ պետական կառավարման գործառնությունները, պետական ու քաղաքական պաշտոններն արդյունավետ քաշխելու և սերնդափոխություն իրականացնելու նպատակով: Այդ համակարգը կհակակշռի հասարակության մյուս էլիտաներին՝ կանխելով դրանց սերտաճումը:

Նման համակարգ ունենալը նշանակում է ապահովել իշխանության ստորակարգային բուրգի փոխհամաձայնեցված և միասնական գործունեությունը, ձևավորել քաղաքական էլիտայի կմախքը:

**3.2.ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻՅԱՎԱՔԱԳՐՄԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԻ
ԱՂԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԶՅՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԱ**

ՀՀ ժողովրդավարացման գործընթացն արագացնելու նպատակով քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի համակողմանի ուսումնասիրությունը բխում է ժողովրդավարության առանցքային կողմերից, որոնց շուրջ գիտական բանավեճի ծավալումը կարող է երևույթների ընկալման նոր հորիզոններ բացել: Այդ կողմերից մեկն ուղղակիորեն առնչվում է պետական կառավարման արդյունավետության վրա ազդող գործոնների վերլուծության անհրաժեշտությամբ: Գործոններից *առաջինը* վերաբերում է քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի **և՛** որպես ներքին գործոնի (այսինքն հավաքագրման մեխանիզմի կարևորությունը հատկանշելը՝ որպես քաղաքական էլիտայի որակն ապահովելու գործոն), իսկ *երկրորդը*՝ քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի և ժողովրդավարության սկզբունքների համապատասխանությունը, ելնելով այն իրողությունից, որ քաղաքական էլիտան ղեկավարում է պետական կառավարման համակարգը:

Քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի հետազոտությունը ցույց տվեց, որ քաղաքական էլիտայի և պետական կառավարման արդյունավետության միջև կապը միջնորդավորված

Է ²³⁷: Սան շան ակոում Է, որ քաղաքական Էլիտայի հավաքագրման գործընթացը չի սահմանափակվում միայն «լավերի» ընտրություններ, քանի որ այդ դեպքում հասկանալի է գործընթացի գլխավոր նպատակը, որը պետք է լինի պետական կառավարման արդյունավետությունն ապահովելը: Ըստ այդմ, հավաքագրման մեխանիզմը պետական կառավարման արդյունավետության վրա ազդող բազում գործոններից մեկն է: Այլ գործոններ կարող են լինել երկրի ռեսուրսային ապահովվածությունը, հակամարտությունները, գլոբալ ֆինանսատնտեսական գործընթացները և այլն: Ընդհանուր առմամբ, քաղաքական Էլիտայի արդյունավետության վերաբերյալ ազգային սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքներից երևում է, որ հավաքագրման մեխանիզմը արդյունավետ չի եղել: Այսպես, դրանցում մասնավորապես նշվել է երկրում կյանքի որակի նվազման, սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացման մասին ²³⁸: 2016թ. դրությամբ, ըստ Հայաստանի վիճակագրական տեղեկագրքի տվյալների, ցածր է գնահատվել ժողովրդի կենսամակարդակը ²³⁹:

Քաղաքական Էլիտայի հավաքագրման գործընթացի ուսումնասիրությունը, այդ թվում կուսակցական և բյուրոկրատական մեխանիզմների փորձագիտական հետազոտությունը ցույց են տալիս, որ դրանց շրջանակներում իրականացված բարեփո-

²³⁷ Տե՛ս **Алтунян К.** Проблема рекрутирования и эффективности политической элиты, Междисциплинарный научно-практический журнал «СОТИС», Изд. «Наука», 5(91) август-сентябрь, Москва 2018, стр. 73-78:

²³⁸ Տե՛ս ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. Տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները և զարգացման ռազմավարական առաջարկները, ապրիլ 2013, <http://breavis.com/2013/04/17/am-government-success-index-april-2013/> (վերջին մուտքը՝ 10.08.2018); **Մանուկյան Ս.** ՀՀ կյանքի որակի հետազոտություն 2016, Սոցիոլոգիական հետազոտություն QoLI-7/16, Վերջնական գեկոլյոց FR-22 arm/17, «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվություններին ստիտուտ, 05.05.2017, էջ 83:

²³⁹ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տեղեկագրք. Կենսամակարդակ, 2008-ից մինչև 2016թվականը, www.armstate.am:

խումնէրը նպատակ են ունեցել որքան հնարավոր է
ժողովրդավարացնել հավաքագրման
ինստիտուտները: Մյուս կողմից, քաղաքական
գործընթացների վերլուծությունը, հատկապես 2008-
ից հետո, ցույց է տալիս, որ ընտրությունները
որպես ժողովրդավարական մեխանիզմ որևէ
ազդեցություն չեն ունեցել քաղաքական էլիտայի
հավաքագրման գործընթացի ժողովրդավարացման
վրա: Ավելին, ընտրություններով քաղաքական
էլիտայի փոփոխությունները չի ունեցել: Ինչպես
տեսանք, կուսակցությունների և հանրային
ծառայության ինստիտուցիոնալ
փոփոխությունների շնորհիվ հավաքագրման
գործընթացը որոշակիորեն
ինստիտուցիոնալացվել է, սակայն ժողովր-
դավարական սկզբունքներին
համապատասխանեցնելու տեսանկյունից արդյունա-
վետությունը մնացել է ցածր: Ժողովրդավարության
ցածր մակարդակ ունեցող երկրում, այս
պարագայում կարևոր է, թե ինչ **հիմքերով** է
ձևավորվել հավաքագրման մեխանիզմը, որովհետև
դրանով է նաև չափվում պետական կառավարման
արդյունավետության վրա ազդեցությունը:
Ելնելով դրանից, քաղաքական էլիտայի հավաքա-
գրման մեխանիզմի և պետական կառավարման
արդյունավետության փոխազդեցության
շրջանակներում փորձագիտական հետա-
զոտությունը վերհանել է քաղաքականության
կառավարում դիխոտոմիայի խնդիրը: Քաղաքական
էլիտայի հավաքագրումը, հատկապես 2008-ից ի վեր, ըստ
հետազոտության, իրականացվել է փոխհամա-
ձայնեցված գործելու սկզբունքով: Այդ առիթով
Ս.Գրիգորյանը նույնիսկ նշել է, որ քաղաքական
էլիտայի ձևավորումը շահավետ կապերի ստեղծման

ու հաստատման գործընթաց է եղել ²⁴⁰: Փոխհամաձայնեցված գործելու սկզբունքը խոչընդոտել է ընտրություններով քաղաքական էլիտայի կազմը որոշելու հնարավորությունը: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի (ԸՕ) (2016թ. դրույթում) և ընտրությունների արդյունքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ փոխհամաձայնեցված գործելու տեսանկյունից քաղաքական էլիտայի կողմից կիրառվել են բազմաթիվ տեխնոլոգիաներ: Եթե քննարկենք դրանք, ապա կտեսնենք, որ 2016թ. դրույթում, օրենսդրությունը սահմանել է ընտրացուցակների երկու ձև՝ համամասնական և մեծամասնական, որը գործել է 1999 թվականից: Այդ ցուցակների միջև համամասնությունը մինչև 2007 թվականի ԱԺ չորրորդ գումարման ընտրությունները կազմել է համապատասխանաբար 75/56: Չորրորդ գումարման խորհրդարանը հավաքագրվել է համամասնական և մեծամասնական ընտրացուցակների այլ համամասնությունում (90/41 հարաբերակցությամբ), ինչը, պայմանավորված էր նաև միջազգային հանրության 2003 թվականի խորհրդարանական ընտրությունների ժողովրդավար չլիսելու կոչտ և բացասական գնահատականներով և, անշուշտ, 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով, որով նպատակ էր դրվել բարձրացնել խորհրդարանի դերը պետական կառավարման համակարգում ²⁴¹: Համադրելով ՀՀ-ում համամասնական և մեծամասնական ընտրացուցակների կազմման պրակտիկաները և ընտրահամակարգի առավելություններն ու թերությունները, վերհանել ենք, որ քաղաքական

²⁴⁰ Տե՛ս **Գրիգորյան Ս.** Քաղաքական ինստիտուտների փոխակերպումն ու զարգացումը ՀՀ-ում, Երևան, «ԵԳԵԱ», 2008, էջ 83:
²⁴¹ Տե՛ս Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն, մայիս 26, 2003, 15:49, <http://hetq.am/arm/news/6926/yntrutyunneri-mijazgayinditordakan-araqelutyun.html>:

Էլիտայի հավաքագրման մեխանիզմի հիմքում ընկած սկզբունքը միտված է եղել հավաքագրման փակ համակարգի ձևավորմանը: Քաղաքական կուսակցությունները իրավունք են ունեցել, և որպես կանոն այդպես էլ արել են, առաջադրել պատգամավորի նույն թեկնածուներին և՛ համամասնական, և՛ մեծամասնական ընտրացուցակներով, որի հիմքում ընկած է հետևյալ տրամաբանությունը: Հանրային հեղինակություն և ազդեցություն ունեցող անձանց հատկապես առաջադրել են երկու գուցակներով էլ, որպեսզի երկուսով էլ անցնելու դեպքում, վերջինս հնարավորություն ունենար հրաժարվել համամասնական գուցակի իր մանդատից՝ զիջելով այն կուսակցական գուցակի հաջորդ համարին, ով պակաս հեղինակություն ունենալու պատճառով կարող էր չհաղթահարել անցողիկ շեմը: Ավելին, ՀՀ խորհրդարանական ընտրություններին պրակտիկայում շատ են ինքնաբացարկ հայտարարած թեկնածուներին օրինակները, որի արդյունքում թափուր տեղը զբաղեցնում է գուցակի հաջորդող կամ կամայական անդամը²⁴²: Այս օրինակները փաստում են, որ քաղաքական էլիտայի կազմը ընտրություններով որոշելու մեխանիզմը կարողացել են շրջանցել կամ փոփոխել: Շարունակելով նշենք, որ փորձագիտական հետազոտությունը վերհանել է, որ փոխհամաձայնեցման սկզբունքով քաղաքական էլիտայի հավաքագրումը խախատել է քաղաքականության և կառավարման ոլորտների ինքնուրույնությունը, և այդ կապակցությամբ նշվել է հետևյալ կարծիքը. «...փոխհամաձայնության սկզբունքով կադրային նշանակումները կաշկանդել են գործադիր իշխանության

²⁴² Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2012-2013 թթ. ընտրություններին Էլեկտրոնային մոնիթորինգ, Թրանսփերենսի ինթերնետ շեմել հակակոռուպցիոն կենտրոն, Եր., 2014, էջ 34, www.transparency.am

գործունեությունը»²⁴³: Գործադիր իշխանության գործունեությունը կաշկանդող պատճառների թվում նշվել են նաև մասնագիտական ազատ գործունեության սահմանափակումը, ակտիվությունը չխրախուսելը, անառողջ մրցակցությունը և բանիմաց կադրերի սակավաթվության արդյունքում որոշումների ընդունման վրա «կողքից գործող ուժերի» ազդեցությունը: Վերլուծելով այդ երևույթները հնարավոր է չէ չտեսնել, որ քաղաքական և բարձր պաշտոններում նշանակումները դարձնելով փոխհամաձայնությունների առարկա, լրջորեն տուժել է վերլուծական հենքը, որի պատճառով քաղաքական էլիտայի տարբեր և մասնավորապես՝ խորհրդարանական շրջանակներում եղել են աղմկահարույց հայտարարություններ: Ասվածը փաստում է 2013թ. Աժ պատգամավոր Ծ.Պետրոսյանի հայտարարությունը, որ 2012թ. Հանրուժում թուրքի կողմից ինը գիևվոր է կրակվել, ինչը ՀՀ Պաշտպանության նախարարության մամուլի խոսնակը հերքեց²⁴⁴: Դրանից առաջ էլ եղել են այլ հայտարարություններ, օրինակ՝ 2002թ. «Արմեն Տելի» ընկերության մտցնելուց առաջ ՀՀ նախագահի հայտարարությունը, որ ընկերության չի լինելու²⁴⁵: Մեկ այլ օրինակ է ՀՀ Աժ Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի այն ժամանակվա նախագահ, ՀՀԴ կուսակցության առաջնորդ Վահան Հովհաննիսյանի հեռուստաելույթը, որում նա նշել էր, որ Հայաստանը սահմանունի միայն իրանի հետ, մնացած երեք պետությունների հետ ունեցածը սահման չէ,

²⁴³ Փորձագետի հետ հարցազրույցից, ՀՀ առողջապահության նախարարություն, հոկտեմբեր, 2017թ.:

²⁴⁴ Տե՛ս ՊՆ-ն հերքում է Շուշանի Պետրոսյանի հայտարարությունը, մարտի 2, 2013թ. <http://topnews.mediamall.am/?id=16993>:

²⁴⁵ Տե՛ս Կառավարության բանուղործն ու Արշակ Սահոյանը Փետրվար 07, 2002 00:00, <https://www.aravot.am/2002/02/07/794757/>:

այլ ճակատ:²⁴⁶ Ընդհանուր առմամբ, ընդունելով հանդերձ քաղաքականության և կառավարման ոլորտներին փոխկապվածությունը, կուզենանք նշել, որ դրանցից յուրաքանչյուրը պետական կառավարման համակարգում ունի իր գործառույթը և ժողովրդավարական երկրում այդ գործառույթները պետք է տարանջատվեն: Յետագոտությունը ցույց է տվել, որ ՀՀ-ում փոխհամաձայնեցված գործելու սկզբունքով այդ գործառույթները տարանջատված չեն եղել, իսկ որոշ ումներին ընդունման, կադրային քաղաքականության իրականացման հարթություններում քաղաքականություն-կառավարում սահմանագիծը եղել է լիզոգված:

Քննարկելով մեխանիզմի հիմքում **ընդհանուր շահի ձևավորման խնդիրը**, փորձագիտական հետազոտությունը վերհանել է, որ փոխհամաձայնության հասնելու միջոցով ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացն ապահովել է իշխանության մարմիններին փոխհամաձայնեցված աշխատանքը: Փորձագիտական կարծիքն այդ առիթով նշում է. «...քաղաքական էլիտան հավաքագրվել է ընդհանուր շահի սկզբունքով, որը թույլ է տվել փոխհամաձայնեցված աշխատել»²⁴⁷: Այդ մասին փաստում է նաև քաղաքական կոալիցիաների ձևավորման և դրանց հիմքում ընկած քաղաքական գործընթացների ուսումնասիրությունը: Եվ այսպես, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, քաղաքական կոալիցիաների ձևավորման սկիզբը համարվում է 2003 թվականը, քանի որ նախորդող խորհրդարաններում չի եղել մեծամասնություն կազմող մեկ կուսակցություն (մեծամասնություն է ձևավորվել

²⁴⁶ Տե՛ս Պատերազմի կուսակցությունը պատռում է իր դեմքը Փետրվար 09, 2002 00:00, <https://www.aravot.am/2002/02/09/794790/>:

²⁴⁷ Փորձագետի հետ հարցազրույցից, Բարգավաճ Հայաստանի կուսակցություն, դեկտեմբեր, 2017թ.:

կոլսակցական դաշինքներով): 2003թ. մայիսի 25-ի խորհրդարանական ընտրություններին հետո, 334` 23,66 %, «Օրինաց երկիր» (ՕԵԿ)` 12,60% և 337` 11,45% ձայն ստացած կոլսակցությունների քաղաքական կոալիցիան գործնականում միավորել է ազգային-պահպանողական և լիբերալ գաղափարախոսություններն ընդգրկող կոլսակցություններին²⁴⁸: Քաղաքական դաշինքի մեջ միավորվելով քաղաքական կոլսակցություններն, ըստ էության, համաձայնություն են եկել պաշտոններին բաշխման շուրջ` ձևավորվելով քաղաքական էլիտայի բուն կառուցվածքը, այսինքն` սահմանելով քաղաքական և կառավարչական բարձր պաշտոններին հաստիքացանկն ու դրանց բաշխումը` պայմանավորվելով համադրել կառավարության և կոալիցիոն քաղաքական ուժերի մոտեցումներն ու կողմնորոշումները²⁴⁹: Թեև քաղաքական կոալիցիաների սկիզբը 2003թ. է համարվում, էլ ներկայումս փորձագիտական հետազոտությունները կարող են քննել, որ կոալիցիաների ձևաչափը որոշակիորեն փոխվել է 2007թ. Աժ Չորրորդ գումարման ընտրություններին հետո, երբ խորհրդարան անցած 334-ն քաղաքական կոալիցիա կազմեց առաջին անգամ խորհրդարան անցած ԲՀԿ-ի հետ, որն առաջին իսկ խորհրդարանական ընտրություններին մասնակցելուց հետո ստացել էր 26 պատգամավորական մանդատ²⁵⁰: 337-ին սկզբում առաջարկվեց համագործակցության հոլշագիր, և միայն 2008 թվականին նախագահական ընտրություններին հետո, երկրում ստեղծված քաղաքական ճգնաժամը լուծելու նպատակով նույն թվականի մարտի 21-ին 334-ն, ԲՀԿ-ն, 337-ն և ՕԵԿ-ը ստորագրեցին կոալիցիոն

²⁴⁸ Տե՛ս 25 մայիսի 2003թ. Աժ Համամասնական ընտրություններ, <http://www.elections.am/resultsp2503/>, (վերջին մուտքը` 10.08.2018):

²⁴⁹ Տե՛ս Քաղաքական կոալիցիայի հոլշագիրը, 11 Հունիս, 2003, 00:00, <https://armenpress.am/arm/news/33765.html>, (վերջին մուտքը` 10.08.2018):

²⁵⁰ Տե՛ս 12 մայիս, 2007 Աժ Համամասնական ընտրություններ, <http://www.elections.am/proportional/election-82/>, (վերջին մուտքը` 10.08.2018):

համաձայնագրի²⁵¹: Ընդհանուր շահի շուրջ քաղաքական մրցակիցներին միավորելու և փոխհամաձայնեցված աշխատելու շնորհիվ ՅՅԿ-ին հաջողվեց ինտեգրել քաղաքական էլիտան և կառավարել: Նշված մեխանիզմից ՅՅԿ-ն չհրաժարվեց նաև Աժհինգերորդ գումարման ընտրություններին հետո, թեև ի տարբերություն նախորդ ընտրությունների, 2012 թվականին ստացել էր բացարձակ մեծամասնություն (131 մանդատից 69-ը): Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերջինը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով. առաջինը՝ գալիք 2013 թվականի նախագահական ընտրությունների միասնական թեկնածուի նատարելությունը, որը վճռվել էր 2011 թվականի փետրվարի 17-ի ստորագրված նոր հուշագրում (բացի ՅՅԴ-ից)²⁵²: Երկրորդը՝ միջազգային հանրությանը ցույց տալու, որ ՅՅԿ-ն չի ձգտում գերակայություն և պատրաստակամ է գործել փոխհամաձայնեցվածության սկզբունքով, չնայած խորհրդրանական մեծամասնություն ունենալու հանգամանքին: ԲՅԿ-ն հրաժարվեց կոալիցիա կազմել այս անգամ, քանի որ նախագահական ընտրություններին առաջ կուսակցություն քաղաքական խորհուրդը որոշում էր կայացրել չառաջադրել նախագահի թեկնածու և չսատարել որևէ մեկին²⁵³: Ինչպես տեսնում ենք, քաղաքական կոալիցիաների պրակտիկան հաստատելու է գալիս այն, որ չորրորդ գումարման ընտրություններին վեր քաղաքական էլիտան չի փոխվել, որովհետև ՅՅԿ-ին մրցակից քաղաքական ուժերից շատերը միավորվել են ընդհանուր շահի և

²⁵¹ Տե՛ս Չորս քաղաքական ուժերի ստորագրեցին քաղաքական կոալիցիայի համաձայնագիր, մարտի 21, 2008, <https://www.azatutyun.am/a/1594013.html>:

²⁵² Տե՛ս ՅՅԿ-ն չազդիրը հասկացե՛ք՝ ինչպես ուղղում էք, Փետրվար 23, 2011, 00:00, <https://www.aravot.am/2011/02/23/338682/>:

²⁵³ Տե՛ս Մեզ չի թել այլ կուսակցություն հետ, 24.05.2012, 17:17, <https://www.lragir.am/2012/05/24/65638/>:

փոխհամաձայնեցված աշխատելու սկզբունքով: Քաղաքական գործընթացների վերլուծությունները փաստում է, որ քաղաքական ուժերը, որոնք չեն գնացել 334-ի հետին տեգրման, առանձին-առանձին չեն կարողացել ազդել որոշումների ընդունման վրա: Վերջինը հաստատել է նաև ՀԱԲրահամյանը՝ նշելով, որ 33 քաղաքական կուսակցությունները միայնակ գործել չեն կարողացել իրենց ձևավորման սկզբից ²⁵⁴: Ուսումնասիրելով վերջին տասնամյակում քաղաքական կուսակցությունների քաղաքական կոալիցիաների ու նախընտրական դաշինքների քաղաքական և գաղափարական պատճառները, կարող ենք նշել, որ քաղաքական կոալիցիաներ են կազմել գաղափարապես տարբեր քաղաքական ուժեր, ինչը բացասական է ազդել նաև պետական կառավարման արդյունավետության վրա: Քաղաքական կուսակցությունների միջև ծրագրային և գաղափարական տարբերություններ անցկացնելը բավականին դժվար է, քանի որ տարբերությունները գրեթե բացակայել են: Դրանց բացակայությունը պայմանավորել է գործող քաղաքական ծրագրին զարգացման այլընտրանքային ծրագրի առաջարկելու անկարողությունը: Մյուս կողմից, ինչպես երևում է փորձագիտական հետազոտության արդյունքներից, վերոնշյալ տարբերությունների բացակայությունն ապահովել է հատկապես արտաքին քաղաքականության և անվտանգության խնդիրների շուրջ միջկուսակցական բարձր ինտեգրում, որի հիմնավորման համար մեջբերենք հետևյալը. «...քաղաքական տարբերությունների միջև գաղափարական բանավեճը երբեք թեժ բևեռների կրել՝ մղվելով երկրորդական պլան, հատկապես

²⁵⁴ Տե՛ս **Աբրահամյան Հ.** Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, **Լրաբեր** հասարակական գիտություններ, 2006, No 3, էջ 16:

արտաքին և անվտանգության խնդիրների դեպքում»²⁵⁵:
Եվ այսպես, հիմք ընդունելով վերոնշյալ իրողու-
թյունները կարող ենք նշել ՀՀ-ում քաղաքական
էլիտայի (քաղաքական կողմից հակազմող քաղաքական
ուժերի) ներխուժային ինտեգրման առկայության
մասին, որը ներառել է միջկուսակցական, ինչպես
և ներկուսակցական մակարդակները: Թեև
միջազգային փորձը փաստում է, որ պետական կառա-
վարման արդյունավետության ապահովման համար
դրանք հիմնականում ինտեգրված են լինում, փորձա-
գիտական հետազոտություններից երևում է, որ ՀՀ-ում
միջկուսակցական ինտեգրման մակարդակը կրել է
հարաբերական բնույթ, իսկ ներկուսակցականը՝
չափազանց կարգավորված: Հարաբերականությանը
պայմանավորվել է կոնկրետ ժամանակում ընդհա-
նուր շահունենալու հանգամանքով: Նախընտրական
դաշինքների քաղաքագիտական ուսումնասիրու-
թյունը ցույց է տվել, որ վերջինը պատճառ է դարձել
գաղափարական նույն թևը ներկայացնող
կուսակցությունների պառակտման համար: Ասվածի
վառ օրինակ են «ճախակողմյան» քաղաքական կու-
սակցությունները, որոնք վերջին տասնամյակում
ընդհանրապես ակտիվ չեն եղել, և դա այն դեպքում,
երբ հասարակությունն ապրել է սոցիալ-տնտեսական
ոչ բարվոք պայմաններում, անարդյունավետ
կառավարման ներքո և փաստացի ունեցել ցածր
կենսամակարդակ: Վերջին անգամ «ճախակողմյան»
քաղաքական կուսակցությունները («Հայաստանի
Դեմոկրատական կուսակցություն», «Հայրենիք եւ
պատիվ» միություն, «Հայաստանի կոմունիստների
միություն» կուսակցություն, «Հայաստանի Սոցիալ-
Դեմոկրատական կուսակցություն», «Սոցիալ-
դեմոկրատ Հնչակյան կուսակցություն»,

²⁵⁵ Փորձագետի հետ հարցազրույցից, Լուսավոր Հայաստան
կուսակցություն, նոյեմբեր, 2017թ.:

«Սոցոլ ժեռի եւ մտավորականների» մի ություն) ակտիվ ություն են ցուցաբերել միայն 2000-ականների սկզբին, երբ միավորվեցին և 2003 թվականին նախագահական ընտրություններին ընդամաք սոցիալիստները առաջադրեցին իրենց թեկնածուին (Ի դեմս Գ.Մարգարյանի)²⁵⁶: Մի ության պառակտվելուց ի վեր, «ձախակողմյան» քաղաքական կուսակցությունների ակտիվ ություն գրեթե չի եղել: Նախընտրական դաշինքներից ամենազանգվածայինը վերջին տասնամյակում կարելի է համարել «Յայ ազգային կոնգրես»-ը (ՅԱԿ), որը ստեղծվել է 2012 թվականի խորհրդարանական ընտրություններից առաջ՝ միավորելով թվով տասնութ քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ, որոնց մեծ մասը խորհրդարանական ընտրություններից հետո լքեցին դաշինքը: Դաշինքում մնացած քաղաքական ուժերը որոշեցին պահպանել այն այնուհետև ամենայնիվ և փոխակերպել ՅԱԿ կուսակցության²⁵⁷: Եվ ասպես, ելնելով ուսումնասիրություն արդյունքներից կարող ենք նշել, որ նախընտրական դաշինքներն անարդյունավետ են եղել նաև ընտրական գործընթացներից առաջ ձևավորվելու, գաղափարական ու ծրագրային հենքով ինտեգրված չլինելու պատճառներով: Վերոնշյալից կարող ենք հետևություններ անել, որ նման հենքով ինտեգրման բացակայություն պատճառով քաղաքական էլիտան վերջին տասնամյակում չի փոխվել, իսկ պետական կառավարման արդյունավետության ցածր ցուցանիշները բավարար չեն եղել քաղաքական էլիտայի սերնդափոխության համար: Համարելով

²⁵⁶ Տե՛ս Դեմկուսի նախագահի թեկնածությունն առաջադրվելու է նախագահական ընտրություններում, նոյեմբեր 9, 2002, <https://www.azatutyun.am/a/1570304.html>:

²⁵⁷ Տե՛ս ՅԱԿ-ը վերածվում է «Յայ ազգային կոնգրես» կուսակցության /Լրացված/, 8 փետրվար, 2013, 14:38, <https://armenpress.am/arm/news/707689/>:

փորձագիտական հետազոտություն և
 ուսումնասիրության արդյունքները, կարող ենք
 նշել, որ 2008 թվականից ձևավորված հավաքագրման
 մեխանիզմի շնորհիվ ՀՀ-ում կառավարել է
 մոնոհիերարխիկ քաղաքական էլիտա, որը ընդհանուր
 շահի շուրջ կարողացել է փոխհամաձայնեցված
 աշխատել: Հավաքագրման այդ մեխանիզմը, ինչպես
 ցույց է տվել ուսումնասիրությունը, պետական
 կառավարման արդյունավետության տեսանկյունից
 եղել է անարդյունավետ, ինչի հիմնավորման համար
 քննարկենք պետական կառավարման
 արդյունավետությանն առնչվող խնդիրները 2008-ից ի
 վեր: Ելնելով տարբեր ուսումնասիրություններից,
 կարող ենք նշել, որ 2008-2015թթ ՀՀ պետական պարտքն
 ավելացել է ավելի քան չորս անգամ²⁵⁸:
 Համաշխարհային բանկի տվյալներով,
 աղքատությունը 2009 թվականից 2014 թվականը կազմել
 է 32%-ից ավելի²⁵⁹: «Թրանսփերենսի ինթերնեշնլ»
 կազմակերպության գնահատմամբ, կոռուպցիայի
 մակարդակը բավականին բարձր է ՀՀ-ում, ըստ որի 2008-
 2012թթ. այդ ցուցանիշը կազմել է միջինը 2.5 միավոր:
 2012թ. գնահատման սանդղակը փոխվել է, որի համաձայն
 մինչև 2018թ. ՀՀ կոռուպցիայի ցուցանիշը կազմել է
 միջինը 35 (100 բալից, ընդ որում, որքան ցածր միավորն
 այնքան բարձր է կոռուպցիան)²⁶⁰:

Բազմիցս փորձեր են արվել փոխել ու քաղաքական
 էլիտայի հավաքագրման վերջին տասնամյակում
 գործող մեխանիզմը (2018թ. դրությամբ), սակայն դրանք
 հաջողություն չեն պսակվել: Պետական կառավարման
 արդյունավետության տեսանկյունից գործող

²⁵⁸ Տե՛ս **Քյոնոլմյան Ա.** ՀՀ պետական պարտքի ազդեցությունը
 տնտեսության և պետական բյուջեի վրա, Բաց հասարակություն
 հիմնադրամ, 2016թ., էջ 9, http://www.osf.am/wp-content/uploads/2016/10/Debt_ARM_10102016.pdf:

²⁵⁹ Տե՛ս Poverty headcount ratio at national poverty lines, Armenia <https://data.worldbank.org/country/armenia>
 (վերջին մոտքը՝ 12.01.2018):

²⁶⁰ Տե՛ս Corruption perception index <https://www.transparency.org/cpi2018> (վերջին մոտքը՝
 12.01.2018):

մեխանիզմի անարդյունավետության պատճառներից մեկը քաղաքական էլիտայի և հասարակության միջև ինտեգրման այնպիսի մակարդակի բացակայությունն էր, որը թույլ կտար կառավարել նվազագույն դժգոհության ներքին տիրույթում: Ուսումնասիրելով քաղաքական էլիտայի հավաքագրման ժողովրդավարական մեխանիզմը կարող ենք նշել, որ ըստ դրա, քաղաքական էլիտան հասարակությանն ինտեգրվում է ծրագրով և գաղափարներով: Ինչպես ցույց է տվել փորձագիտական հետազոտությունը, վերջինը չի եղել ՅՅ-ում, որի կապակցությամբ մեջբերում ենք. «...հասարակության հետ ինտեգրումը վերջին տասնամյակում եղել է միայն պոպուլիստական կամ ժամանցային եղանակներով»²⁶¹: Փորձագետների մի մասը ցածր ինտեգրումը հասարակությանը պայմանավորել են ինստիտուտների անգործությունը՝ նշելով, որ ձևավորման փուլից դրանք չեն թևակոխել կայացման փուլը, որի առիթով հատկանշական է հետևյալ կարծիքը. «...ժողովրդավարական ինստիտուտներին չի հաջողվել ստեղծել այն հղկված դաշտը, որը կապ կստեղծեր քաղաքական էլիտայի և հասարակության միջև ժողովրդավարական երկրների օրինակով, իսկ դրանում էլիտա-հասարակությունն ուղիղ կապը տարածված չէ: Պետական կառավարման արդյունավետության երաշխավորը ինստիտուտներն են, ոչ թե անձերը»²⁶²: Ընդունելով, որ հասարակության հետ էլիտայի ինտեգրումը պայմանական է, ինտեգրումը դիտարկվել է զարգացման շարժընթացի մեջ (այսինքն՝ ինչ ունեինք, ինչ ունենք, և ինչ ենք ունենալու): 2 արգացման 2 արժընթացի

²⁶¹ Փորձագետի հետ հարցազրույցից, Լուսավոր Յայաստան կուսակցություն, հոկտեմբեր, 2017թ.:

²⁶² Փորձագետի հետ հարցազրույցից, ՅՅ կառավարություն, դեկտեմբեր, 2017թ.:

ուսումնասիրությունն ից կարող են նշել, որ քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմը հանգեցրել է ոչ միայն քաղաքական էլիտայի և հասարակության օտարվածությանը, այլ նաև էլիտայի կողմից առաջարկվող տեսլականի մերժմանը, որի հաստատման համար կարելի է նշել օրինակ՝ հանրային կարծիքը²⁶³: 2008 թվականից ի վեր, քաղաքական գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հասարակության և էլիտայի օտարվածությունը տարեցտարի աճել է, ինչի պայմաններում քաղաքական էլիտայի հավաքագրումը իրականացվել է միջկուսակցական մակարդակում՝ գործակցության հիմքում դնելով ընդհանուր շահ գտնելու սկզբունքը: Վերոնշյալը հիմք է դրել նաև ուսումնասիրությունը ցույց է տվել, որ քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմը բացասական է ազդել նաև քաղաքական ու պետական կառավարման համակարգի կայունության վրա: Եվ այսպես, 2008-ից գրեթե բոլոր ցույցերն ու հասարակական շարժումներն ուղեկցվել են բռնություններով և զոհերով: 2008թ. հետընտրական իրադարձություններից հետո 2014թ. «Դեմ եմ», 2015թ. «Էլ եկ տրիկ Երևան» քաղաքացիական նախաձեռնությունները, 2017թ. ՊՊԾ գնդի գրավման դեպքը ցույց են տվել հասարակության վստահությունը շահելու գործում քաղաքական էլիտայի անարդյունավետությանը: Հատկանշական է, որ ըստ «Ֆրիդոմ Հոլդ» միջազգային կազմակերպության կողմից ներկայացվող տվյալների 2013 թվականից մինչև 2017 թվականը քաղաքական իրավունքների գնահատման սանդղակում ՀՀ-ն մեկ միավորով բարելավել է իր դիրքերը (եթե 2008-2012թթ այն կազմել է

²⁶³ Տե՛ս ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները և զարգացման ռազմավարական առաջարկները, ապրիլ 2013 <http://breavis.com/2013/04/17/am-government-success-index-april-2013/>:

6, ապա 2013-2017թթ` 5)²⁶⁴: Քաղաքացիական շարժումներին իրենց աջակցությունն են հայտնել որոշ ընդդիմադիր կուսակցություններ, սակայն գործընթացների զարգացման շարժընթացի մեջ դրանք որևէ ազդեցություն չեն ունեցել, ինչի պատճառը նաև հասարակության հետ ինտեգրման թույլ մակարդակն է եղել: Ելնելով այդ իրողություններից և հետազոտության արդյունքներից, այնուամենայնիվ, կարող ենք նշել, որ այս իրադարձությունների արդյունքում քաղաքական էլիտան առերեսվեց հասարակության հետ ինտեգրումը վերականգնելու, պետական կառավարման արդյունավետությունը բարձրացնելու խնդիրներին: Նշված խնդիրների լուծումը քաղաքական էլիտան որոշեց լուծել պետության կառավարման ձևը փոխելու միջոցով` քաղաքական օրակարգ բերելով խորհրդարանական կառավարման անցնելու որոշումը: 2017թ. խորհրդարանական ընտրություններից առաջ, գիտակցելով քաղաքական էլիտայի գործող մեխանիզմի կործանարար ազդեցությունը պետական կառավարման արդյունավետության վրա, կառավարող քաղաքական էլիտան կատարեց փոփոխություն: Պետական կառավարման գործառնությունների կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով որոշում կայացվեց հավաքագրման հիմքում դնել արհեստավարժությունը` նոր որակի քաղաքական էլիտա ունենալու նպատակով: Վերջինը կիրարկվեց 2016թ. սեպտեմբերից և պահպանվեց մինչև 2018թ. ապրիլ ամիսը: Իրականացված ծրագիրը, ինչպես սցոլոգիայի փորձագիտական հետազոտությունը, կառավարող քաղաքական էլիտայի կազմը թարմացնելու միջոցով նպատակ ունեւր բարձրացնել պետական կառավարման

²⁶⁴ Տե՛ս Freedom House, Armenia, Political Rights <https://freedomhouse.org/report/freedom-world/2013/armenia> (վերջին մուտքը` 12.01.2018):

արդյունավետությունը և դրանով պահպանել
 պետության ղեկավարման լծակները: Հիմնվելով
 քաղաքական գործընթացների զարգացման և փորձա-
 գիտական հետազոտության արդյունքների վրա,
 կարող ենք նշել, որ հավաքագրման մեխանիզմի
 հիմքի ժամանակավոր փոփոխությունը հաստատեց
 քաղաքական էլիտայում «արդյունավետ մարդկանց»
 բացակայությունն, ինչն ավելի կարևոր է,
 կադրային քաղաքականության կողմ համակարգի
 բացակայության փաստը ՀՀ-ում՝ կասկածի տակ
 դնելով այդ թվում հանրային ծառայության
 ինստիտուտի գործունակությունը: Վերջինի մասին
 է փաստում 2016թ. սեպտեմբերին նոր վարչապետի
 նշանակումից հետո կատարված կադրային
 փոփոխությունները ամբողջ պետական համա-
 կարգում: Ինչպես տեսնում ենք, սաևս մեկ անգամ
 հաստատելու է գալիս, որ քաղաքական էլիտայի և
 պետական կադրային քաղաքականության փոխադարձ
 կապվածությունը ազդել է նաև պետական կառավար-
 ման արդյունավետության վրա: Ելնելով ՀՀ 2014-2025թթ.
 «Զեռանկարային զարգացման ռազմավարական ծրագ-
 րի» ուսումնասիրությունից, կարող ենք նշել, որ
 պետական ծառայության համակարգի բարեփո-
 խումները կադրային կողմ համակարգի ձևավորման
 տեսանկյունից արդյունավետ չեն եղել:
 Առաջնայնությունն է տրվել տարբեր
 ուղղություններին, մասնավորապես 2014թ. հունիսի 1-
 ից ներդրվել են պետական պաշտոն զբաղեցնող
 անձանց սոցիալական ապահովագրության²⁶⁵,
 կենսաթոշակային համակարգերը²⁶⁶: Վերոնշյալ
 խնդիրների լուծման առաջնայնությունը

²⁶⁵ Տե՛ս «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական
 երաշխիքների մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2014թ.
 դեկտեմբերի 4-ին www.artis.am:

²⁶⁶ Տե՛ս «ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական
 ծրագիր», Հավելված ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի Ն 442-Ն
 որոշման, էջ 193-194:

կարևորելով հանդերձ, արված բարեփոխումներն ու պետական կառավարման համակարգի օպտիմալացման, աշխատանքի մեթոդաբանության փոփոխությունները բավարարչեն եղել լավ կառավարման և արդյունավետ պետական կադրային քաղաքականության իրականացման համար: Ուսումնասիրելով պետական կառավարման տարբեր ոլորտներում ծառայության առանձնահատկությունները, կարող ենք նշել, որ չնայած կառուցվածքային սահմանները հստակեցվելու, համակարգը բավականին մասնատվել է: Որոշ վերլուծական աղբյուրներում նշվել է նույնիսկ բազմաառաջնորդ էլիտայի ձևավորման մասին, որը պետության առջև ծառայած բարդ խնդիրների առկայության պարագայում կարող է արդյունավետ չլինել՝ պետական իշխանության մասնատվածության և ազատականության պատճառով²⁶⁷: Քաղաքական և պետական բարձր պաշտոններում նշանակման պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պետական ծառայության համակարգի դերի նվազումը այդ տեսանկյունից պայմանավորված չի եղել միայն կուսակցական պատկանելության սկզբունքով նշանակումների մեծացման հետ: Այդ առիթով նշենք, որ հանրային բարձր պաշտոններում կուսակցական սկզբունքով նշանակումների թիվը մշտապես աճել է Ս.Սարգսյանի պաշտոնավարման ընթացքում²⁶⁸: Այդուհանդերձ, բացի դրանից, եթե քննարկենք 2013 թվականին ընդունված «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի՝ բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձանց

²⁶⁷ Տե՛ս **Աղայան Ա.** Հայաստանի քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրները, «Նորավանք», Երևան, 2003, էջ 19:

²⁶⁸ Տե՛ս **Դանիելյան Հ.** Քաղաքական էլիտան հետխորհրդային Հայաստանում. Բնութագրիչները և ձևավորման ուղիները, «Էդիթ Պրինտ», Երևան, 2014, էջ 43:

պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների ադյուսակը, ապակտեսներնք, որ, օրինակ, 15.00-ից բարձր (նվազագույն դրույքաչափն է 8.00, իսկ առավելագույնը՝ 20.00) պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցներուն երկրորդ քաղաքական և հայեցողական պաշտոններում կարող են նաև չհավաքագրվել պետական ծառայության համակարգից²⁶⁹: Վերոնշյալից հետևում է, որ վերջին տասնամյակում քաղաքական և պետական բարձր պաշտոններում կադրերի հավաքագրումը նվազեցրել է պետական ծառայության համակարգի ինտեգրման մակարդակը, պետական ծառայության ստորակարգային բուրգի միասնական և փոխհամաձայնեցված գործունեությունը: Չափի առնելով պետական կառավարման ոլորտում անընդհատություն անհրաժեշտությունը, ինչպես նաև սերնդափոխություն պլանավորման նպատակով իրականացվող քաղաքականությունը պետության զարգացման ելակետային ուղենիշներին համապատասխանեցնելու կարևորությունը՝ խորհուրդ ենք տալիս ստեղծել ինտեգրված և արհեստավարժ հանրային (պետական) ծառայության համակարգ: Այդ համակարգի ձևավորման պահանջը բխում է հատկապես պետության գործառնություններն արդյունավետ կատարելու հրամայականից: Նշված համակարգի տրամաբանությունից հետևում է, որ առաջինը կատարողականի գնահատումը թույլ կտա քաղաքական և բարձր պաշտոններում դերերի բաշխում կատարել այն կադրերի միջև, որոնք ունեն արդյունավետության բարձր ցուցանիշներ: Երկրորդ՝ սերնդափոխություն շնորհիվ հնարավոր կլինի խուսափել «թռիչքած և կարիերայի» կառուցման անարդյունավետ փորձից: Անհրա-

²⁶⁹ Տե՛ս «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրություն մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2013 թ. դեկտեմբերի 12-ին, էջ 15, <http://www.arlis.am>:

Ժեշտու թյան դեպքում ընդունել լրացուցիչ օրեսնդրական կարգավորումներ, որոնցով կերաշխավորվի հանրային ծառայության համակարգով կադրային քաղաքականության անընդհատության և սերնդափոխության սկզբունքները:

Ամփոփելով ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի և պետական կառավարման արդյունավետության փոխազդեցության առանցքային կողմերի ուսումնասիրությունը՝ արել ենք հետևյալ եզրահանգումները.

- ՀՀ-ում ձևավորված քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմը անկախության ունիցիվեր գործել է ժողովրդավարական սկզբունքները խախտելով: Այդ մեխանիզմը ժողովրդավարացնելու համար անհրաժեշտ է քաղաքական էլիտայի հավաքագրումն իրականացնել երեք բաղկացուցիչների միջոցով. *առաջինը՝* ծրագրի կամ գաղափարախոսության (որպես պրոդուկտի) միջոցով, *երկրորդը՝* քաղաքական գործընթացներին նտեգրվելու միջոցով՝ կայուն և մշտական սկզբունքներով, *երրորդը՝* խմբի կառուցումը: Միայն այս ճանապարհով է հնարավոր քաղաքական թիմերի կոնվերսիան քաղաքական էլիտայի (ընդ որում կոնվերսիան կլինի հավաքագրման ցուցանիշը):
- ՀՀ քաղաքական էլիտայի և կառավարման արդյունավետության փոխազդեցությունը ցույց է տալիս, որ կառավարումը բոլոր ոլորտներում իրականացվել է ոչ թե ոլորտային գիտելիքներ և փորձ ունենալու սկզբունքով, այլ «արդյունավետ մենեջերի» տեսության շրջանակներում: Ուստի պետական կառավարման ոլորտում նման քաղաքական էլիտայի

արդյունավետությունը չափում են ոչ թե ծրագրով կամ գաղափարախոսությունամբ, այլ պայմանավորվելով հմտությամբ:

- ԶՅ-ում գործող քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի ուսումնասիրությունն ինքն էլ ենթադրակացության, որ քաղաքական էլիտան հավաքագրման հիմքում գերակայել է համագործակցության սկզբունքը (քաղաքական կոալիցիաների միջոցով): Զավաքագրման մեխանիզմը փոխելով համարանհրաժեշտ էլիարժեք ինտեգրում այն ուժերի միջև, որոնք ձգտում են այն փոխել: Քաղաքական էլիտան ԶՅ-ում, համոզվելով, որ ընտրությունների մեխանիզմով հնարավոր չէ ներագդել պետական կառավարման արդյունավետության վրա, երկար ժամանակ փորձել է քաղաքական օրակարգ բերել մեխանիզմի փոփոխման տարբեր եղանակներ (սահմանադրական փոփոխություններ, ընտրակարգի փոփոխություններ, դաշինքների ձևավորում), որոնք էլիարժեք հաջողություններ չեն ունեցել:
- Պետական կառավարման անարդյունավետությունը պայմանավորված է եղել քաղաքական էլիտայի անփոխարինելիության ախտանիշով: Դանշանակում է, որ հարկավոր է մշակել այնպիսի մեխանիզմ, որը կկանխի անփոխարինելիության սկզբունքով իշխանության ձևավորումը հետագայում:
- Պետական կադրային քաղաքականության կարգավորման ամենաբարձր մակարդակը քաղաքական է, որովհետև կադրային քաղաքականության իրականացման գերակա սկզբունքները, հիմնական ուղղությունները սահմանվել են քաղաքական մակարդակում:

- ՀՀ հանրային ծառայության համակարգի նուստումնասիրությունը թույլ է տալիս վերհանել հետևյալ առանձնահատկությունները .
 - Հանրային ծառայության ոլորտային օրենքների առկայությունը վկայում է քաղաքական էլիտայի հավաքագրման, դերերի ու գործառնությունների բաշխման անհամաչափության մասին, իսկ վերջիններիս բաշխումը մեծամասամբ կրում է սուբյեկտիվ բնույթ:
- Պետական կադրային քաղաքականությունը պաշտոնապես մշակել և իրականացրել են բյուրոկրատական և կուսակցական բարձրագույն մարմինները՝ հավաքագրման սեփական չափանիշներով, ձևավորելով կորպորատիվ մշակույթ և անարդյունավետ պետական կառավարման համակարգ, իսկ իշխանությունը պահպանելով նպատակը բացառել է ժողովրդավարական այլ մեխանիզմներ կիրարկելու անհրաժեշտությունը:

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքական Էլիտայի հավաքագրման մեխանիզմի և պետական կառավարման արդյունավետության վերլուծության արդյունքում կատարված են հետևյալ եզրակացությունները.

- Ամփոփելով «քաղաքական Էլիտայի» տեսահայեցակարգային մոտեցումներում տրված սահմանումները, առաջնային կարևորվել է հավաքագրումը, որը Էլիտայի որակն ու իշխանության բնույթը որոշող գործընթաց է: Ըստ այդմ, քաղաքական Էլիտա է կոչվում պետության արդյունավետ գործառնության համար պատասխանատու սուբյեկտը, որն ընդհանուր նպատակի հասնելու համար կրում է քաղաքական իշխանություն:
- Քաղաքական Էլիտայի հավաքագրման ճյուղային հասկացությունները, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, առաջացել են հավաքագրման գործընթացի մասնագիտացմանը զուգընթաց՝ քաղաքական դերակատարների հարաբերությունների և գործառնությունների փոփոխության ընթացքում: Այդ հասկացությունները թույլ տվեցին «հավաքագրման գործընթաց» հասկացությունը ընկալել նորմակարգակով:
- Քաղաքական Էլիտայի հավաքագրման գործընթացի մոդելավորումը ապահովում է հետազոտող օբյեկտի և պետական կառավարման միջև կապերի վերհանումը: Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մոդելի արդյունավետությունը գնահատվում է համակարգային և ինստիտուցիոնալ հատկանիշներով ու բնութագրիչներով: Չափի առնելով այս ամենը՝ կարող ենք նշել, որ հավաքագրման բաց մոդելը օբյեկտիվ շրջապատյալի միջոցով ապահովում է

Ելիտայում սերնդափոխություն անընդհատությունը, բացառումն առողջ մրցակցությունը, սոցիալական ու քաղաքական համակարգային ցնցումները:

- Չարկ է ընդգծել, որ զարգացած և առաջադեմ հասարակություններում քաղաքական էլիտայի հավաքագրման արդի մոդելներին առավելությունը ինստիտուցիոնալիզմն է, որը պետական կառավարման ամուր հիմքեր է ստեղծում: Ուսումնասիրության արդյունքում կարող ենք նշել, որ արդի մոդելով ՅՅ-ում քաղաքական էլիտայի հավաքագրում չի իրականացվել, քանի որ դրա համար չեն ստեղծվել անհրաժեշտ համակարգային և ինստիտուցիոնալ հիմքեր: Իրավիճակի պահպանման դեպքում ցանկացած մոդելի կիրառման արդյունավետությունը լինելու է կասկածի տակ, քանի որ ընտրության արդյունքը պայմանավորված կլինի ոչ այնքան կառավարման ձևով, որքան ինստիտուտներով:
- Քաղաքական էլիտայի հավաքագրումը ու ինստիտուցիոնալացումը սերտ փոխկապված են, որն առավել արդյունավետ է ընդգծվում ժողովրդավարական, կայուն հասարակություններում: Վերջինում այն հիմնվում է սահմանադրաիրավական կարգավորման վրա, որը սոցիալական և քաղաքական շարժընթացը փոխելու ժողովրդավարական ճանապարհ լինելով՝ որոշում ու ապահովում է պետական կառավարման արդյունավետությունը: Պետական կառավարման համակարգում քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու միջազգային փորձի տեսանկյունից կարևոր են ՅՅ-ում սոցիալական ու քաղաքական

ն երկայացուցչության սահմանադրաիրավական կարգավորումը, որը կարող է կայուն, նորմավորված համակարգի գործառնության հիմքերնամրապնդել:

- Քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացի ինստիտուցիոնալացումից բխում է քաղաքական գործունեության արհեստավարժության խնդիրը, որը ազդում է էլիտայի գործունեության էության ու բովանդակության, ինչպես նաև պետական կառավարման արդյունավետության վրա:
- Մեր ուսումնասիրությունը թույլ է տվել փաստելու, որ ՀՀ-ում կայուն և ժողովրդավարական հասարակություն, ինչպես նաև պետական կառավարման արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի ինստիտուցիոնալ գործառնությունը, թեև ոչ լիարժեք, ձեռքբերում է: Միայն ինստիտուցիոնալ պայմաններն են հնարավորություն տալիս ձևավորել մեխանիզմ, որը ճանաչում է քաղաքացիների և քաղաքականության դերակատարների իրավունքներն ու ազատությունները, պատրաստ է գեներացնել էլիտա, որն ի վիճակի է արդյունավետ կառավարել, իսկ եթե դա չի հաջողվում՝ էլիտան փոխել:
- Վերոնշյալով հանդերձ, անկախությունից հետո մեկ տասնամյակից ավելի ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմի ուսումնասիրությունից հանգել ենք, որ հավաքագրման մեխանիզմը չի բնութագրվել արհեստավարժությամբ, որի պատճառների թվում կարող ենք նշել կառուցվածքային թերությունները, քաղաքականության և կառավարման միջև

լ ղ ո գ վ ա ծ հ ար ա ք ե ր ու թ յ ու ն ն ե ր ը , ար ժ ա ն ի ք ա հ ե ն
 հ ա մ ա կ ար գ ի ք ա ց ա կ ա յ ու թ յ ու ն ը , ի ն ս տ ի տ ու տ ն ե ր ի
 ձ և ա վ ո Ր Մ ա ն «վ ե ր և ի ց ն ե ր ք և » ս կ զ ք ու ն ք ը ,
 ի շ խ ա ն ա կ ա ն ու ղ ղ ա հ ա յ ա ց ի կ ար ծ ր ա ց ու մ ը , ո Ր ո -
 շ ու մ ն ե ր ի մ ի ա կ ե ն տ Ր ո ն հ ա մ ա կ ար գ ը :
 Ա Ր դ յ ու ն ք ու մ ` հ ի մ ն վ ե լ ո վ մ ի ջ ա զ գ ա յ ի ն փ ո Ր ձ ի
 վ ր ա , կ ար ո ղ ե ն ք ե գ ր ա կ ա ց ն ե լ , ո Ր կ ու ս ա կ ց ա կ ա ն և
 ք յ ու Ր ո կ ր ա տ ա կ ա ն մ ե խ ա ն ի գ մ ն ե ր ը , ո Ր ո ն ք պ ե տ ք Ե
 ա պ ա հ ո վ ե ի ն Յ Յ - ու մ ար հ ե ս տ ա վ ար ժ ք ա ղ ա ք ա կ ա ն
 Է լ ի տ ա յ ի ձ և ա վ ո Ր ու մ ը , ար դ յ ու ն ա վ ե տ չ ե ն ե ղ ե լ ,
 ո Ր ի մ ա ս ի ն փ ա ս տ ե լ ե ն դ ր ա ն ց մ ի ջ և
 ա ն հ ա մ ա չ ա փ ու թ յ ու ն ը , ք ա լ ա ն ս ա վ ո Ր վ ա ծ
 ի ն ս տ ի տ ու ց ի ո ն ա լ հ ա մ ա կ ար գ ի
 ք ա ց ա կ ա յ ու թ յ ու ն ը :

- Ք ա ղ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա յ ի դ ե Ր ը պ ե տ ա կ ա ն
 կ առ ա վ ար մ ա ն ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ու ն ն
 ա պ ա հ ո վ ե լ ն Ե , և ի ն չ պ ե ս ց ու յ ց տ վ ե ց մ ե Ր
 ու ս ու մ ն ա ս ի Ր ու թ յ ու ն ը , դ ր ա հ ա մ ար ա ն հ Ր ա ժ ե շ տ
 Ե գ ե ն ե Ր ա ց ն ե լ ո Ր ա կ յ ա լ ք ա ղ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա : Ը ս տ
 ա յ դ մ , ք ա ղ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա յ ի ո Ր ա կ ը հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն
 մ ե խ ա ն ի գ մ ն ու պ ե տ ա կ ա ն կ առ ա վ ար մ ա ն
 ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ու ն ը կ ո Ր ե լ ա ց ն ո ղ ե Ր և ու յ թ
 Ե :
- Ք ա ղ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա յ ի դ ե Ր ը պ ե տ ա կ ա ն
 կ առ ա վ ար մ ա ն ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ա ն ա պ ա հ ո վ մ ա ն
 գ ո Ր ծ ու մ մ ի ա յ ն ա յ ն չ Ե , ո Ր ի կ ա տ ար ա ծ վ ե ն
 գ ո Ր ծ առ ու յ թ ն ե Ր ը , ա յ լ ն ա ն ա յ ն , ո Ր հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն
 մ ե խ ա ն ի գ մ ո վ հ ա վ ա ք ա գ Ր վ ի Է լ ի տ ա , ո Ր ն ի վ ի ճ ա կ ի Ե
 կ առ ա վ ար մ ա ն մ ի ջ ո ց ո վ հ ա ս ն ե լ ն ա խ ա պ ե ս
 ս ա հ մ ա ն վ ա ծ ն ա պ ա տ ա կ ն ե Ր ի ն : Յ ա շ վ ի առ ն ե լ ո վ , ո Ր
 ք ա ղ ա ք ա կ ա ն Է լ ի տ ա յ ի հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն և պ ե տ ա կ ա ն
 կ առ ա վ ար մ ա ն ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ա ն մ ի ջ և կ ա պ ն ,
 ա յ ն ու ա մ ե ն ա յ ն ի վ , մ ի ջ ն ո Ր դ ա վ ո Ր վ ա ծ Ե ` կ ար և ո Ր
 Ե ն շ ե լ , ո Ր Յ Յ - ու մ հ ա վ ա ք ա գ Ր մ ա ն մ ե խ ա ն ի գ մ ը ե ղ ե լ
 Ե ա ն ար դ յ ու ն ա վ ե տ , ի ն չ ի մ ա ս ի ն ե ն փ ա ս տ ու մ

պետական կառավարման ցածր ցուցանիշները և այն, որ դրա արդյունքում քաղաքական էլիտայի լիարժեք փոփոխությունն տեղի չի ունեցել :

- Յետագոտելով ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման գործընթացը 2008 թվականից ի վեր կարող ենք նշել, որ հավաքագրման մեխանիզմը եղել է կուսակցական անդամակցությունը : Յետագոտությունից պարզ երևում է, որ իշխանության գալուց՝ քաղաքական-կառավարչական համակարգում պաշտոններ զբաղեցնելուց հետո է քաղաքական թիմը իրեն նույնացրել էլիտայի հետ (ստատուսային էլիտա):
- Ելնելով կուսակցական և բյուրոկրատական մեխանիզմների փորձագիտական հետազոտությունից, կարող ենք նշել, որ 2008-ից ի վեր դրանք արդիականացվել են, ինչի մասին են փաստում նաև օրենսդրական կարգավորումները : Այդուհանդերձ, կուսակցական և հանրային ծառայության համակարգում կադրային քաղաքականության իրականացման չափանիշների վերլուծությունից հանգել ենք, որ քաղաքական էլիտայի համակարգային բնութագրիչներ են կորպորատիվ մշակույթի ձևավորումը, կադրային \$իլտրերի բացակայությունը, «տեսակի» խնդիրը և այլն :
